Գիրքը համացանցում է տեղադրվել Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնության, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կտեղադրվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

«Գրքամոլ»-ը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**

2016 © Grqamol. All Rights Reserved.

URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

Արտյոմ Գրիգորյան

# ԴԻՍՊԵՐՍԻԱ

ԵՐԵՎԱՆ
«ԱՆՏԱՐԵՍ»
2014

ՀՏԴ 891.981-31 Գրիգորյան
ԳՄԴ 84Հ-44
Գ 888

Գրիգորյան Արտյոմ
Գ 888 Դիսպերսիա: / Արտյոմ Գրիգորյան.-
Եր., Անտարես, 2014.- 152 էջ:

«Դիսպերսիա» վիպակը
2013թ. ստացել է Orange Գրքի մրցանակ
«Լավագույն վեպ» անվանակարգում

*Orange Գրքի մրցանակը, որը ստեղծվել է 2011թ., ընթերցողի և գրքի սիրահարների մրցանակ է: Այն նպատակ ունի բացահայտելու ժամանակակից հայ գրողներին, ասպարեզ բերելու սկսնակ գրողների և հանրության ավելի լայն շրջանակներին հասցնելու թե՛ նրանց, թե՛ արդեն հայտնի գրողների անտիպ գործերը: Մրցանակակիր ստեղծագործությունները հրատարակվում են:*

ISBN 978-9939-51-683-7

© Գրիգորյան Ա., 2014

# Գլուխ 1

«ազդանշան»

Ձայնագրություն համար առաջին.
Նոյեմբերի 14: Չորեքշաբթի, 2012 թվական: 22:14

Անիմաստություն: «հոգոց»

Ես գիտեմ, որ մարդ հոգեբանի է դիմում բուժվելու ակնկալիքով, ուղղակի հետաքրքիր է, արդյունքում բուժվո՞ւմ է, թե՞ վերջնականապես խելագարվում: Կարծում եմ՝ շուտով կիմանամ:

Այսօր առաջին անգամ որոշեցի դիմել հոգեբանի: Առավոտյան կարճատև հեռախոսազրույցից հետո բժիշկը հանդիպում նշանակեց ու խնդրեց, որ մի ժամ հետո ներկայանամ իր աշխատասենյակ: Ասացի, որ դասի եմ և դասերս մի ժամից չեմ ավարտի, ինքն էլ ասաց, որ խնդիր չկա, հանդիպումը կարող է տեղի ունենալ նաև դասերից հետո: Հասցեն SMS-ով փոխանցեց ու խնդրեց, որ չուշանամ: Հասցեն ինձ ծանոթ էր: Չնայած այդպես էլ չկարողացա վերհիշել այդ փողոցում գտնվող որևէ հիվանդանոց, կլինիկա, պոլիկլինիկա կամ այլ

բժշկական հաստատություն: Երբ տեղ հասա ու գտա համապատասխան վայրը, հասկացա, որ հիշողությունս ինձ չէր էլ դավաճանում: Այստեղ չկար և ոչ մի բժշկական հաստատություն:

Դա պարզապես մի սովորական բնակարան էր: Աշխատող ընդհանրապես չկար: Բնակարանում մարդ չկար, ու ենթադրում եմ, որ այդ վայրում ոչ ոք չէր էլ ապրում, որովհետև չկային ո՛չ հեռուստացույց, ո՛չ պահարաններ ու ո՛չ էլ սպասք՝ հաց ուտելու համար: Հարմարավետ բազմոց, կլոր սեղան ու մի քանի աթոռներ կային: Դուռը բացեց այդ տանն ապրող միակ մարդը: Հեշտ էր կռահելը, որ հենց նա է իմ հոգեբանը: Այդ մարդը ժամանակակից տեսք ուներ և ընդհանրապես նման չէր բժշկի: Հագին երկարաթև սվիտեր կար, սև գույնի կեդեր և սովորական ջինս: Ի զարմանս ինձ, սպիտակ խալաթով չէր, և ողջ գրույցի ընթացքում ես այն այդպես էլ չտեսա: Կլոր դեմք ուներ, ակնոցով, բարձրահասակ էր, թեպետ հասակով դժվար թե ինձ հասներ: Մեր քաղաքում իմ բոյի մարդիկ ընդհանրապես հազվադեպ են հանդիպում... մետր 88 եմ, նա ինձ մի դեցիմետրով հազիվ զիջեր: Ինչևէ...

Ախ, հա՜... թրաշը: Ասում եմ երեսի թրաշը, այն է՝ ձևավորված: Բժշկի թրաշը այդպիսին էր: Այծիկի մորուք էր պահել: Օրինակ, եթե ես այդպիսի թրաշ պահեի, նախ ամբողջ կուրսն էր վրաս ծիծաղելու, հետո՝ մաման էր ամեն օր ինձ խնդրելու, որ թրաշվեմ և վերջապես՝ ես էի սկսելու ատել ինքս ինձ: Տեսնես իր կոլեգաները հաճախ չե՞ն կատակում իր հետ թրաշի պատճառով: Չնայած, շատ հնարավոր է, որ գործից ուշանալու պատճառով է սափրվելը կիսատ թողել:

Կիսաճաղատ էր. երևի մազերը թափվում են: Իմ կարծիքով՝ հիսունն անց կլիներ: Հագուկապի տեսանկյունից մի քիչ Սթիվ Ջոբսին էր նման:

Առաջին հայացքից այդքան էլ դրական տպավորություն չթողեց, չնայած ոչ մի բացասական զգացողություն նույնպես չառաջացավ նրա անձի նկատմամբ: Հաշվի առնելով այն, որ ես, իրոք, մարդկանցից զզվում եմ, կարելի է ընդհանուր առմամբ տպավորությունը նորմալ համարել: Ինչևէ...

Ժպտերես, կատակասեր մարդ էր, մարդասեր ու մարդամոտ, բայց հնարավոր է, որ դերասանություն էր դա ընդամենը, չէ՞ որ ես իր համար պոտենցիալ աշխատավարձ եմ: Հուսով եմ՝ իմ առողջությունը, իմ հոգեվիճակը իրեն ավելի շատ կհետաքրքրի, քան այն փողը, որով պետք է վարձահատույց լինեմ: Անեկդոտներ էր պատմում, չնայած այդքան էլ հաջողված չէին: Ինքը պատմում էր, ինքն էլ զվարճանում: Եթե կատակները ինձ դուր չեն գալիս, ես, սովորաբար, ձևականորեն չեմ ծիծաղում կամ ժպտում: Այդպես էլ եղավ: Կոնկրետ այդ տեսանկյունից, իրոք, թքած ունեմ քաղաքավարության վրա: Ես ինքս նույնպես չեմ փայլում անեկդոտներ պատմելով կամ հումոր անելով, ու դա իմանալով՝ չեմ էլ պատմում անեկդոտներ, բայց հումոր, իհարկե, մեկ-մեկ փորձում եմ անել: Այսօր մի պահ նույնիսկ մտածեցի, որ հոգեբան ավելի շատ իրեն է անհրաժեշտ, քան ինձ:

Ու եթե չեմ սխալվում, տաս-տասնհինգ րոպե անց բժիշկը որոշեց անունս հարցնել. «Իսկ ինչ է անունդ, տղաս»: Ասացի՝ Համլետ: Աչքերը ճզմելով նայեց վրաս. «Իսկ դու քո Օֆելյային գտե՞լ ես»:

Հարցրեց ու սկսեց հռհռալ: Անկեղծ ասած՝ այդ պահին չհասկացա՝ դա հումո՞ր էր, ձեռառնելի՞ք, թե՞ պարզապես հարց: Չհասկանալով՝ լռեցի: Տուն մտնելուն պես բացեցի նոութբուքս, միացրեցի ինտերնետն ու մտա google: Փառք Աստծո, որ այն կա: Կողք կողքի գրեցի Համլետ-Օֆելիա, ընդ որում՝ Օֆելիա անունը սխալ գրեցի, բայց դե google-ը ուղղեց: Որոնման հազարավոր արդյունքներ բերեց, բայց ամենաառաջինը wikipedia-ի մի հոդվածն էր՝ նվիրված ոմն Օֆելյայի: Բացեցի ու առաջին մի քանի տողը կարդացի միայն: Պարզվում է, որ Շեքսպիրը մի պիես ունի «Համլետ» վերնագրով, որտեղ գլխավոր հերոսը սիրահարված էր ոմն Օֆելյայի: Միայն մի քանի ժամ անց կարողացա պարզել բժշկի խոսքերի խորիմաստությունը: Քիչ առաջ ասացի, որ ոչ մի բացասական զգացողություն նա չի թողել ինձ վրա, իմ կարծիքով՝ սխալվել եմ: Անկեղծ ասած՝ այս պահին սկսեցի ատել այդ մարդուն: Ինչևէ:

Կարդալ չեմ սիրում, մեկ անգամ եմ ամբողջությամբ գիրք կարդացել, դպրոցական տարիքում: Գիրքը դպրոցական պարտադիր ընթերցանության ծրագրի մեջ էր մտնում, և չկարդալու դեպքում սպառնում էին հեռացնել դպրոցից: Չորրորդ դասարանցի էի, եթե չեմ սխալվում: Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» անիմաստ, անհետաքրքիր մի պատմություն էր: Հիշում եմ, ինչ-որ մի տղայի մասին էր, ով, Աստված գիտի՝ որ տարածության մեջ հանդիպում է ինչ-որ աղվեսի... «կատվի մլավոց»:

– Ախ դու իմ հրա՜շք, իմ Քիթթին քաղցա՜ծ է: Սպասիր, մի քանի րոպեից կբերեմ քո կաթիկն ու

Whiskas-ը: Ինձ էլ մի բաժակ կանաչ թեյ կպատրաստեմ, իրար հետ կընթրենք:

Շատ եմ սիրում կատվիս:

– Ի՞նչ էի պատմում, մտքիցս թռավ... Ախ, հա՛ անունս հարցնելուց հետո բժիշկը հարցրեց, թե քանի տարեկան եմ և որտեղ եմ սովորում: Ասացի, որ 22 տարեկան եմ և սովորում եմ պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: Հարցրեց՝ արդյոք ծառայել եմ: Միգուցե իրեն թվաց, որ ես իրեն դիմել եմ «գժի թղթի» համար, որպեսզի բանակից ազատվեմ: Բայց ես ծառայել եմ երկու տարի և բնավ այդպիսի խնդիր չունեմ: Ասացի, որ ծառայել և արդեն մի տարուց ավել է, ինչ զորացրված եմ: Ծառայության թեման այսքանով ավարտվեց, այլևս ոչինչ չհարցրեց դրա մասին: Խնդրեց, որ պատմեմ մասնագիտությանս ընտրության մասին, և, առհասարակ, այն մասին, թե ինչ եմ ես սովորում: Ասացի, որ փոքրուց էլ չեմ սիրել լեզուներ, սեր չեմ ունեցել նաև որոշ գիտությունների նկատմամբ՝ քիմիա, կենսաբանություն: Բայց փոխարենը մաթեմատիկան ու ֆիզիկան էր ստացվում մոտս, հենց դրա համար էլ որոշեցի այդ գծով շարունակել: Մաթեմատիկան ընդամենը թեորեմներ են, որ զարգացնում են մտածելակերպը, տրամաբանությունը, վերլուծական միտքը, իսկ ֆիզիկան մի քիչ ավելին է, քան մաթեմատիկան: Դե, համենայնդեպս, ինձ համար այդպես է: Այն պետք է գալիս նաև կյանքում: Հենց այդ պատճառով էլ որոշեցի առավելությունը ֆիզիկային տալ, այլ ոչ թե մաթեմատիկային: Չնայած այդ երկու առարկաները միշտ էլ իրար հետ կապված են: Ասացի,

որ անցնում ենք օպտիկա, որ ամեն Աստծու օր լսում ենք անիմաստ ու արդեն հազարավոր անգամներ լսված տերմիններ: Այդ տերմինները վեցերորդ դասարանից սկսած լսում էինք: Սահմանումները նույնն են մնացել, իսկ պատկերացումները գնալով խորանում են: Վեցերորդ դասարանում, երբ սահմանումն ասում էին, ինձ թվում էր՝ ամբողջովին պատկերացնում եմ տվյալ ֆիզիկական մեծության գաղափարը: Իսկ հիմա հասկանում և որքան ավելի շատ եմ սովորում, այնքան ավելի շատ իմաստներ եմ գտնում նույն այդ բառերի մեջ, որոնք օգտագործվում էին տվյալ ֆիզիկական մեծությունը սահմանելու համար: Ճիշտն ասած, սիրածս թեման հենց օպտիկան է: Ոմանց համար միայն այս տերմինները լսելը արդեն իսկ վախենալու է՝ անդրադարձում, բեկում, կլանում, արձակում, ոսպնյակներ, ինտերֆերենց, դիֆրակցիա, դիսպերսիա: Դեպրեսիայի մեջ են ընկնում շատերը: «ծանր մեթալ երաժշտություն»: Դրա համար էլ հոգեբան է պետք: Չնայած ֆիզիկան բոլորովին էլ կապ չունի այն բանի հետ, որ դիմել եմ հոգեբանի: «Երաժշտությունը շարունակվում է»:– Ատում եմ մեր հարևաններին, ատում եմ ծանր ռոքը, անջատե՛ք այդ հիմարությունը: Միշտ զզվել եմ մեր հարևաններից, բոլորից՝ հերթով: Անգամ երբ դուրս եմ գալիս փողոց, աշխատում եմ երկար ճանապարհներով շրջանցել բակերը, որպեսզի պատահական բախումներ չունենամ հարևանների հետ: Չնայած մեկ-մեկ հանդիպում են, սառը բարևում կամ չտեսնելու եմ տալիս: «Երաժշտությունն անջատվեց»: Փա՜ռք Աստծու:

Դարձյալ շեղվեցի: Ախ հա՛, Վլադ Սամվելովի-չի հարցումները... Հետո հարցրեց, թե ինչ նախա-սիրություններ ունեմ, ինչով եմ զբաղվում ազատ ժամանակ: Ասացի, որ նկարել եմ շատ սիրում: Հարցրեց՝ ֆոտոխցիկո՞վ, թե՞ ձեռքով: Ասացի՝ եր-կուսով էլ սիրում եմ, բայց հիմնականում՝ ձեռքով: Հեռախոսիս մեջ պահած գործերիցս մեկը ցույց տվեցի: Իհարկե, այդ նկարը ձեռքով էի նկարել, բայց հեռախոսիս մեջ նույնպես պահել էի: Դե, այս-պիսի դեպքերում պետք է գալիս:

Նկարել էի ցուրտ ձմեռ: Այնպիսի գույներ էի ընտրել, որ ձմռան ամենացուրտ օրերից մեկն ընդ-գծվեր: Արևը հազիվ էր երևում ամպերի միջից: Այ-գի էր՝ ամբողջովին պատված ձյան հաստ շերտով: Տեղ-տեղ նաև ցեխաջրեր էի նկարել: Նկարի ձախ կողմում ցեխաջրերի մեջ հացի փշուրներ կային, դրանց կողքը՝ իրար գլխի հավաքված չորս թռչուն-ներ: Նկարի կենտրոնում տղա էր կանգնած, իսկ դիմացը՝ աղջիկ: Պարզ էր, որ սիրահար զույգեր են: Որպեսզի ցույց տայի իրենց կապվածությունը, նրանց հաստ թելերով կապել էի: Թելերը շատ էին: Հագուստը նույնիսկ չէր էլ երևում: Այդ թելերի վրա աշխատելիս մի ամբողջ գիշեր չկարողացա քնել: Աղջկա ձեռքը պայուսակի մեջ էր, կարծես ինչ-որ բան էր ուզում դուրս հանել: Իսկ տղան գրկել էր աղջկան, թեպետ թելերը արդեն ցույց էին տալիս իրենց հոգևոր ուժեղ կապը: Բայց նկարեցի այդ-պես, որպեսզի ցույց տամ, թե որքան է տղան սի-րում այդ աղջկան: Նկարը հարստացնելու համար որոշ երանգներ էի ավելացրել: Օրինակ, ձյան վրա երևում էր չհանգած ծխախոտ, ամպի ձևավորումը

նման էր տխուր հայացք ունեցող երեխայի, ծառերը կտրատված էին: Իսկ ծառերից մեկի կողքին էլ փոքր աղբյուր կար, մեջը ջուր ընդհանրապես չկար: Հա, ու նստարաններ էի նկարել, որպեսզի հասկացվեր, որ այն այգի է: Ընդ որում՝ նստարաններից մեկը ջարդված էր:

Վլադ Սամվելովիչը աչքերը հառեց նկարին, հետո՝ ինձ, հետո՝ նկարին, հետո՝ նորից ինձ և ասաց. «Да ты гений»: Չեմ սիրում, որ հաճոյախոսություններում շռայլություն են ցուցաբերում: Միգուցե տաղանդավոր եմ, բայց հանճար չեմ հաստատ: Մենք տաղանդավոր ենք համարում այն մարդկանց, ովքեր մի բան են անում, որը մենք չենք կարող, իսկ հանճար համարում ենք մարդկաց, ովքեր այնպիսի բան են արել, որ ոչ ոք չի կարող անել այլևս: Այնպես որ, լավագույն դեպքում ես տաղանդավոր եմ: «կատվի մլավոց»՝. Ինչևէ:

– Համբերի, փիսիկս, շուտով կավարտեմ:

Վերջում Վլադ Սամվելովիչը հանդիպման ստույգ օրերը նշանակեց՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ: Եվ մի տարօրինակ առաջադրանք հանձնարարեց: Ասաց, որ պարտավոր եմ ամեն անգամ մեր հանդիպման ավարտից հետո օրվա մնացած ժամերին, երբ ազատ ժամանակ կգտնեմ, ձայնագրիչով ձայնագրել ինձ, պատմել իմ մասին, այն մասին, թե ինչպես են անցել իմ նախորդ օրերը, կարճ ասած՝ կիսվել ինքս ինձ հետ, ինչպես կկիսվեի հարազատիս հետ: Չնայած իմաստ չեմ գտնում այս ձայնագրության մեջ: Ինչևէ:

Հետաքրքիր է, թե ինչ կրթություն ունի Վլադ Սամվելովիչը: Գոնե բժշկական ուսումնարանը

ավարտած լիներ, թե չէ այնպիսի տպավորություն էր ստեղծվել, կարծես պոլիտեխնիկն է ավարտել. ո՛չ սպիտակ խալաթ կար հագին, ո՛չ էլ հարցրեց, թե ինչ գանգատներ ունեմ: Նույնիսկ այսօր հանդիպում նշանակելու ժամանակ այնպես արագ որոշեց օրը և ժամը, կարծես նախօրոք պայմանավորված լինեինք: Մյուս բժիշկների պես չթանկացրեց իրեն՝ ասելով զբաղված է, և մի քանի օրից կհանդիպենք: Շաբաթվա կեսից սկսվեցին հանդիպումները: Երևի դա այդքան էլ էական չէ: «կատվի մլավոց»՝. Կարևորը արդյունքն է: Կարևորը, որ վերջում ես ինձ լավ զգամ: Կարևորը՝ սպասումներս արդարանան: Կարևորը, որ էլ երբեք չ.. «հեռախոսազանգ»: Մայրս կլինի:

«պատասխանում է հեռախոսազանգին»

- Ալո՛... հա, մա՛մ... բարև՛, մամ ջան... մա՛մ, մի վայրկյան սպասի՛ր, ես քեզ կզանգեմ... հա, հա, գնացել եմ էսօր, մա՛մ, կզանգեմ, հեռախոսի մոտ մնա:

Ճիշտ գուշակեցի, որ մաման էր: Դե ինձ դժվար էլ ուրիշ մեկը հիշեր:

Ինչևէ... հուսով եմ՝ այօրվա համար այսքանը բավական էր: Գնամ մամային զանգեմ, թեյս պատրաստեմ ու կատվիս կերակրեմ. խեղճի մռութին արդեն արցունքներ եմ տեսնում:

Մինչ ուրբաթ, Համ ջան: Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

## Գլուխ 2

«ազդանշան»

Ձայնագրություն համար երկրորդ: Նոյեմբերի 16: Ուրբաթ: 2012 թվական: 23:14:

«լռություն» «բաժակի մեջ է լցնում թեյը» արդեն 23:15 «ֆռթոց» ախ, ո՜նց եմ սիրում ես թեյ:

Ինչևէ:

Այսօր կայացավ իմ և Վլադ Սամվելովիչի երկրորդ հանդիպումը: Այն մոտավորապես մեկ ժամ տևեց: Խոսակցության ընթացքում դարձյալ չհարցրեց իրեն դիմելու իմ պատճառի մասին, նորից առանց սպիտակ խալաթի հայտնվեց իմ առջև, ու իմ կարծիքով այն երբևէ չի էլ հայտնվի: Հարցրեց՝ արդյոք երկուշաբթի իմ առաջին ձայնագրությունը կատարեցի: Ասացի՝ ձայնագրել եմ ու համեստորեն հասկացնել տվեցի, որ այս ձայնագրություններն իրեն տալու համար չեմ անում: Ինքն էլ ասաց, որ դա իրեն պետք չէ, և որ սրանք բացառապես ինձ համար են, և ասաց, որ եթե ուզում եմ

հասնել արդյունքի, չպետք է դադարեցնեմ ձայնագրությունները: Ամեն դեպքում այս ձայնագրությունների իմաստը ինձ համար մնում է անհասկանալի:

Այսօր վերջնականապես համոզվեցի, որ Վլադ Սամվելովիչը ծխում է՝ այն էլ շատ: Առաջին հանդիպման ընթացքում չծխեց, բայց ծխախոտի ծուխը անցել էր հագուստին, և անհնար էր չզգալը: Ես ատում եմ ծխի հոտը, ինչն էլ շատ լավ զգում եմ: Այսօր նյարդայնացած էր իրեն պահում: Զգում էի, որ ծխել է ուզում: Վերջապես, չկարողանալով զսպել ցանկությունը, գրպանից հանեց ծխախոտի տուփը, նայեց վրաս ու հարցրեց, թե արդյոք դեմ չեմ լինի, եթե ծխի: Չեմ կարող բացատրել, թե որքան եմ ատում ծխախոտի հոտը, փորձեցի ընդառաջ գնալ նրա խնդրանքին, բայց չկարողացա: Ասացի, որ ատում եմ ծխախոտի հոտը և աթոռից վեր կացա՝ առաջարկելով դուրս գալ՝ մինչև բժիշկը կավարտեր ծխելը: Սակայն նա բռնեց իմ ձեռքից՝ ասելով, թե խնդիր չկա, ինքը դուրս կգա: Ես դարձյալ նստեցի իմ աթոռին, իսկ Վլադ Սամվելովիչը մի քանի րոպեով դուրս եկավ: Նրա բացակայությունը տևեց մոտ երեք րոպե: Փորձեցի օգտվել իր բացակայությունից և սկսեցի ուսումնասիրել շուրջբոլորս: Սենյակը, որտեղ գտնվում էի, դատարկ էր: Մի բազմոց կար, վրան՝ բաճկոն, միանշանակ բժշկի բաճկոնն էր, քանի որ իմը չէր: Չեմ կարծում, որ շատ թանկարժեք լիներ: Պատերը նույնպես դատարկ էին: Սեղանը, որի առջև նստած էի, շատ սովորական էր. վրան ո՛չ սփռոց կար, ո՛չ

թղթեր: Դիմացի աթոռին էլ դրված էր Վլադ Սամվելովիչի ոչ բրենդային պայուսակը: Ամեն դեպքում այդ մարդու մասնագիտության հետ կապված մեծ կասկած կար: Արդյոք նա հոգեբա՞ն է: Իհարկե, չեմ կանգնի այդ մարդու առջև և ասեմ. «Հեյ, Վլադ Սամվելովիչ, դուք հոգեբա՞ն եք, ունե՞ք որևէ դիպլոմ, կամ նմանատիպ մեկ այլ փաստաթուղթ, որը կապացուցի դա...»: Չէ, ես չեմ կարողանա նայել նրա աչքերի մեջ ու ասել նման բան: Դա վիրավորական է:

Երբ ծխելուց հետո վերադարձավ, հենց նստեց, հարցրեց, թե որտեղ եմ աշխատում կամ, առհասարակ, աշխատո՞ւմ եմ, թե՞ ոչ: Ասացի, որ չեմ աշխատում ներկայումս: Դրան հաջորդեց հարցի տրամաբանական շարունակությունը: Ասացի, որ բանակից հետո փորձել եմ աշխատել, բայց այն երկար չի տևել, քանի որ հեռացնում են աշխատանքից հորինված կոնֆլիկտի պատճառով:

2010 թվականի դեկտեմբերն էր, բանակից գալուց մի քանի ամիս էր անցել: Կուրսում բոլորն ինձնից փոքր էին, բայց կային տղերք, ովքեր արդեն իսկ աշխատում էին: Կուրսից շատերն իրենք էին ուսման վարձի ծախսերը հոգում: Այդ իսկ պատճառով էլ աշխատում էին որտեղ պատահեր: Մի քանի հոգի չէին աշխատում, որովհետև ֆինանսապես ապահով էին: Եվ միայն երկու հոգի աշխատում էին համեմատաբար «սոլիդ» վայրերում: Դե, մեր օրերում «սոլիդ» համարվում է այն աշխատանքը, որի համար պետք են համապատասխան հմտություններ: Սոլիդ, բնականաբար, չեն կարող համարվել մատուցողի, վաճառողի, պահակի և նմանատիպ

այլ աշխատանքները: Բայց ես ինքս էլ լավ գիտակցում էի, որ եթե նույնիսկ աշխատանք գտնեմ, այն նույնպես չի դասվելու «սոլիդ»-ի կարգավիճակին: Ռեստորաններից մեկում, որտեղ առաջարկում էին արագ սնունդ, անհրաժեշտ էր գանձապահ: Որոշեցի դիմել: Մերժեցին: Նմանատիպ մեկ այլ հայտարարություն գտա, դարձյալ մերժվեցի: Պատճառը սեռն էր. եթե ռեզյումեների մեջ գտնում էին գեղեցիկ աղջկա, տղաների ռեզյումեներն արդեն դեն էին նետում: Անհույս փնտրտուքներից հետո վերջապես մի տեղ գտա, որտեղ ինձ ընդունեցին: Ես շատ տեղեր էի դիմել, ուր տարբեր աշխատանքներ էին առաջարկում: Դիմել էի մատուցողի, գանձապահի, նույնիսկ գիշերային պահակի աշխատանքի համար, բայց իմ ճակատագիրը եղավ սովորական սուպերմարկետում սովորական փաթեթավորողի աշխատանքը: Առաջին ամիսը ժամավարձով էի աշխատում, հետո սկսեցին վճարել ամսական: Մոտ երեք ամիս աշխատեցի՝ 2011 թ.-ի հունվարից մինչև մարտ ամսվա վերջը: Չնչին գումար էին տալիս, չնայած ինձ դա էլ էր բավարար, ես չեմ գնում ծխախոտ, ալկոհոլ ընդհանրապես չեմ օգտագործում: Աշխատածս գումարը ծախսվում էր տրանսպորտի վրա, ուտելիքի վրա, տնտեսական մի քանի իրերի վրա, իսկ երբ չէր բավարարում, մամայից էի խնդրում: Ինչևէ:

Մարտի վերջն էր, հերթական աշխատանքային օրերից մեկը: Չեմ հիշում՝ ինչ օր էր, միայն հիշում եմ, որ դասից էի գալիս և մոտ տասը րոպե շուտ էի եկել: Աշխատանքից մի քանի րոպե շուտ գալու սովորություն ունեի: Մինչ հանդերձասրահ մտնելը,

աշխատանքային համազգեստ հագնելը, նկատեցի, թե ինչպես է մի գանձապահ վրաս չռել իր չարացած աչքերը: Այդքան չարացած իրեն դեռ չէի տեսել: Թմբլիկ աղջիկ էր, ոչ այդքան հմայիչ: Բարևեցի՝ չպատասխանեց: Որոշեցի մոտենալ և հարցնել, թե ինչու եմ նման արհամարհանքի արժանանում: Հանկարծ նկատեցի մի տղայի, ով նորեկ էր և նույնպես փաթեթավորող էր: Մտածեցի, որ նախորդ փաթեթավորողին է փոխարինում կամ էլ ինձ են օգնական նշանակել: Որոշեցի հարցնել. «Բարև, եղբայրս, դո՞ւ էլ ես փաթեթավորող»: «Այո, այսօր առաջին աշխատանքային օրս է»,- իր բարակ ձայնով պատասխանեց: Մտածեցի, որ իր աշխատանքային ժամերը ավարտվել են, քանի որ իմ ժամերին այլ փաթեթավորող չկար սուպերմարկետում: «Երևի հոգնած կլինես, առաջին աշխատանքային օրվա վերջում ես էլ էի հոգնել»,- ասացի: Ինքն էլ՝ «Չէ հա, այ ախպեր, իմ աշխատանքային ժամը դեռ չի էլ սկսել, նոր եմ փոխվել ու եկել»: Զարմացած նայեցի վրան: Մտածեցի, որ ինձ օգնական են նշանակել: Բայց այդ սուպերմարկետը այդքան էլ մեծ չէր, և բնավ այստեղ երկրորդ փաթեթավորողի կարիքը չէր զգացվում: Այդ պահին մեջս կասկած մտավ: Մտա հանդերձարան, բայց համազգեստս չգտա: Խանութի պահակը՝ Սիմոն պապին, այդ պահին մտավ հանդերձարան ու հարցրեց. «Համլետ ջան, ինչ-որ բա՞ն ես մոռացել կամ թողել»: Անակնկալի եկա իր հարցից՝ «Չէ, Սիմոն պապի ջան, հագուստս եմ փնտրում, որ հագնեմ ու անցնեմ աշխատանքի»: Բայց ինքն է՛լ ավելի

անակնկալի եկավ իմ պատասխանից. «Շեֆի հետ կոնֆլիկտը հարթեցի՞ք»: Չհասկացա, թե ինչ կոֆլիկտի մասին է խոսքը: Սիմոն պապին պատմեց, թե ինչ է տեղի ունեցել: Պարզվեց, որ նախորդ օրը, երեկոյան հաճախորդներից մեկի հետ ընդհարում եմ ունեցել, արդյունքում հարվածել եմ նրան ու հայհոյել: Աստված իմ, ես առհասարակ չեմ օգտագործում գռեհիկ բառեր, առավել ևս՝ հայհոյանքներ: Դեռ փոքրուց չեմ սիրել կռիվներ: Սիմոն պապիի պատմած այդ պատմությունը անհնարին բան է: Որոշեցի աշխատանքից ինձ ազատելու իրական պատճառը շեֆիցս իմանալ: Բայց նա դեմքս տեսնելուն պես անվտանգության ծառայողներին խնդրեց հեռացնել ինձ: Չէ, չէ, սխալ ասացի, ոչ թե հեռացնել, այլ՝ դարձյա՛լ հեռացնել: Հետաքրքրությունն ինձ ուղղակի սպանում էր: Այդ ի՞նչ եմ արել, որ արժանանում եմ նման վերաբերմունքի: Որոշեցի սպասել, մինչ կավարտվի Սիմոն պապիի աշխատանքային ժամը, ու կհարցնեմ նրան: Դուրս գալուց նա իմ խնդրանքին ընդառաջ գնաց և պատմեց այնպիսի ֆանտաստիկ հեքիաթ, որը մոտ չորս շաբաթ ամեն գիշեր գլխումս պտտվում էր և վերածվել էր իրական մղձավանջի: Այդ մարդուն ես հարգում էի, բայց տպավորությունս այդ պահից սկսած փոխվեց:

Ինչևէ ... Փորձեմ ցիտել նրան. «Համլետ ջան, տղա՛ս, երեկ մի հաճախորդ հաց էր գնել, մոտ 30-35 տարեկան տղամարդ էր, դու էլ, որպեսզի հացը տեղավորես տոպրակի մեջ, սովորությանդ համաձայն ծալեցիր այն: Այդ մարդը դիտողություն արեց, թե ինչու ես հացը ծալում, դու էլ

այնպիսի պատասխան տվեցիր, որ ամոթ կլինի նույնիսկ կրկնելը, հարվածեցիր նրա ծնոտին, սկսեցիր ծեծել: Դու նրա նկատմամբ շատ առավելություններ ունեիր՝ նա ցածրահասակ էր, մարմինը կոփված չէր: Բարեբախտաբար, անվտանգության աշխատողները բաժանեցին ձեզ: Այդ պահին շեֆը վերևում՝ իր սենյակում էր, աղմուկը հասավ նրան, ցած իջավ և իսկույնևեթ քեզ հեռացրեց աշխատանքից, իսկ աշխատավարձդ էլ տվեց այն մարդուն, ում ծեծել էիր, որպեսզի այդ մարդը չբողոքի: Ես ինքս մինչև հիմա զարմացած եմ քո այդ արարքի վրա ու ցավում եմ քեզ համար: Խորհուրդ կտամ այլևս շեֆի աչքին չերևաս, վտանգավոր մարդ է, փողատեր է և կարող է մի լավ դաս տալ քեզ»:

Ա՛յ քեզ աբսուրդ: Այո, ես միշտ էլ նյարդայնանում էի նմանատիպ դիտողություններից, հատկապես, երբ արգելում էին հացը ծալել: Բնականաբար, երբ նրանք տուն մտնեն, հացը կտրելու են, բայց մինչև տուն հասնելը հացը չպետք է ծալվի, ու թքած, որ այն չի տեղավորվում տոպրակի մեջ: Նմանատիպ դեպքեր շատ էին լինում, բայց այդ օրը չէր եղել ու համ էլ, ես՝ մարդ ծեծե՞մ: Ֆանտաստիկ գրականություն: Ես անգամ ճանճ չեմ սատկացնում: Թե այդքան շատ էին ուզում ինձ գործից ազատել, պարզապես կարող էին ազատել: Սա վերջիվերջո ո՛չ ՄԱԿ-ն է, ո՛չ էլ Microsoft-ը, ես էլ անվտանգության նախարար չեմ, և ո՛չ էլ գլխավոր թեստավորող, ես պարզապես շարքային փաթեթավորող էի այդ շարքային սուպերմարկետում: Ում էր պետք այդ

դերասանությունը, այդպիսի շռուն: Ճղճիմ 35000 դրամի համար ընդամենը: Մեղք է այդ նորեկը, նույն բանն էլ հաստատ իր հետ արած կլինեն: Բարեբախտաբար, այդ խանութը հեռու էր մեր տնից, ու մինչ օրս էլ առիթ չի եղել ևս մեկ անգամ մտնել այնտեղ: Իսկ այդ ամսվա աշխատավարձս այդպես էլ չուզեցի: Հեքիաթներ հանուն 35000 դրամի: Թո՛ղ իրենց մնա: Աստված իրենց հետ: Կարևորը, որ իմ խիղճը մաքուր է:

Ո՜նց եմ ափսոսում, որ խանութում տեղադրված տեսախցիկի ձայնագրությունը չպահանջեցի: Դա կարող էր լինել իմ միակ ապացույցը, իզուր չպնդեցի: Բնույթով ձգտող չեմ, կուլ եմ գնում այսպես և չեմ պայքարում: Չեմ պայքարում գոնե հանուն այն բանի, որ ցույց տամ իմ անմեղությունը:

Մինչ այսօր ունեցած իմ առաջին ու վերջին աշխատանքն էր դա: Հուսով եմ՝ եկող տարի ուսումս կավարտեմ, երբ դիպլոմ կունենամ, կանցնեմ աշխատանքի ավելի «սոլիդ» ինչ-որ տեղում, կունենամ համապատասխան աշխատավարձ: Վերջիվերջո, կաշխատեմ իմ մասնագիտությամբ: «կատվի մլավոց» – հրա՜շք, Քիթթի, հրա՜շք:

Լռություն: «Ոտնաձայներ» «Տաք թեյը լցնում է բաժակի մեջ և ըմպում է»: Ա՜խ դե սիրում եմ, էլի, թեյ:

Իմիջիայլոց, վերադառնամ Վլադ Սամվելովիչին: Այսօր հանդիպման վերջին 20 րոպեներին բժիշկը պատմում էր իր մասին: Ես լուռ լսում էի: Այնպիսի տպավորություն էր, կարծես ես բժիշկն եմ, իսկ ինքը՝ հիվանդը: Պատում էր իր հիվանդների մասին: Սակայն ոչ մի խոսք չասաց իր

կրթության մասին: Դե ես էլ հարցեր չէի տալիս: Մի հիվանդ ուներ, ով տառապում էր շիզոֆրենիայով, անունը Արկադիկ էր, չէ՛, չէ՛, Արայիկ, չեմ հիշում, լավ, ինչևէ, կարևոր չէ: Հիսունչորս տարեկան էր, իրեն թվում էր, որ պետք է աշխարհի թագավորը դառնա, պետք է կառավարի ամբողջ Երկիր մոլորակը: Աղջիկը, ում սիրում էր նա, պետք է դառնար իր թագուհին: Այդ աղջիկը Արայիկի նախկին ընկերուհին էր, ով թողել էր նրան, երբ իմացել էր, որ հոգեկան շեղվածություն ունի: Իմիջիայլոց, Արայիկը սիրուհու մասին նույնպես մտածել էր: Այդ թափուր տեղը պետք է զբաղեցներ նույն ինքը՝ Քոնդոլիզա Ռայսը: Նա չափից շատ ազգայնամոլ էր, որոշել էր թագավորությանն անցնելու առաջին իսկ օրվանից վերացնել թուրքերին աշխարհի երեսից: Երկար պատմելուց հետո բժիշկն ասաց, որ մեկ անգամ նույնիսկ այնքան վատ է եղել, որ միացրած դռելով հարձակվել է հարևանի վրա: Հարևանը հրաշքով է ողջ մնացել, քանի որ օգնության է հասել մեկ այլ հարևան, ով պատահաբար այդ ժամին դուրս էր եկել աղբը դեն նետելու: Այդ դեպքից հետո նրան ուղարկում են հոգեբուժարան, սակայն որոշ ժամանակ անց նրա քույրը հոգեբուժարանից եղբորը բերում է տուն և իր հսկողության տակ առնում: Իսկ այդ մարգարեության աղբյուրը նրա հայրն էր, ում հետ նա հաճախ էր խոսում: Ընդ որում՝ հայրը մահացած էր, իսկ գժվելու պատճառը, ինչպես նշեցի, իր ընկերուհին էր, ով թողել էր նրան այն պահին, երբ նա ամուսնության առաջարկություն անելու

մտադրությամբ մատանին գրպանը գնում էր հանդիպման: Ինչևէ: Այսպիսի պատմություն:

Չգիտեմ ինչու Վլադ Սամվելովիչը պատմեց ինձ այս ամենը: Երևի ուզում էր հասկացնել, որ ինձնից առաջ էլի հիվանդներ է ունեցել:

Նա ինձ հետ շիզոֆրենիկ հիվանդներից էր խոսում, հավանաբար ինձ նորմալ էր համարում, որ ինձ պատմում էր նմանատիպ պատմություններ: Ուրեմն ես շիզոֆրենիկ չեմ, «քմծիծաղ» վատ չէ: Բայց նորմալ էլ չեմ, քանի որ դիմում եմ հոգեբանի: Լավ... համարենք, որ այդ հիվանդությունը շարքից ջնջվեց: Վլադ Սամվելովիչը ինձ հետ խոսում է հավասարը հավասարի պես: Տարօրինակ է, բայց դա ինձ վրա ազդում է: Ինչու նա իրեն չի պահում բժշկի պես, ինչու չի հարցնում, թե որն է իմ խնդիրը, գրողը տանի, ինչ գանգատներ ունեմ, վերջիվերջո: Ինչո՞ւ, գրողը տանի, ինչո՞ւ: «լռություն»

Իսկ ո՞րն է իմ խնդիրը: Ու ընդհանրապես, ինչո՞ւ եմ ես դիմել նրան: Ինչո՞ւ եմ ինքս ինձ համոզել, որ ինչ-որ հոգեկան խնդիր ունեմ: Չնայած ես ինձ չեմ համոզել, Վաչեն էր: Նա է համոզել ինձ: Ինչևէ:

Բայց, իմ կարծիքով, առողջ հոգեվիճակով մարդ չկա: Ամեն մեկն էլ տառապում է ինչ-որ հոգեբանական խնդրով: Պարզապես դրանք, ընդհանուր առմամբ, անձնական են, այլ ոչ թե սոցիալական, և չեն խանգարում տվյալ անձին հասարակության մեջ ինտեգրվել, այդ իսկ պատճառով դրան լրջություն չի տրվում: Բայց չէ՞ որ ես էլ խնդիր չունեմ հասարակության հետ:

Միգուցե էլ չգնամ, կամ մեկ անգամ էլ կգնամ ու վերջ: Սկսում եմ արդեն անիմաստ համարել այս հանդիպումները, ինչպես նաև այս՝ պարտադիր դարձած շաբաթական 3 անգամյա ձայնագրություն-ները: «հեռախոսազանգի ձայն» «ոտնաձայներ» «պատասխանում է զանգին»

– Ալո՛... հա՛, մամ ջան ... լավ եմ, վաղը անպայման կգամ քեզ մոտ: Հա... Մամ, ինձ մոտ ամեն ինչ տեղն է, բան էլ պետք չէ... Մա՛մ, խնդրում եմ չառնես: Մա՛մ... Վաչեի հետ չեմ խոսել, որ խոսեմ կիարցնեմ... Չէ, բան չի եղել, մեր սովորական ընդհարումներից է, մի քանի օր չենք խոսի, հետո էլի ընկերավարի, ինչպես, որ միշտ է լինում մեզ հետ... Դե արդեն չորս օր կլինի, որ չեմ խոսել... Մամ, լավ էլի, նենց ես ասում, կարծես տասը տարեկան եմ, ես արդեն 22 եմ, մի՛ մոռացի դա... Լավ, մամ ջան, վաղը կգամ... Կբարևես տատիկին, համբուրում եմ, հաջողություն:

«ոտնաձայներ» Ինչ-որ մի բան նկարել ուզեցի: Կարելի է Քիթթիին նկարել, մենակ թե ոնց անեմ, որ քիչ շարժվի: Ուր եմ դրել վրձինս ու ներկերը: «դարակներն է բացում-փակում»

Ահա՛... Երևի թե տրամադրվենք ու անցնենք գործի: Հը՛մ: Մինչ երկուշաբթի, մամ ջան: Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 3

«ազդանշան»

Ձայնագրություն համար «կրակայրիչի ձայն» երրորդ: Նոյեմբերի «կրակայրիչի ձայն» 19: Երկուշաբթի: 2012 թվական: 19:49: «կրակայրիչի ձայն» «ծուխը քաշում է թոքերը»

Ես քո տիրոջ մայրիկը, Վլադիկ: Նախորդ երկու օրերին գնացել էի կեսօրվա ժամը 3-ին, բայց այսօր, չգիտես ինչու, երկու ժամ ուշ կանչեց: Երբ մտա իր, ախր չգիտեմ ինչպես անվանեմ այդ վայրը... Բնակարան կոչվելու համար այնտեղ գոնե մեկ հեռուստացույց պետք է լիներ, լաբորատորիա կոչվել այն նույնպես չէր կարող, այնտեղ նույնիսկ մեկ հատ փորձանոթ էլ չկար, իսկ ընդունարանի համար աշխատողների քանակն էր մի քիչ պակասում, շատ չէ՝ մի քի՛չ: Մի խոսքով՝ բավականին տաք էր այսօր այնտեղ, ջեռուցող համակարգ էր գնել: Մի սպորտային տաբատ կար հագին ու կարճաթև վերնաշապիկ, իսկ իմ հագին՝ մեծ, ոտքերս տաք պահող կոշիկներ, հաստ պիջակ ու նույնիսկ

շարֆ: Սիրում եմ շարֆ: Բացի նրանից, որ տաք է պահում վիզս, նաև բավականին գեղեցիկ է շարֆով: Եթե այդ պահին կողքից որևէ մեկը նայեր ինձ ու Վլադիկին, երբ իրար դիմաց այդպես կանգնած էինք, հավանաբար կծիծաղեր: Կարծես երկրագնդի երկու տարբեր բևեռներից լինեինք:

Ահավոր լարված օր ստացվեց ինձ համար: Երեկ քնել չկարողացա: Նախորդ օրերը լավ քնում էի, բայց այս գիշեր չստացվեց. մտքերս խեղդում էին ինձ: Ի տարբերություն նախորդ օրերի՝ այսօր ստացվեց նկարել: Գիշերը արթնացա, սուրճ ըմպեցի, որ առաջիկա ժամերին պսևդո-էներգիա ապահովի ինձ, ու սկսեցի նկարել: Մուսան ինձ հետ էր, ու ամեն ինչ ստացվում էր: Խմեցի երկրորդ բաժակը... շարունակեցի նկարելը... խմեցի երրորդ բաժակը ու էլի նկարեցի... Առավոտյան 6-ի կողմերն այն արդեն պատրաստ էր: Ինձնից անկախ ստացվեց նախորդ նկարիս տրամաբանական շարունակությունը:

Նույն այգին փորձեցի նկարել, դարձյալ նույն նստարաններն ու դարձյալ նույն ծառերը: Պարզապես ձյունն էի մաքրել: Սպիտակ ներկս քիչ էր մնացել, որոշեցի խնայողաբար օգտագործել այն: Այդտեղից էլ եկավ միտքը, որ նկարեմ գարնանային ինչ-որ բան: Արևը նկարեցի դեղինի ավելի բաց երանգներով: Սովորության համաձայն գետնին ընկած, չմարած ծխախոտ դարձյալ նկարեցի: Աղբարկղ նկարեցի, որը ամբողջովին լցված էր, իսկ կողքը որոշ թափոններ կային՝ տոպրակներ, կոնֆետների պիտակներ, շշեր ու նույնիսկ մի զույգ ամբողջովին մաշված կոշիկ: Շատացրել էի

թռչունները: Դե վերջիվերջո, գարուն էր իմ նկարում: Ծաղկած ծաղիկներ կային, իսկ ծառերի վրա երևում էին տերևները: Փորձում էի նկարում առավոտ պատկերել: Տերևների վրա կաթիլներ նկարեցի՝ ցույց տալու առավոտյան ցողը: Շատ մուգ գույներ չէի օգտագործում: Ամեն դեպքում սպիտակը վերջում գրեթե վերջացավ: Նկարիս ձախ հատվածում մի մարդ էր քայլում իր շան հետ: Հավանաբար շանը դուրս էր հանել զբոսանքի: Քանի որ շան վզին ոչինչ չկար, իսկ մարդն էլ շանը շատ մոտիկ չէր, այդքան էլ հասկանալի չէր, թե դա փողոցային շուն էր, թե պատկանում էր այդ մարդուն: Նկարի կենտրոնում դարձյալ նույն զույգն էր: Աղջիկն ու տղան: Այս նկարում տղան կանգնած էր ճիշտ նույն դիրքով, ինչ նախորդում էր: Իսկ աղջիկը մեջքով էր կանգնած տղային, ձախ ոտքն էլ առաջ էր դրել աջից: Աղջիկը գնում էր: Պարանները նույնպես կային: Բայց որոշները ճղրտված էին՝ պատռված ու թողնված գետնին: Աղջկա աջ ձեռքին մկրատ կար, իսկ ձախը չէր երևում, կա՛մ գրպանում էր, կա՛մ էլ պարզապես օդում: Քանի որ երկուսին էլ նկարել էի պրոֆիլից, այդքան էլ պարզ չէի կարող ընդգծել նրանց դեմքի արտահայտությունները: Տղայի դեմքին փորձեցի հիասթափություն, միայնակություն ու վախ ցույց տալ: Նրա վերին շրթունքը մի քիչ ավելի բարձր էր սովորականից: Կարծես բերանը կիսով չափ բացած լիներ: Գլուխը թեքված էր դեպի աջ, ու չէր նայում ուղիղ աղջկան: Ձախ ձեռքի ցուցամատը և միջնամատը սեղմել էր վզին: Իսկ մյուս ձեռքով բռունցք էր արված, ընդ որում՝ բութ մատը գտնվում էր մնացած մատների ու ափի միջև: Այս ձեռքով

ուզում էի ցույց տալ իր հոգու լարվածությունն ու ներքին նյարդայնությունը: Մյուս ձեռքի դիրքով փորձում էի հասկացնել հուզմունքը: Չէ՞ որ հուզվելիս մենք հաճախ մեր ձեռքը տանում ենք դեպի վիզը ու արհեստականորեն սեղմում կոկորդին, որպեսզի արտաշնչվող օդը ավելի զգալի լինի: Հայացքը թեքված էր, քանի որ չէր ուզում հանդիպել ճշմարտությանը: Նրան ավելի հեշտ էր նայել կողքի ծաղկող ծառին, քան դեպի իր կողմը մեջքով շրջված աղջկան: Աղջկա դետալները ավելի քիչ էին: Նա նայում էր ներքև, իսկ շքեղ վարսերը ամբողջովին փակել էին դեմքը: Նայում էր ներքև... երևի իրեն մեղավոր էր զգում Բայց ոտնաքայլը մեծ էր, երևի հպարտ էր: Այսինքն չէր փոշմանել իր արարքից: Հացի փշուրներ չկային գետնին... թռչունները միասնական չէին հավաքված նկարիս մեջ:

Երևի գեղեցիկ է ստացվել:

Առավոտյան մոտ երկու, թե երեք ժամ քնեցի: Իսկ երբ արթնացա, դուրս եկա տնից դեպի մոտակա խանութ: Գնեցի մի տուփ մակարոն, հաց, թթվասեր, կետչուպ, աղ ու ծխախոտ: Ճաշից հետո (որը իմ նախաճաշն էր նաև, ու շատ հնարավոր է՝ ընթրիքը նույնպես) դարձյալ սուրճ խմեցի, երեք հատ ծխախոտ ծխեցի ու չորսն անց կեսին դուրս եկա տնից:

«հազի ձայն» Մի աղջիկ կանգնեցրեց երթուղայինը ու բարձրացավ: Նստելու տեղ չկար, ընդհանրապես չկար: Ու այնպես աչքերը հառեց իմ աչքերին, կարծես պարտավոր էի իմ տեղը զիջել: Թե այդպես էր, տաքսի վերցնեիր, մի՞թե չգիտես, որ այս ժամին դատարկ երթուղային չի անցնում... «հազի ձայն»

Կոկորդս լավ չէ: Տեսնես մրսել եմ, թե՞ ծխախոտից է: Պետք է, որ խոհանոցի դարակներից մեկում տաք շոկոլադ կամ կապուչինո լինի: Դրան քիչ անց կանցնեմ, ավելի լավ է պատմեմ այսօրվա իմ զրույցը Վլադիկի հետ:

Այսօր, իրոք, չէի կարող դիմանալ այլևս: Առանց երկար մտածելու և անալիզ անելու, միանգամից ասացի այն, ինչը ուզում էի ասել բժշկին: Ասացի հենց ա՛յ այսպես. «Հարգելի բժիշկ, կհրաժարվեմ այս հանդիպումները շարունակել, եթե դուք հենց այս պահին ինձ ցույց չտաք ձեր մասնագիտությունը հաստատող որևէ փաստաթուղթ»: Զարմացած նայեց վրաս, անակնկալի եկավ: Մի՞թե չէր նկատել, որ կասկածելու բավականին առիթներ էր տվել: Փորձեց ինչ-որ բան ասել. «Համո՛ ջան, տղա՛ս...»: Թույլ չտվեցի ավարտել: Միանգամից խոսքը կտրեցի ու խնդրեցի, որ այսուհետ ինձ դիմի իմ ամբողջական անունով: Նա նորից փորձեց շարադրել միտքը, բայց այս անգամ սկիզբը փոփոխելով. «Համլե՛տ ջան, տղա՛ս, միթե ես քեզ կասկածելու առիթ եմ տվել, ճիշտն ասած, քո այս խնդրանքը ինձ անակնկալի բերեց: Ներկա պահին ինձ մոտ չկա ոչ մի թուղթ կամ դիպլոմ, որոնք կարող եմ ցույց տալ: Մեր հաջորդ հանդիպման ժամանակ անպայման կբերեմ, որպեսզի կասկածներդ հօդս ցնդեն: Ես այս բնակարանը վարձով եմ վերցրել որպես աշխատասենյակ: Եվ իմ բոլոր հաճախորդներին միշտ այստեղ եմ կանչում: Սկզբից քաղաքի կենտրոնի կլինիկաներից մեկում էի, բայց շատ կարճ ժամանակում հասկացա, որ իմ բուժման մեթոդներն ու կլինիկայում աշխատելը իրար

հակասում են: Նախ այստեղ պատերը սպիտակ չեն, օդը չի լցված դեղորայքի «բույրով», հագիս չկա սպիտակ խալաթ, ինչն ավելորդ լարվածությունը հանում է: Բժիշկը նա է, ով օգնում է բուժել ֆիզիկական ցավը, իսկ հոգեկան ցավը բուժել կարող է միայն ընկերը: Քանի որ ընկերը մասնագիտություն չէ, այդ իսկ պատճառով հոգեբաններին դասում են բժիշկների շարքին, այլ ոչ ընկերների: Բայց առաջին հերթին ես քո ընկերն եմ: Բոլոր բժիշկները՝ թերապևտները, վիրաբույժները, սեքսապաթոլոգները և անգամ ատամնաբույժները, իրավունք ունեն չիմանալու իրենց հիվանդի անունը, քանի որ առանց դրա բուժում նշանակելը միանգամայն հնարավոր է: Հոգեբանը պարտավոր է իմանալ ու երբեք չմոռանալ իր հիվանդի անունը: Գոնե մինչ այն պահը, քանի դեռ հիվանդը լիարժեք չի ապաքինվել: Մենք՝ հոգեբաններս, հաճախ դիմում ենք «քամելեոնի էֆեկտին»՝ փոխում ենք մեր բնավորությունը կախված հաճախորդից: Փորձում ենք հարմարվել նրան ու հասկանալ, թե ինչ է նա զգում: Այդ իսկ պատճառով էլ շատերը հոգեբաններին համարում եմ հոգեկաններ: Ես երբեք իմ հաճախորդներին չեմ ասում «հիվանդ», դա նույնպես լարվածություն է մտցնում: Ես դեմ եմ այդ անպետք լարվածություններին: Սա էր պատճառը, որ ես դուրս եկա այդ կլինիկայից ու հրաժարվեցի բժշկական խալաթից: Մենք ընկերներ ենք, ընդունի՛ր դա: Երևի նկատած կլինես, որ հաճախ ես էլ եմ ինձնից պատմում, որպեսզի խոսակցությունը վերածվի լիարժեք դիալոգի: Ես թույլ չեմ տալիս, որ մեր խոսակցությունը վերածվի մոնոլոգի, այն էլ միայն քո

կողմից: Ասողին լսող է պետք: Ասողին խորհուրդ է պետք: Ասողին ոգեշնչել է պետք: Հոգեբանը բժիշկ չէ, հոգեբանը պարզապես արտիստ է՝ սպիտակ խալաթը հագին»:

Գրողը տանի, մի պահ ինձ իրոք հոգեբան զգացի: Երևի ես էլ եմ արտիստ, որ կարողացա մտապահել ու մեջբերել բժշկի խոսքերը: Նա կա ու կմնա ինձ համար որպես բժիշկ: Ու եթե նույնիսկ իրեն ենթագիտակցորեն ընդունեմ որպես ընկեր, միևնույն է, ես «դոգմատիկ» կերպով կանվանեմ՝ «բժիշկ»:

Ես հարցրեցի, թե արդյոք գիտի՝ ինչ է ինձ հետ կատարվում: Ինքն ասաց, որ ամեն ինչ իր ժամանակն ունի: Ես չգիտեմ, ինքը որքանով ճիշտ ասաց այս ամենը, բայց շարունակեց խոսելը: Ասաց, որ համալսարանն ընդունվել ու ավարտել է Երևանում, հետո ուսումը շարունակել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հոգեբանության ֆակուլտետում: 1980 թվականին ընտանիքով տեղափոխվել են Մոսկվա, ու թեև հոգեբանության ֆակուլտետը 9 տարի էր, ինչ սկսել էր իր գործունեությունը, այն արդեն վայելում էր մեծ համբավ ինչպես Մոսկվայում, այնպես էլ նախկին ԽՍՀՄ տարածքում: Որոշել է դիմել այդտեղ, գերազանց գնահատականներով ավարտել ուսումը: Մի խոսքով, նա մոտ կես ժամ պատմում էր իր ուսանողական կյանքից: Ասում էր, որ տատիկը լավ ռուսերեն գիտեր, ու որ այդ լեզուն տատից է սովորել: Ասաց, որ շատ բաների համար իր տատին է պարտական, չէ՞ որ լեզվի թույլ իմացությունը կխանգարեր իրեն սովորելու ընթացքում:

Մի խոսքով, համոզեց, որ, իրոք, բժիշկ է: Իմ կասկածները մեծ մասամբ վերացան, բայց, այնուամենայնիվ, խնդրեցի իրեն, որ հաջորդ հանդիպման ժամանակ իր հետ բերի դիպլոմը: Երևի մի փոքր վիրավորվեց ինձնից, որ այդքանից հետո դարձյալ իմը պնդեցի: «ուժեղ հազի ձայն» «հազի ձայն» Ես անհամբեր սպասում եմ մեր հաջորդ հանդիպմանը, որպեսզի վերջապես տեսնեմ դիպլոմն ու հանգիստ լինեմ, որ հուսալի մասնագետի հետ գործ ունեմ: Իմ մեջ թեկուզ չնչին կասկած չպետք է մնա: Ի դեպ, վերջին քսան րոպեի ընթացքում դարձյալ վերադարձանք ինձ: Խնդրեց, որ պատմեմ իմ...

«կրակայրիչի ձայն» «ծուխը քաշում է թոքերը» Ասաց, որ պատմեմ այն, ինչ հիշում եմ մինչև 7 տարեկան դառնալը: Մինչև յոթ տարեկան: Իսկ ով է առհասարակ հիշում, թե ինչ է եղել իր հետ մինչև 7 տարեկան հասակը: Փորձեցի վերհիշել: Մանկապարտեզ եմ գնացել, այնտեղ ամենավերջինն էի ավարտում հաց ուտելը, սիրում էի գդալի վրա նկարված նախշերը ուսումնասիրել: Հիշում եմ, որ մի խաղ էի հնարել. ամեն սեղանին նստում էինք 4-5 հոգով ու ճաշ ուտում, սովորաբար՝ սուուս կամ ֆրի, մինչև ուտելը, բոլորս գդալներն էինք ցույց տալիս իրար, ու հաղթում էր այն երեխան, ում գդալի նախշերը համարվում էին ամենագեղեցիկը: Նախշերի գեղեցկություն որոշելու մեթոդը, ճիշտն ասած, չեմ հիշում: Հիշում եմ, որ հաղթողին մնացած երեխաները համբուրում էին: «ծիծաղ» Ահա և սեռահասունացման իմ առաջին քայլերը: Երբ սեղանի մոտ գոնե մեկ աղջիկ չէր լինում, չէի խաղում այդ խաղը: Մի աղջկա շատ էի սիրում, նրան

բոլորը նեղացնում ու ծաղրում էին, որովհետև նա ամենափոքրն էր մեզնից: Չէ՛, չէ՛, ոչ թե ամենափոքրը, այլ ամենամիամիտը: Բոլորս էլ երեխա էինք, բոլորս էլ միամիտ էինք, բայց ինքը հավատում էր բոլորին: Երբ գդալի խաղը խաղում էինք, ամեն ինչ անում էի, որ չհաղթեր, չէի ուզում, որ մանկապարտեզի տղաները նույնպես համբուրեին նրա այտը: Իսկ երբ խաղում էր մեզ հետ, ամեն ինչ անում էի, որ ես հաղթեի: «չդադարող հազի ձայն»

«կատվի մլավոց»

– Գրողը տանի, այնքան ուժեղ հազացի, որ արթնացավ: Քի՛թթի, խնդրում եմ շարունակիր քնել:

Մանկությունից մի դեպք ևս պատմեցի: Հայրս շներ շատ էր սիրում: Երբ երկու տարեկան դարձա, ինձ քրոջ կամ եղբոր փոխարեն շուն նվիրեց: ROTVELER ցեղատեսակի շուն, անունն էլ՝ Մաֆ: Բարի կենդանի էր, շատ էի կապված հետը, 4-5 տարեկանում իմ եղբայրն էր դարձել, իր հետ էի խաղում: Ես քույր, եղբայր այդպես էլ չունեցա: Մաֆը ինձ համար ընկեր էր, արդեն վեց տարեկանում հորս ու մորս հետ զբոսանքի էինք տանում Մաֆին: Հայրս՝ շանը, մայրս՝ ինձ: «քմծիծաղ» Յոթ տարեկան էի, եթե չեմ սխալվում, ձմեռային սովորական օր էր, ես էլ սովորությանս համաձայն շուտ էի արթնանում: Ամառները մաման էլ էր շուտ արթնանում, բայց ձմռանը միշտ ես էի առաջինը, չէ՛, երկրորդը. հայրս էր առաջինը: Արթնացա, վազեցի ննջասենյակ, տեսա, որ մաման քնած է, իսկ հայրս, ինչպես միշտ, աշխատանքի էր: Հետո մտա հյուրասենյակ ու կանգնեցի այն նույն տեղում, որտեղ և

հիմա կանգնած եմ: Տասնհինգ տարի է անցել: Էհհ.. էհ... դիմացս էլի այս նույն պատուհաններն էին, ձախ կողմում հեռուստացույցը, այն ժամանակ մի քիչ ավելի վատն էր, ներքևում էլ DVD-նվագարկիչ չկար, ետևումս՝ նույն բազմոցը: Մաֆը անշարժ պառկած էր: Արթնացրեցի՝ չարթնացավ: Անունը գոռացի, արձագանք չկար: Հասկացա, որ ինքն էլ չկա, ու սկսեցի լացել:

Մանկապարտեզում, երբ ինձ նեղացնում էին, չէի լացում: Բակում ֆուտբոլ խաղալիս, երբ ընկա ու ոտքս վնասեցի, չլացեցի, նույնիսկ հիվանդանոց հասնելու ճանապարհին ես ինձ պինդ էի պահում, ընդ որում՝ ընդամենը վեց տարեկան էի, բայց սա ուրիշ դեպք էր, ես հեկեկում էի: Երբ մաման արթնացավ ու տեսավ ինձ, որոշեց տնից հանել: Մանկապարտեզում ձմեռային արձակուրդներն էին, բակում երեխաներ չկային, մաման ինձ տարավ հարևաններից մեկի տուն, թողեց ու հեռացավ: Հեռացավ շան՝ սատկած շան մոտ:

Մինչև հիմա էլ հիշում եմ այդ անտանելի երեք ժամերը, որ անցկացրեցի հարևանի տանը: Աչքերս արցունքոտ էին, քիթս ֆսֆսում էր, գրպանումս էլ թաշկինակ չկար, որպեսզի քիթս մաքրեի, իսկ հարևան Ռոեն տատիկից ամաչում էի խնդրել: Այնտեղ տասը տարեկան մի աղջիկ էլ էր ապրում, իրենից ավելի շատ էի ամաչում: Փորձում էի թաքցնել արցունքոտ աչքերս: Իր տեսադաշտից հեռու էի մնում, չէի ուզում, որ ինձ վրա ուշադրություն դարձներ: Եթե նա արցունքներ նկատեր աչքերիս, հաջորդ օրը ամբողջ բակը կիմանար, որ լացել եմ: Դրանից ամենաշատն էի վախենում:

Տղաները չեն լացում, իսկ Համլետը՝ առավել ևս: Աղջկա անունը Բելա էր, իրեն հպարտ էր ներկայացնում, նույնիսկ այդ տարիքում: Իռեն տատիկը նկատեց, որ նստած մի կետի եմ նայում, ու խնդրեց թոռնուհուն, որպեսզի խաղալիքները վերցնի, գա հյուրասենյակ ու ինձ հետ էլ խաղա: Նրա մայրը հայտնի դիզայներ էր, ում աշխատանքները հաճախ էին ցույց տալիս: Նույնիսկ հայտնի հեռուստաընկերություններից մեկում իր սեփական հաղորդումն ուներ, էլ չեմ խոսում այն «բրենդների» մասին, որոնց հետ աշխատում էր: Այստեղից էլ նրա աղջկա՝ Բելայի թիթիզությունն ու հպարտությունը: Այդ ընթացքում Բելան ինձ հետ այդպես էլ չխաղաց: Իռեն տատիկը շատ էր փնթփնթում նրա վրա, որպեսզի գա, ինձ բարևի գոնե: Եվ վերջապես, Իռեն տատիկի բազմաթիվ հորդորներից հետո, Բելան վերցրեց ամենագունավոր, բայց, թերևս, իր ամենաչսիրած խաղալիքներից մեկը՝ «կուբիկ-ռուբիկը» և եկավ ինձ մոտ: Չբարևեց: Ինձ մեկնեց այն ձեռքը, որի մեջ խաղալիքն էր ու հրեշտակի անմեղ ձայնով ասաց. «Պետք է այնպես անես, որ ամեն մասում գույները համընկնեն, բայց, իմ կարծիքով, դա քեզ մոտ չի ստացվի, նույնիսկ մամայիս մոտ չի ստացվում»: Ու գնաց: Ես կանոնները գիտեի բարեբախտաբար: Որովհետև Բելան բավականին արագ ու վատ բացատրեց և երկրորդ անգամ չէր էլ կրկնի: Ուղեղս մի քանի րոպեով անջատվեց: Փորձում էի մակերևույթը պատել մի գույնով, բայց ինձ մոտ չէր ստացվում: Ամեն դեպքում ուղեղս չէր կարող անջատվել այն աստիճանի, որ կարողանայի մոռանալ առավոտվա եղածը: Ես չգիտեի, թե ինչ բան է

«կորուստը»: Չգիտեի, որ խորքում՝ ինչ-որ տեղ, սկսում է ցավել, երբ կորցնում ես ընկերոջդ կամ հարազատ մեկին: Մինչ օրս էլ հիշում եմ Մաֆին ու սա պատմելուց մտածում էի, որ Վլադիկ Սամվելովիչը ինձ չի հասկանա: Դժվար է երևի մարդկանց բացատրել, որ շունը նույնպես կարող է ընկեր լինել, նույնիսկ ավելի լավը, քան մարդը: Ես ինձ վատ էի զգում: Հուզմունքս գնալով ուժեղանում էր: Հիշում եմ, որ Իռեն տատիկը ներս մտավ հյուրասենյակ ու ինձ մի մեծ կարմիր խնձոր տվեց: Ասացի, որ չեմ ուզում ուտել, բայց տվեց: Ես խնդրեցի իրեն, որ ինձ տուն տանի, նա ասաց, որ պարտավոր եմ մի քիչ էլ դիմանալ: Խնձորը փորձեցի դնել գրպանս, բայց չտեղավորվեց: Բաճկոնս աթոռին էր դրված, դրեցի բաճկոնիս գրպանը: Չէի ուզում, որ Իռեն տատիկը գար ու ամեն րոպե կրկներ, որ պետք է ուտեմ այդ գրողի տարած խնձորը: Շարունակեցի գլուխ կոտրել գույները հավաքելու մեջ ու շարունակեցի հայացքս փախցնել Բելայից, որպեսզի նա չնկատի իմ կաշկանդվածությունը: Ու այն պահին, երբ Իռեն տատիկը մտավ ներս ու ինձ գովեց, որ կերել եմ խնձորը, դռան ձայն լսեցի: Ես արագ վազելով մոտեցա դռանը, որպեսզի դիմավորեմ մորս, ում հետ այդ ճնշող մթնոլորտն իսկույն ևեթ կվերածվեր ներդաշնակ սիմֆոնիայի: Բայց ակնկալիքներս չարդարացան: Բելայի պապիկն էր՝ Ռաֆայել ձյաձյան. հոգին լուսավորվի, խաղաղ մարդ էր: Թեպետ այդքան էլ ընկերասեր ու մարդամոտ չէր: Փորձեց բարի պապիկի պես ինձ բարևել, բայց ներքին կոպտությունն ամեն դեպքում իրեն մատնում էր: «Յա, այս ո՞ւմ եմ

տեսնում մեր տանը, ինչպե՞ս ես, Համլետիկ»: Միանգամից վերադառնալով իր բնավորությանը՝ ձայնի միջից դուրս հանեց մանկական ելևէջները, նայեց կնոջն ու հրամայական և մի քիչ էլ կոպիտ տոնայնությամբ ասաց. «Հա՛ց դիր ուտեմ, հոգնած մեռնում եմ»: Ռաֆիկ պապիկի ներկայությունն ինձ ավելի ճնշեց: Օտարության զգացումը խեղդում էր ինձ, ուզում էի գոռալ, ուզում էի, վերջապես, լացել ու հանգստանալ: Արցունքի կաթիլները հատիկ առ հատիկ ընկնում էին աչքերիցս, բայց շարունակում էի ձայն չհանել: Ռաֆիկ պապիկի գալուց մոտ քսան րոպե անց, նորից դուռը ծեծեցին՝ մամաս էր: Մոտեցա ու ամուր գրկեցի նրան: «կատվի մլավոց» Այնքան ուժեղ գրկեցի, կարծես երեք ամիս էր անցել, ոչ թե երեք ժամ: «կատվի մլավոց» Հասա տուն, տեսնեմ՝ հայրս նույնպես տանն էր: Չէի սպասում, որ նա էլ տանը կլինի: «կատվի մլավոց» ... Մաֆը սատկել էր:

– Գրողը տանի քեզ, Քի՛թթի, գնա քնի՛ր, ինչո՞ւ արթնացար: Համբերի՛ր, շուտով մի բան կտամ, կլափես:

Շները լավ կենդանիներ են՝ հավատարիմ, մարդամոտ, աշխույժ, իսկ կատուները մարդամոտ չեն, նրանց նույնիսկ շոյելն է բարդ: Չես հասցնում դիպչել, արդեն փախչում են: Իմ կարծիքով գրեթե բոլոր կատուներն այդպիսին են: Դե, համենայն դեպս Քիթթին այդպիսին է: Երանի նրա փոխարեն շուն ունենայի: Երանի Մաֆը կենդանի մնար: Կամ ձագուկ ունենար: Դուրս կշպրտեի այս կատվին ու մեծ հաճույքով շուն կպահեի: Պարզապես երբ մենակ ես ապրում երեք սենյականոց բնակարանում,

«կատվի մլավոց» փորձում ես դատարկությունը կենդանիներով լցնել: «կատվի մլավոց»

– Քի՛թթի, ձայնդ կտրի՛ր:

«հազի ձայն» Կարոտել եմ քեզ, Մա՛ֆ: Մաֆը լավ ընկեր էր: Հիշում եմ այդ օրվա գիշերը, հայրս սուսուփուս հեռուստացույցի ալիքներն էր փոխում ու լուրեր նայում: Մայրս խոհանոցում ընթրիք էր պատրաստում, նույնիսկ հիշում եմ ինչ՝ շոկոլադե վաֆլիներ. ես շատ էի սիրում դրանք, պատրաստում էր, որ տրամադրությունս բարձրանա: Ես միշտ նրա կողքին էի, երբ դրանք պատրաստում էր: Հիշում եմ՝ ի՛նչ ուրախությամբ էի ուտում ամենաառաջին պատրաստվածը: Բայց այդ օրը ես իմ սենյակում փակված էի, գրկել էի Մաֆի վզկապը ու լալիս էի: Հանգիստ լացում էի, որովհետև Բելան արդեն կողքիս չէր և բոլորին չէր ասի, որ Համլետը լացում է: Ի վերջո, արդեն տանն էի, և մթնոլորտն այլևս չէր խեղդում, պատերն էլ ջերմ ու տաք էին: Մինչ օրս այդ օրը մոռանալ չեմ կարողանում:

Այդ տարվա Նոր տարուն շատ սիրելի Ձմեռ պապիկը ինձ շունիկ նվիրեց՝ խաղալիք շունիկ: Դարձյալ ROTVELER ցեղատեսակի շուն էր: Անունը Մաֆ դրեցի: Բայց միևնույն է, խաղալիքը այդպես էլ չկարողացավ փոխարինել իրականին: «ուժեղ հազի ձայն»

Արդեն ութն անց է: Գնամ քնեմ, վերջապես: Չնայած գիշերը որ արթնանամ, չեմ իմանա՝ ինչով եմ զբաղվելու: Ի դեպ, բժիշկն ասաց, որ այսօրվա ձայնագրությունը հնարավորինս շուտ վերջացնեմ:

Տուն գալու ճանապարհին մի մարդ մոտեցավ և մի քանի էջանոց գրքույկ տվեց ինձ, բայց

փոխարենը հացի փող խնդրեց: Տվեցի: Մեկ չէ, երեք հացի համար կբավարարեր: Գնամ, ավելի լավ է այդ փոքրիկ պատմվածքը կարդամ, ընթացքում էլ կննջեմ ու կքնեմ: Իմիջիայլոց, այն գրողն է, ում շատ եմ սիրում՝ Էդգար Ալլան Պո. «Մարդը, ում ավիրեցին» (The man that was used up) :

Չորեքշաբթի կշարունակենք:

Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 4

«ազդանշան»

Ձայնագրություն համար չորրորդ: Նոյեմբերի 21: Չորեքշաբթի: 2012 թվական: 22:19:

Ահավոր մեղավոր եմ ինձ զգում: Ահավոր... Ես չպետք է երկուշաբթի օրը ինձ այդ կերպ դրսևորեի: Այդ կասկածները լրիվ անտեղի էին: Վլադ Սամվելովիչը պարզապես ուզում էր ավելորդ լարվածությունը մեր շփումից հանել: Իսկ ես ինձ սխալ պահեցի՝ հարցնելով, թե ինչ մասնագիտություն ունի: Զարմանում եմ իմ արարքի վրա: Մինչև դուռը ծեծելը արդեն կաշկանդված էի, իսկ դուռը բացելուց հետո է՛լ ավելի վատ զգացի ինձ: Վլադ Սամվելովիչը ինձ դիմավորեց սպիտակ խալաթով: Դատարկ պատերը արդեն լցված էին. որոշ նկարներ էր փակցրել: Մարդու անատոմիան պատկերող նկար էր, կողքին՝ ուղեղը ցույց տվող նկար, վրան գրված էր, թե ուղեղի կոնկրետ որ հատվածը ինչ ֆունկցիայի համար է պատասխան տալիս: Դիտմամբ էր դա արել, որպեսզի այլևս չբողոքեմ: Իրոք,

արժանի եմ: Իսկ տարբերությունը ակնհայտ էր: Բժշկի ետևում՝ բազմոցի կողքին, գրադարակ կար, որի վրա դրված էին բժշկի դիպլոմները, ընդ որում՝ Լոմոնոսովի համալսարանի դիպլոմը նույնպես, դա միանգամից ֆիքսեցի, շուրջը կային նաև մի քանի շնորհակալագրեր, պարգևագրեր, պատվոգրեր և նույնիսկ մի փոքրիկ բրոնզե արձանիկ: Անգամ մի ամսագիր կար, որի առաջին էջում պատկերված էր Վլադ Սամվելովիչի դիմանկարը: Ամսագրի անունը չտեսա... Անկեղծ ասած՝ մի ակնթարթ եմ նայել այդ ամենին, ամաչում էի անընդհատ աչքս այդտեղ գցել, առանց այդ էլ ինձ վատ էի զգում: Ինչևէ...

Ինչ վերաբերում է մթնոլորտին՝ ճնշող էր, իրոք: Բժիշկը առաջվա պես չէր կատակում: Նա մտել էր իր նոր դերի մեջ: Դրա վառ ապացույցը մինչև այդ պահը հնչած իր միակ բառն էր՝ «համեցի»: Ու քանի որ հիշում էր ատելությունս ծխախոտի, առավել ևս ծխախոտի ծխի նկատմամբ, դուրս եկավ սենյակից և մի քանի րոպե անց վերադարձավ: Ես, միևնույն է, ծխախոտի հոտը զգում էի, բայց որոշ ժամանակ անց դա անցավ: Ինչևէ...

Բժիշկը նկատեց իմ շփոթությունը, աչքերը հառեց աչքերիս, առ այն, որ գլուխս կախեցի ու հարցրեց՝ արդյոք իրեն է թվում, թե՞ ես իրոք լարված եմ: Հարցի պատասխանը նա լավ էլ գիտեր: Եվ պարզից էլ պարզ էր, որ հարցը տրված էր ավելի շատ իր ենթատեքստի համար: Այս ամենը ճնշող էր, առավել, քան երբեք: Սպիտակ խալաթը ինձ պարզապես հիպնոզացնում ու բթացնում էր: Ես չէի կարողանում հաղթահարել իմ մեջ մտած լարվածությունը:

Ազատ շփումը, որը կար մեր միջև, արդեն մարել էր: Իմ առջև նստած էր մի մարդ, ով բարձր պաշտոն ուներ, ով լուրջ մասնագետի տպավորություն էր թողնում ու ինձ ընկեր լինելու համար բավականին մեծ էր: Ետևիս գրադարակում տեղադրված դիպլոմները հասկացնել էին տալիս, որ իմ առջև նստած մարդը բավականին լուրջ մասնագետ է, ով հասել է մեծ հաջողությունների իր կարիերայի ընթացքում: Ես պարզապես պետք է շնորհակալ լինեմ իրեն՝ ինձ ընդունելու համար: Սակայն այս ամենը վերջնականապես սինթեզում էր պատին փակցված պլակատները: Այդ գրողի տարած գանգը կարծես խոսում էր ինձ հետ. «Դու հիվանդ ես, Համլետ, ընդ որում՝ հոգեկան հիվանդ, բայց մենք կանոնները գիտենք, մենք քեզ էլ կբուժենք»: Այսօր առաջին անգամ ես ինձ հիվանդ զգացի, իսկ Վլադ Սամվելովիչին՝ բժիշկ: Այսօր բժիշկը մի հարց տվեց, որին սպասում էի առաջին հանդիպումից սկսած, նման շաբլոն հարցեր բժիշկները առաջին հանդիպման ժամանակ են տալիս: Ամբողջ օրվա ընթացքում այն քաոս էր առաջացրել ուղեղիս մեջ: Երևի արժե վերլուծել այն: Իսկ հարցը բավականին պարզունակ էր՝ «Որտեղի՞ց ես իմացել իմ մասին, ո՞վ է քեզ խորհուրդ տվել»:

Ա՛յ քեզ աբսուրդ... Ու ևս մեկ անգամ խիղճս սկսեց ինձ տանջել: Ենթատեքստը նույնպես վիրավորական էր: Չէ՞ որ ես եմ դիմել իրեն, այլ ոչ թե ինքը ինձ: Ես չպետք է մեղադրեի այդ մարդուն: Ինքը ինձ ավտոբուսում պատահաբար չի գտել և ասել, որ հիվանդ եմ, ավելացնելով, որ չդիմելու դեպքում ինձ վտանգ է սպառնում (ընդ որում՝

միակ բժիշկը, ով կարող է օգնել ինձ, նա է): Ո՛չ, գրողը տանի, դա ես եմ դիմել, ես եմ զանգահարել, ես եմ խնդրել, որ ինձ ընդունի:

Ես մի պահ շփոթվեցի, իրոք, մոտ կես րոպե չէի կարողանում հիշել, թե ով է ինձ խորհուրդ տվել դիմել իրեն: Այս մասը կարծես հոլիվուդյան որևէ ֆիլմի լարված հատվածը լիներ. «Օրերից մի օր Համլետը որոշում է դիմել հոգեբանի և դիմում է: Անցնում է առաջին հանդիպումը, երկրորդը... երրորդը... և միայն չորրորդ հանդիպման ժամանակ նա կենտրոնանում է այն բանի վրա, թե ով է իրեն տվել իր բժշկի՝ Վլադ Սամվելովիչի հեռախոսահամարը»:

Նոյեմբերի 14-ն էր, առավոտյան ժամը 8-ը, հեռախոսիս զարթուցիչը զանգեց: Երկար քնել չեմ սիրում: Արթնացա: Տաք թեյ պատրաստեցի, հաց ու մեղրով խմեցի, շորերս հագա ու պատրաստվում էի դուրս գալ տնից: Մինչև դուրս գալը որոշեցի զանգել ամենամոտիկ ընկերոջս՝ Վաչեին, իմանալու համար, թե ինչով է զբաղվելու դասերից հետո: Վերջին անգամ իր հետ խոսել էի դրանից չորս օր առաջ՝ շաբաթ օրը: Նախորդ օրը նույնպես զանգել էի, բայց նա չվերցրեց հեռախոսը: Մտածեցի, որ բոքսի պարապունքի կլինի: Բայց նա այդ օրը այդպես էլ ետ չզանգեց: Իսկ նոյեմբերի 14-ին, երբ զանգահարեցի, Վաչեն վերցրեց հեռախոսը ու բավական կոպիտ ինտոնացիայով, առանց բարևելու ասաց. «Ասա՛, Համ, չէ՛, չէ՛, կներես, Համլետ»: Զարմացա, ինձ թվաց՝ ինչ-որ լուրջ բան է եղել, հնարավոր է՝ իր ծննդյան օրն եմ մոռացել, բայց իր ծննդյան օրը ես անգիր հիշում եմ՝ մարտի 27-ն է:

Հարցրեցի, թե ինչու նախորդ օրը չվերցրեց հեռախոսը, ասաց, որ գործեր ուներ, իսկ երբ հարցրեցի, թե ոնց է իրեն զգում, նույնպես հաջորդեց ցրողական, կոպիտ ու կարճ պատասխան։

Վաչեն իմ մանկության ընկերն է։ Չորս տարեկանից իրար հետ ենք մեծացել։ Նույն բակում ենք խաղացել, նույն մանկապարտեզն ու նույն դպրոցն ենք հաճախել։ Համալսարան ընդունվելուց հետո մեր ճանապարհները բաժանվեցին, բայց միայն ուսման վայրն էր մեզ բաժանող հիմնական հանգամանքը, մենք շարունակում էինք մնալ մտերիմ ընկերներ։ Նա ընդունվեց պոլիտեխնիկ, ես՝ պետական համալսարան։ Դասերից հետո միշտ հանդիպում էինք։ Շաբաթ և կիրակի ֆուտբոլ էինք խաղում։ Ոչ այնքան հաճախ, բայց առիթի դեպքում հավաքվում ու մի գավաթ գարեջուր էինք խմում։ Ի տարբերություն ինձ, նա ավելի ցածրահասակ էր, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ նույնպես բարձրահասակ էր համարվում։ 1,78-ն էլ վատ բոյ չէ։ Սպորտով ավելի շատ էր զբաղվում, բայց դրա հետ մեկտեղ ծխում էր։ Իր այդ վատ սովորությամբ ինձ չկարողացավ վարակել։ Ծխելու մեջ ոչ մի լավ ու հետաքրքիր բան չեմ գտնում։ Մի անգամ գրազ եկանք, որ մի ամիս չի ծխելու։ Ընկերական գրազ էր, ուզում էր ցույց տալ, որ կամքի ուժ ունի։ Ավելի ճիշտ՝ այնքան գրազ չէր, որքան որ ապացույց, ինքնաապացույց (հետաքրքիր է, այդպիսի բառ կա՞)։

Վաչեի հետ նույն ժամանակահատվածում, բայց տարբեր տեղերում ենք ծառայել։ Ինքը՝ Արցախում, ես՝ Երևանում։ Երբ ավարտեցինք

ծառայությունը, մեր շփումը դարձյալ շարունակվեց: Վաչեն մնում էր իմ ամենամոտ ընկերը: Բայց այնպես, ինչպես այդ օրը, ինձ հետ երբեք դեռ չէր խոսել: Սկզբում մտածեցի, որ կատակում է: Բայց ես շատ լավ գիտեմ Վաչեի կատակները և լուրջ խոսելը: Երբ առաջարկեցի հանդիպել ու խոսել, ասաց՝ կիրակի օրն ամեն ինչի մասին արդեն խոսել ենք: Կիրակի... չեմ հասկանում նրան: Մինչև հիմա գլխիս մեջ չի տեղավորվում սա: Մենք վերջին անգամ շաբաթ օրն էինք հանդիպել: Իրենց տանը նստած մեր սիրելի «Call of Duty» 4-ն էինք խաղում:

Խնդրեցի Վաչեին պատմել, թե ինչ է եղել, պատմել առանց բացթողումների: Նա հարցրեց՝ գնացել եմ արդյոք հոգեբանի մոտ: Դարձյալ զարմացա... Ասաց, որ երկուշաբթի օրվա համար պայմանավորվել էի: Բայց այդպիսի բան չի կարող լինել: Ես ոչ մի հոգեբանի կարիք չունեմ կամ չունեի: Սկսեցի արդեն վախենալ ու նորից խնդրեցի Վաչեին բացատրել ամեն ինչ, ավելի հանգիստ ու նորմալ:

Վաչեն համաձայնեց մի քանի րոպե տրամադրել ինձ և պատմեց մի «չլսված հեքիաթ»: Ես ու Վաչեն կիրակի օրը հանդիպել էինք ու խաղում էինք «Call of Duty»: Վաչեն խաղի ընթացքում ինձ խնդրեց, որ մոխրաման բերեմ, ասելով՝ «Համ ջան, մոխրաման կբերե՞ս», ես էլ կատաղած վրան նայեցի ու ասացի, որ իմ անունը այլևս չկրճատի և դիմի ինձ իմ ամբողջական անունով: Այդտեղից էլ վեճ սկսվեց մեր միջև, ըստ իր պատմածի՝ ես ջարդել եմ համակարգչի էկրանը ու ամբողջ տնով մեկ հայհոյել

Վաչեին: Ընդ որում՝ նրա ծնողներն այդ ժամանակ տանն են եղել: Ինչևէ...

Փորձեցի վերլուծել այս ամենը իմ մեջ: Նախ Վաչեն շփոթել է, մենք հանդիպել ենք ոչ թե կիրակի, այլ շաբաթ օրը: Հետո Վաչեն ինձ մանկապարտեզից սկսած «Համ»-ով կամ «Համո»-ով է դիմել: Ես երբեք իրեն այդպիսի հիմարություն չէի ասի, առավել ևս՝ դա կռվի պատճառ չէի սարքի: Եվ ընդհանրապես ինձ ավելի հարմարավետ եմ զգում, երբ ինձ կրճատ անունով են դիմում: Այդ դեպքում տվյալ անձնավորությունը ավելի հարազատ է թվում, և պսեվդո-մոտիկության զգացում է առաջանում իմ մեջ: Բացի դրանից, ոչ աշխատանքային օրերին Վաչեի մայրն ու հայրը տանն են լինում, ես ինձ նմանատիպ պահվածք թույլ չէի տա, որքան էլ որ բարկացած լինեի նրա վրա: Գրողը տանի, ցասումը մահացու մեղք է: Ես միշտ դեմ եմ եղել բարկության նմանատիպ դրսևորմանը: Բարձրաձայն հայհոյել, մոնիտոր ջարդել. դա իմ ձեռագիրը չէ:

Վաչեի այս բացատրությունը վիրավորական էր: Նա կարող էր ինձ պարզապես ասել ճիշտը, բայց նա ինձ մեղադրեց մի բանի մեջ, որը ես չեմ արել: «Վա՛չ, եթե այդ ամենը, իրոք, ճիշտ է, կլինի՞ ես գամ ձեր տուն ու համոզվեմ, որ քո մոնիտորի էկրանը ջարդված է, որովհետև քո ասածները շատ չէ, բաց մի՛ քիչ կասկած մտցրեցին իմ մեջ»: Ինքը շատ կոպիտ պատասխանեց, արգելեց մոտենալ ինձ, նույնիսկ իրենց դռանը: Մյուս կողմից, եթե այդպիսի բան եղած լիներ, բավական տհաճ կլիներ ևս մեկ անգամ իր ծնողներին տեսնելը: Բայց դե այդպիսի բան չկա, ես կուզեի գնալ իրենց տուն: Նա ասաց,

որ միակ բանը, որի պատճառով հեռախոսը չի անջատում, դա մեր վաղեմի ընկերությունն է: Ու դա է միակ պատճառը, որ ես շարունակում եմ շնչել: Իմ փոխարեն ցանկացածին պարզապես կսպաներ: Գնալով խոսակցությունը ավելի էր սրվում: Ու քանի դեռ չէին սկսվել երկկողմանի «ահաբեկչությունները», երկուսս էլ խոսակցությունը ավարտին հասցրեցինք: Ինչևէ:

Վաչեի ձայնի մեջ ինչպես ջղայնություն, այնպես էլ հիասթափություն կար: Ես նրան չէի ճանաչում: Կարծես նրան Էմիլի Ռոուզի չարքերն էին հյուրընկալել: Այն, որ նա դերասան լինելուց հեռու է, դա անժխտելի փաստ է: Երրորդ դասարանի հանդեսի ժամանակ նրան պարզապես մի քառատող էին տվել: Մնացածը մոտավորապես 5-6 դեր էին խաղում, իսկ նա պարզապես փոքրիկ քառատող էր արտասանում: Գրողը տանի, իմ մանկության ընկերը հիմարություններ էր խոսում: Այո, մենք հանդիպել էինք Վաչեի հետ, բայց դա շաբաթ օրն է եղել, մենք, ինչպես միշտ, խաղում էինք մեր սիրելի խաղը: Այդ օրը մի բաժակ թեյ խմեցի, իմիջիայլոց, շատ եմ սիրում Վաչեի մոր պատրաստած թեյը: Ինչ-որ գաղտնի բան գիտի նա հաստատ: Դա երևի վերջին թեյն էր, որ խմեցի իրենց տանը, թեյի հետ մի կտոր թխվածք կերանք ու վերջ... ես տուն եկա... վերջ: Վերջ:

Հեռախոսը դրեցի: Մի քանի րոպե անց Վաչեն զանգեց ինձ, մի քիչ հանգստացած էր ու ասաց, «Համ, կամ Համլետ... լսի՛ր ինձ, գնա հոգեբանի մոտ, դու դրա կարիքը, իրոք, ունես: Լավ հոգեբան է, հորս ընկերն է, քեզ հաստատ կօգնի, ախր դու իմ

ներկայությամբ իրեն զանգեցիր ու պայմանավորվեցիր, ինչո՞ւ չգնացիր հանդիպմանը»: Դա է՛լ ավելի մեծ անակնկալ էր ինձ համար. «Վաչ, ի՞նչ ես դու խոսում: Ես ոչ մի հոգեբանի չեմ զանգել»: Ինքն էլ իրենը պնդեց, ասաց, որ զանգել եմ, ու հիշում է, որ հեռախոսահամարը պահեցի բաճկոնիս ծոցագրպանում: Անջատեցի հեռախոսս, գնացի ննջասենյակ, որտեղ դրված էր բաճկոնս, վերցրեցի ու պարզեցի, որ ծոցագրպանս դատարկ է: Ետ զանգեցի Վաչեին: Բառ առ բառ հիշում եմ, թե ինչ ասացի նրան. «Վա՛չ, չգիտեմ ինչ մոտիվով ես դու այսպիսի հեքիաթներ հորինում, չգիտեմ, թե ինչու ես փորձում կործանել մեր այսքան տարվա ընկերությունը, բայց ամեն դեպքում դա քո գործն է: Ես ընդամենը մեկ բան կասեմ...» ու չհասցրեցի ավարտել միտքս՝ Վաչեն առանց բառ իսկ ասելու հեռախոսը կախեց: Վաչեի մոտ սովորություն է հեռախոս կախելը: Ընդ որում՝ եթե չկախեր, սկսելու էր հայհոյել: Ես լավ գիտեմ իրեն: Ես ետ չզանգեցի: Հագա ավելի տաք բաճկոններիցս մեկը ու դուրս եկա տնից:

Մաթեմատիկայի դասախոսության ժամանակ գրիչս էի ուզում գտնել, որպեսզի գրառումներ կատարեի տետրումս: Սկսեցի գրպաններիս մեջ քչփորել, ու երբ ձեռքս տարա այդ բաճկոնիս ծոցագրպանը, մի թղթի կտոր հայտնաբերեցի: Վրան հեռախոսահամար էր գրված, տակն էլ՝ «Վլադիկ Սամվելովիչ. հոգեբան»:

Դասախոսից թույլտվություն վերցրեցի մի րոպեով դուրս գալու համար: Դուրս եկա: Վաչեի հետ տասը տարի նույն դասարանից ենք եղել, ես իր ձեռագիրը կարող եմ տարբերել հազարավոր

ձեռագրերի միջից: Եվ հայերենից թույլ լինելը նույնպես իրեն մատնում է. միայն այն, որ «հոգեբանը» բառը գրված էր «օ» տառով, իսկ մեծատառ «Վ» տառի ներքևի պոչիկը ձգված էր ամբողջ թղթիկի երկայնքով, արդեն իսկ պարզ էր, որ ձեռագիրը Վաչեինն է:

Անկախ ամեն ինչից, ես մի բան գիտեմ. Վաչեն իսկական ընկեր է: Եթե ինչ-որ բան ասում է, ուրեմն մի բան կա: Այս թուղթն էլ ինձ ապացույց: Որոշեցի թղթի վրա գրված համարի տիրոջը՝ բժիշկ Վլադիկ Սամվելովիչին զանգահարել ու իր հետ պայմանավորվել: Հասկացա, որ, ամենայն հավանականությամբ, այդ մարդու անունը Վլադ է, և Վաչեն նրա անունը գրել է Վլադիկ, որովհետև, հնարավոր է՝ ավելի մոտիկից գիտեր այդ մարդուն: Խոսելուց էլ իրեն դիմեցի որպես Վլադ, այլ ոչ թե՝ Վլադիկ: Իսկ դասերից հետո էլ գնացի առաջին հանդիպմանը: Ինչևէ:

Այսօր արդեն չորրորդն էր: Այս ամենը ես Վլադ Սամվելովիչին այդպես էլ չպատմեցի: Ուղղակի կարճ ասացի, որ ընկերս է տվել իր համարը, և փորձեցի շրջանցել խոսակցությունը:

Սկսեց հարցեր տալ: Այսօր ամեն ինչ ուղղված էր իմ դեմ: Մի թուղթ տվեց, վրան գծած էին երկրաչափական տարբեր մարմիններ՝ եռանկյունի, քառակուսի, շրջանագիծ, ասաց, որ ընտրեմ մի երկրաչափական մարմին: Զարմացա: Սա արդեն նման էր մի չստացված կոմեդիայի: Ընտրեցի եռանկյունը: Սպասում էի պատասխանի, թե արդյոք լավ է, որ ընտրեցի կոնկրետ այդ մարմինը: Բայց Վլադ Սամվելովիչը բան չասաց, նա ինքն իր

մեջ որոշ եզրակացություններ կատարեց: Ըստ իս, իրականում կարիք չկար ոչ մի եզրակացության: Նա պարզապես «պատժում» էր ինձ: Այսօրվա հանդիպումը, առհասարակ, բավականին լարված անցավ: Չեմ ուզում նույնիսկ հիշել այն:

Վերջում, երբ արդեն պետք է հաջողություն մաղթեի ու գնայի, որոշեցի ամեն դեպքում ներողություն խնդրել: Ու խնդրեցի: Առանց երկար-բարակ խոսելու, ասացի. «Կներեք ինձ, Վլադ Սամվելովիչ, գեղեցիկ բան չստացվեց»: Նա, բնականաբար, հասկացավ, թե ինչի մասին է խոսքը: Բայց ամեն դեպքում ասաց, որ դրա կարիքը չկա: Ինչնէ:

Ընդհանուր առմամբ օրը նույնպես տհաճ էր: Մի շաբաթ է անցել, ինչ Վաչեից լուր չունեմ: Շփումս սահմանափակվում է կուրսեցիներիս հետ:

Երեկ գնացի մամային տեսակցության, համեղ պելմենի էր պատրաստել, կերա ու ետ եկա: Տանն էլ վերևի հարևանը չէր թողնում քնեի: Նորից իր անտանելի երաժշտությունն էր միացրել՝ դրըխկ-շրըխկ: Ատում եմ ես այդ ռոքը:

Կատուս էլ բավականին խորը քնած է, ու չեմ էլ փորձի արթնացնել:

Է՛հհ, Քի՛թթի, Քի՛թթի, եթե դու չլինեիր, ես ինձ լրիվ մեկուսացած կզգայի մոլորակից: Հիմա իմ միակ ընկերը դու ես... և ուրիշ ո՛չ մեկը: Քեզնից թանկ էլ ոչ ոք չունեմ: Բոլորին կորցնում եմ... Մա՛մ... Գնամ զանգեմ իմ ամենաթանկ մարդուն՝ մամային, այսօր չեմ խոսել հետը: Բարի գիշեր մաղթեմ իրեն ու քնեմ:

Մինչ ուրբաթ, Համ ջան:

Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 5

«ազդանշան»

Ձայնագրություն համար հինգերորդ: Նոյեմբերի 23:
Ուրբաթ: 2012 թվական: 17:12

Եթե մեռնե՜լ...
Թող որ մեռնեմ
հուր-կայծակից՝
Միանգամից,
մի վայրկյանում,
հանկարծակի
Այնքա՜ն արդար,
խղճիս ձայնին միշտ ունկնդիր,
Որ՝ համաձայն բիբլիական հին լեգենդի՝
Հանգիստ անցնեմ և ասեղի նեղլիկ ծակից...

«կրակայրիչի ձայն» Եթե մեռնե՜լ...
«ծուխը թոքերն է քաշում»
Բայց... առայժմ ապրել է պետք:

Ողջույն, հարգելի ունկնդիրներ, եթերում «Ամունքի երեկո» ռադիոհաղորդաշարն է և Ձեր

սիրելի ռադիոհաղորդավար, Ձեր խոնարհ ծառա Համլետ Սարգսյանը: Այսօր երեկոն կնվիրենք հանճարեղ, մեծանուն գրող Պարույր Սևակին: Հաղորդման ընթացքում կանդրադառնամ նրան, թե ինչպես էր հայտնի բանաստեղծը շատ հաճախ խմում, հարբում և անմիջապես իր պատշգամբից միզում անցորդների վրա: Թե՞ դա Չարենցն էր: Լավ: Գովազդից վերադառնալուց անմիջապես հետո մենք կիմանանք, թե ով ուներ այդպիսի սովորություն. Չարե՞նցը, թե՞ Սևակը: Իսկ այժմ մեր եթերում գովազդ «կատվի մլավոց»:

- Գնա գրողի ծոցը, Քի՛թթի:

Դուք երբևէ գնե՞լ եք «Whiskas», ո՞չ: Դուք միգուցե չունե՞ք կատու, շնորհավորում եմ: Քանզի ես ունեմ մի կատու, որին պահում եմ զուտ մենակությունս ծածկելու համար: Եթե դուք էլ եք միայնակ, ես պատրաստ եմ իմ կատվին Ձեզ նվիրել. նա ինձ հաճախ է նյարդայնացնում և, ընդհանուր առմամբ, ես ատում եմ նրան «կատվի մլավոց»:

Մի վայրկյան սրա կաշվից բռնեմ, տանեմ, փակեմ զուգարանում «կատվի ծանր մլավոց», «ոտնաքայլեր», «դռան շրխկոց», «ոտնաքայլեր»:

Ահա շարունակում ենք շոուն: Վլադիկ Սամվելովիչի հզոր շոուն, որտեղ ամեն գրողի տարած երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին պետք է ինքս ինձ ձայնագրեմ: Ում է պետք այս հիմարությունը: Իմիջիայլոց, այսօր մեր սիրելի Վլադիկ պապիկը հանել էր խալաթը, հանել էր պատին փակցված նկարները, բայց, ուշադրությու՛ն, նույն

տեղում էր թողել այն գրադարակը, որի վրա դրված էին իր պարգևները:

Նախորդ հանդիպման օրը, չգիտեմ ինչու, ընկճված էի: Խիղճս տանջում էր նրա համար, որ բժշկին հարցրել եմ, թե արդյոք նա համապատասխան կրթություն ունի, թե ոչ: Բայց, գրողը տանի, հիմա հասկանում եմ, որ շատ էլ ճիշտ եմ արել: Ես այդ մարդուն փող եմ տալիս, մի՞թե իրավունք չունեմ իմանալու, թե ով է նա: Անցյալ անգամ, գնալուցս առաջ, հարցրեց, արդյոք սիրում եմ պոկեր խաղը, ասացի, որ անտարբեր եմ այդ խաղի նկատմամբ, բայց խաղի կանոններին քաջ ծանոթ եմ և նույնիսկ փորձ ունեմ: Այս անգամ մեր ցնդած բժիշկը իր հետ խաղաթղթեր էր բերել՝ առաջարկելով պոկեր խաղալ: Մոտս ընդամենը 4000 դրամ կար: Հարյուր դրամ պահեցի տուն վերադառնալու համար և որոշեցի մնացած գումարով խաղալ... Ա՜խ, բժիշկ, բժիշկ: Նա փորձում էր ինձանից մի քանի կոպեկ ավել գումար կորզել: Մոտ 20 րոպե խաղացինք, մոտս ֆլեշ էր, մտածեց՝ բլեֆ էի անում: Հիմա մոտս 7500 դրամ կա և գումարած մի տուփ ծխախոտ: Այն տվեց բժիշկը՝ ավել գումար չունենալու պատճառով: Դե, մեր բժիշկը մեծ գումարներով է շրջում: Խեղճը ավել 500 դրամանոց չգտավ: Նա «Camel» է ծխում, ես ավելի շատ Winston եմ սիրում Բայց դե հաղթած ծխախոտը ուրիշ է, նույնիսկ եթե այն «Camel» է: «հազի ձայն» Վլադիկը զարմացած էր. պարտվել չի սիրում, հավանաբար: Խաղից հետո առաջացած մթնոլորտը ցրելու կամ պարզապես ցրվելու համար սկսեց պատմել իր կողմից սիրված անիմաստ անեկդոտները: Ուրեմն, մի տղա

աշխատանքի գնալիս կանգառում մի ցածրահասակ ու կլոր դեմքով պատանու է միշտ նկատում՝ ամեն անգամ կարկանդակ ուտելիս: Մի օր որոշում է հարցնել, թե ինչու է միշտ կարկանդակ ուտում: Տղան էլ թե՝ բա էժան է, դրա համար էլ կարկանդակ է ուտում: Տղամարդը, ի պատասխան, տղային ասում է. «Այդպես լավ չէ, լուցկի՛ կեր»: Հարգելի ռադիոլսող բարեկամներ, կարո՞ղ եք ինձ՝ հումորից բոլորովին զուրկ անձնավորությանս, բացատրել այս խորը փիլիսոփայական անեկդոտի իմաստը: Չդիմացա ու ասացի. «Վլադ Սամվելովիչ, ճիշտն ասած՝ այդքան էլ ծիծաղելի չէր»: Նա այդ ժամանակ ավելի խորը հիասթափության մեջ ընկավ: Այո՛, ես ազդեցի բժշկի վրա: Այն էլ ի՛նչ բժշկի վրա՝ հոգեբանի: Այն էլ ի՛նչ հոգեբանի՝ Լոմոնոսովի անվան համալսարանն ավարտած հոգեբանի:

Դրանից քիչ անց հարցրեց իմ ուսումնական կյանքից, ընդունելությունից: Ես էլ սկսեցի պատմելը:

2007 թվականն էր, մաթեմատիկա ու ֆիզիկա էի պարապում պետական համալսարան ընդունվելու համար: Ճիշտն ասած, այդ ժամանակահատվածում ավելի շատ հետաքրքրված էի համակարգչային խաղերով, քան դասագրքերով: Տղերքով հավաքվում էինք ինտերնետ ակումբներում ու խաղում լեգենդար «Medal»-ը: Ես ու Վաչեն այնպես էինք հմտացել այդ խաղի մեջ, որ երկուսով խաղում էինք յոթ կամ ութ հոգու դեմ, արդյունքում էլ՝ հաղթում:

Ֆուտբոլ: Ֆուտբոլը մեզնից անբաժան էր դեռ մանկուց: Շաբաթը երեք կամ չորս անգամ ֆուտբոլի պարապմունքների էինք գնում: Ֆուտբոլը իմ

տարերքն էր այդ տարիներին: Մաթեմից, ճիշտն ասած, այդքան էլ ուժեղ չէի, բայց ֆիզիկայից մի բան ստացվում էր: Շատ էի սիրում օպտիկա բաժինը: Հատկապես լույսի դիսպերսիան: Հիմա էլ նույնը անցնում ենք համալսարանում, ուղղակի ավելի խորացված: Մի խոսքով, ֆիզիկայի դասերին հաճույքով եմ գնում:

Արդեն գարնանը հայտնի դարձան քննության օրերը: Ամռան սկզբին, երբ արդեն սկսվեցին քննությունները, բավական հանգիստ հոգեվիճակում էի: Երևի նրանից էր, որ քիչ բան գիտեի, լավ չէի պարապել: Մաման ամբողջ օրը վրաս խոսում էր, որ պարապեմ, բայց ինձ համար միևնույն էր: Ճիշտն ասած՝ չեմ էլ փոշմանում, դաս անել միշտ էլ կհասցնեմ: Ասենք, հիմա էլ կարող եմ մտքիս դնել ու մաթեմատիկա պարապել, բայց դասից փախչելն ու «Medal» խաղալն այլևս անհնարին կլինեին: Դրանք հրաշալի օրեր էին: Միգուցե կարող էի ավելի խելացի գտնվել՝ համատեղելով զվարճանքն ու դասերը: Բայց ետ վերադառնալու համար արդեն բավական ուշ է: Չնայած երբեք ուշ չէ... չէ՛, չէ՛, մեկ-մեկ, իրոք, ուշ է: Հիմա արդեն անհնար է նաև Վաչեի հետ ֆուտբոլ խաղալը: Վաչեն իրեն սխալ պահեց: Վաչեն իմ մանկության ընկերն է, և չեմ կարող բացատրել իր այդ արարքը:

Ինքն էլ էր ինձ պես «պարապում» ընդունելության քննությունների ժամանակ: Դրա համար երկուսս էլ վճարովի ընդունվեցինք և առանց տարկետման: 2008-ին բանակ տարան, 2010-ին վերադարձա: Մինչ օրս շարունակում եմ ուսումը: Ուսման մեջ աչքի չեմ ընկել: Երկրորդ կուրսում նույնիսկ

լիկվիդներ եմ ունեցել: Բանակից նոր էի եկել, ամեն ինչ խորթ էր ինձ՝ նոր կուրսեցիներ, նոր դասախոսներ: Բոլորը ինձնից տարիքով փոքր էին, ընդհանուր հետաքրքրություններն էլ՝ քիչ: Ես էլ ավելի շատ մտահոգված էի աշխատանք փնտրելով: Իսկ լիկվիդները մի կերպ եմ ստացել. մեկը ծանոթի միջոցով ստացա, մյուսը՝ դասախոսին խնդրեցի՝ մի քիչ պատասխանելով, երրորդն էլ՝ քչից-շատից սովորել էի:

Երրորդ կուրսում լիվկիդ չկար, միայն շատ բացականեր ունեի: Չորրորդն էլ շուտով կավարտեմ ու կսկսեմ հետաքրքիր ինչ-որ բանով զբաղվել: Բայց ինչո՞վ: Ես մասնագիտությամբ, մեկ է, հեռուն չեմ գնա: Մագիստրատուրայում շարունակելու համար չեմ էլ պարապում, ոչ էլ հույս ունեմ: Բայց ուսումը թերի թողնելը նույնպես լուրջ չէ: Կարելի է նկարելով զբաղվել: Իմիջիայլոց, այսօր նկարածս վերջին նկարի մեջ որոշ շտկումներ մտցրեցի: Տեղ-տեղ չէի գունավորել, բացթողումներս ներկեցի: Գիշերը հինգին արթնացա ու այլևս չկարողացա քնել: Մինչև ութը նկարել եմ, հետո սուրճ եմ խմել մեկ հատ կոնֆետով: Ես քաղցր միայն սուրճի հետ եմ ուտում:

Գիշերը մղձավանջային էր: Դրա համար քնել չեմ կարողացել:

Վաչեի տանն էի, գոռգոռում էի ու իրենց տան կահույքն էի կոտրում: Հետո սկսեցի Վաչեին ծեծել ու պատուհանից թռա դուրս: Սուպերմենի պես սկսեցի քաղաքով սավառնել: Ինձ անպարտելի էի զգում: Գիշերը քնից վեր թռա, երեքն անց կլիներ: Քնել չէր ստացվում: Այնպիսի տպավորություն էր,

կարծես մեկը մոտակայքում ինձ է հետևում ու սպասում, թե երբ եմ քնելու, որպեսզի հարձակվի վրաս: Քունս տանում էր, բայց չէի կարողանում կենտրոնանալ ու քնել: Աչքերս փակելու պահին, ինձ թվում էր, որ մեկը կբռնի ոտքիցս կամ գերբնական ինչ-որ մեկը կգա ինձ ոչնչացնելու, ես էլ չեմ կարողանալու ազատվել քնից ու փրկվել: Մարմինս անզգա էր, աչքերս՝ բաց: Տագնապ էի զգում: Կարծես ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է: Ինչ-որ տեղը իմ սենյակն էր, ինչ-որ բանը՝ իմ մեջ:

«կրակայրիչի ձայն» «ծուխը քաշում է թոքերը»

Հետո սկսեցի ձայներ լսել: Ավելի ճիշտ՝ դրանք ձայներ չէին, աղմուկ էր: Քիթթին իմ սենյակում էր քնել, այդ անպիտան կատվի փորի ձայները խառնվեցին այդ անհասկանալի աղմուկի հետ, ու սիրտս սկսեց էլ ավելի արագ խփել: Դրան հաջորդեցին մտքերը: Մտքեր այն մասին, որ ես մենակ եմ, որ այս բնակարանում ես մենակ եմ, որ նույնիսկ մայրս է լքել այս տունը: Բայց ես չեմ կարող գնալ ու ապրել տատիկիս տանը: Չնայած այս ամենին, այս տան մեջ ավելի համարավետ եմ ինձ զգում: Մտքերը գնալով ավելի էին խորանում. հիշեցի անցյալում մնացած մարդկանց, ում այժմ կորցրել եմ: Հետո հիշեցի, որ արդեն գնում եմ հոգեբանի մոտ՝ սպիտակ խալաթով Վլադիկի մոտ: Հասկացա, որ եթե գնում եմ, արդեն չորրորդ հանդիպումն է կայացել, ուրեմն, իրոք, մի խնդիր ունեմ, ուրեմն ես հիվանդ եմ: Ամո՛թ: Սրա մասին միայն մայրս գիտի ու Վաչեն, չնայած Վաչեին դեռ չեմ ասել, որ գնում եմ հոգեբանի մոտ, պարզապես հեռախոսահամարը նա է տվել: Երևի առանց իմ ասելու էլ իմացած

կլինի: Մտքերս ինձ դրդում էին ինքնապաշտպանության: Արթնացա ու անցա կողքի սենյակը: Տանը ահավոր ցուրտ էր, սառում էի: Գետնին Քիթթիի կերակրի ամանն էր դրված. չնկատեցի, ոտքս կպավ դրան ու ընկա: Լույսը միացրեցի ու շպրտեցի այդ զզվելի ամանը, որն էլ կպավ պահարաններից մեկին ու թեթևակի խազեց այն: Մտա կողքի սենյակ: Մահճակալի տակ մի սեյֆ կա: Հորս սեյֆն էր, ներսում հորս ատրճանակը՝ Colt «Python», թեպետ փամփուշտ չկար մեջը: Այս ատրճանակը հորս առաջին զենքն է եղել. այն վաղուց էր նվեր ստացել իր պապից, տասը կամ տասներկու տարեկանում, եթե չեմ սխալվում: Այդ տարիքը բավականին շուտ է նման խաղալիք ունենալու համար: Իսկական ատրճանակ՝ 375 մագնում կալիբրի Colt «Python»: Բացեցի ատրճանակի խանութը: Դատարկ էր: Վեց փամփուշտի տեղ ունի այն: Մտքումս այդ պահին ռուսական պտտախաղ խաղալու ցանկություն առաջացավ: Այդ պահին ամենաշատը համարձակություն ու ազարտ էի ուզում: Ինձ վաղվա օրը չէր հետաքրքրում, ինչպես և այս սատանայական մոլորակը: Իմիջիայլոց, բժշկի հետ պոկեր խաղալուց հետո այդ զգացողությունները կորան: Այնպիսի տպավորություն էր, կարծես բժիշկը զգաց, որ դրա կարիքն ունեմ:

«ուժեղ հազի ձայն» Մահճակալի տակ լոտոյի մի տուփ կար, սովորաբար փամփուշտները այդտեղ էր հայրս պահում: Ես այդ փոշոտված տուփին տարիներով չէի կպել, համենայն դեպս բանակից հետո հաստատ չէի կպել: Բացեցի այն, ու կարծես անակնկալ լիներ ճակատագրի կողմից՝ ընդամենը

մեկ փամփուշտ: Դրեցի այն ատրճանակի խանութի մեջ ու պտտեցրի այն: Վզիս պահեցի, հետո ատրճանակի գլխիկը ուղղեցի քունքիս, հետո դարձյալ մոտեցրի վզիս, իսկ մատս շարունակում էր մնալ ձգանի վրա: Մտքերս ավելի էին գնացել հեռուն: Աչքս ընկավ է՛լ ավելի դեպրեսիվ զգացողություններ առաջացնող նկարիս՝ այգի, ճղրտված պարաններ, հեռացող աղջիկ: Նայեցի նկարիս, ավելի ամուր բռնեցի ատրճանակը ու հայացքս նորից ուղղեցի նկարին: Նկատեցի, որ որոշ մասերում գունավորումը չեմ ավարտել: Հասկացա՝ որքան էլ որ մենակ եմ, որքան էլ որ ծանր է այս ամենը, որքան էլ որ ուզում եմ լքել կյանքը, բայց, այնուամենայնիվ, ես դրան պատրաստ չեմ: Ես չեմ կարող մորս լրիվ մենակ թողնել, ես պետք է հասկանամ՝ ինչ է ինձ հետ կատարվում ու ես, գրողը տանի, պետք է գունավորեմ նկարիս այն հատվածները, որոնք չեմ հասցրել: Չնայեցի, թե խանութը պտտելուց հետո որտեղ կանգնեց փամփուշտը: Եթե կրակեի, դատարկ կգնա՞ր, թե՞... Ատրճանակը սեյֆի մեջ չդրեցի, այն պարզապես թողեցի գրասեղանի դարակներից մեկի մեջ: Փամփուշտը այդպես էլ մեջը թողեցի: Մնացածն արդեն ասացի՝ նկարեցի, սուրճ խմեցի ու գնացի դասի:

«կրակայրիչի ձայն» «հազում է» «ծուխը քաշում է թոքերը» Այսօր մի հետաքրքիր հանդիպում է տեղի ունեցել: Բելային եմ տեսել՝ այն մեր հարևանուհուն, ում հետ փոքր ժամանակ խաղում էինք: Տասը տարուց ավել է, ինչ ընտանիքով տեղափոխվել էին, եկել էր Իռեն տատիկին տեսակցության: Տատիկը ծանր տոպրակներով շուկայից գալիս էր տուն,

տեսնելուն պես առաջարկեցի օգնել, ինքն էլ այնքան ջերմ ու ի սրտե առաջարկեց բարձրանալ իրենց տուն, որ մերժել չկարողացա: Սուրճ առաջարկեց, սկսեցի քաղաքավարի մերժել, բայց այն պահից հետո, երբ տեսա միջանցքում կանգնած Բելային, միանգամից համաձայնեցի: Բանակից հետ գալուց հետո չէի տեսել այդ աղջկան: Ահավոր փոխվել էր: Ճիշտ է, կոլոտ էր, բայց գեղեցիկ էր: Մազերի գույնը չէր փոխվել, նույն խուճուճիկ ու շեկլիկն էր: Ձախ այտին փոսիկ էր ընդգծվում, երբ ծիծաղում էր: Այն շատ հետաքրքիր հմայք էր հաղորդում աղջկա գեղեցկությանը: Աշխույժ էր շատ: Բայց մի քանի բան խոսելուց հետո երկուսս էլ զգացինք, որ մեզ կապող թեմաների երկարությունը չի գերազանցում տասը րոպեն, վերջիվերջո, այն գլամուրն ու գոռոզությունը, որը փոքր տարիքում կար, շարունակեց մնալ մինչ օրս: Մնացած խոսակցությունները արդեն ձևական բնույթ կրեցին՝ բա ուրիշ, մամա՞ն ինչպես է, կբարևես, լսել եմ՝ կատու ես պահում, հեռախոսդ ի՞նչ մոդելի է, ֆեյսբուքում կա՞ս...

Եվ վերջապես, երբ որոշեցի շնորհակալություն հայտնելու գնալ, Իռեն տատիկը մոտեցավ ինձ. նրա դեմքից հասկացվում էր, որ ինչ-որ բան է հիշել ու անհանգստացած՝ հարցնել է ուզում: Ասաց, որ գիշերը ձայներ է լսել: Միանգամից հասկացա՝ ինչ նկատի ունի. Քիթթիի ամանը, երբ ուշ գիշերը շպրտեցի: Այդ ձայնը, իրոք, բարձր էր: Բայց քանի որ չէի ուզում խելագարի տպավորություն թողնել, ասացի՝ չեմ լսել, և որ այդ ձայնը իմ բնակարանից չէր: Դե ի՞նչ կմտածեն հարևանները: Համլետը գիշերը տանը հրավառություններ է անում սեփական

կատվի ամանով: Այսօր կիմանար Իռեն տատիկը, վաղը՝ մեր կողքի հարևանը, իսկ մի շաբաթ հետո՝ ամբողջ շենքը:

«հազի ձայն» Այսպիսի բաներ: Գնամ՝ խաղ խաղամ կամ էլ դասախոսությունները կարդամ: Վաղը գործնականին միգուցե պատասխանեմ, հնարավոր է նաև բալերս էլ բարձրացնեմ... Երևի գնամ կարդամ: «հազի ձայն»

Եթե մեռնել...
Թող սպանվե՛մ,
թող կործանվե՛մ
Այնպես ապրած և բան արած,
Որ նորածին մանուկների տեսքով նորից
Վերածնվեմ,
Իմ անունո՛վ կնքեն նրանց...
Եթե գամվել՝ փարոսի՛ պես,
Արնաքամվել՝ հերոսի՛ պես
«AC/DC խմբի Back in Black երգի ձայնը խլացված»
Ու քրքրվել՝
Դրոշի՛ պես...

Հարևանս նորից ծանր ռոք է լսում: Վերևիս հարևան Արտյոմը կլինի: Գնամ խնդրեմ, թող բարձրացնի ձայնը «ծիծաղում է», այս մի երգը ես շատ եմ սիրում Ո՞նց էր անունը... Է՛հ... Չեմ հիշում «Supematural»-ում եմ լսել: AC/DC խումբն է: Ախ հա՛: Սա Back in black-ն է: Ամեն դեպքում զանգեմ Արտյոմից հարցնեմ, ինտերնետում գտնեմ ու լսեմ այն:

Իսկ այսօր այսքանը, հետևեք մեր հաղորդման կրկնություններին շաբաթ օրը 14:98-ին և կիրակի գիշերը 45-ն անց... Նոր թողարկումը եթեր

կհեռարձակվի երկուշաբթի օրը: Ձեզ հետ Համլետն էր: Ցտեսություն:

Եթե մեռնել... Բայց առայժմ ապրել է պետք:

«հեռախոսի ձայն» Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 6

«ազդանշան»

Ձայնագրություն վեցերորդ։ Նոյեմբերի 26։
Երկուշաբթի։ 2012 թվական։ 18:18

Այսօր Վլադ Սամվելովիչը զանգեց ու ասաց, որ հանդիպումը տեղի չի ունենա իր առողջական խնդիրների պատճառով։ Ծխելու հետևանքով իր մոտ կատարակտ է ձևավորվել։ Դա աչքի հետ կապված ինչ-որ հիվանդություն է։ Վլադ Սամվելովիչը միշտ ակնոցով էր, բայց մտքովս չէր անցնում, որ դա որևէ լուրջ խնդրի հետևանք է։ Ճիշտ է, ես չգիտեմ, թե ծխելը ինչպես կարող է վնասել տեսողությունը, բայց, ամեն դեպքում, չեմ հասկանում՝ ինչպես կարող ես ինքդ քեզ սպանել հանուն ծխախոտի։ Այն էլ՝ երբ դու ինքդ բժիշկ ես և ավելի լավ ես հասկանում ծխելու հետևանքները, քան որևիցե մեկը։ Ինչևէ։

Չեմ հիշում բժշկական այն տերմինները, որոնք օգտագործեց Վլադ Սամվելովիչը հեռախոսազանգի ժամանակ, բացատրելու, թե որքանով է ծանր

իր վիճակը: Բարեբախտաբար, կյանքին վտանգ չի սպառնում, բայց փոխարենը սպառնում է ամբողջովին կուրանալու վտանգ: Փաստորեն ինքն էլ ունի իր բժիշկը:

Ամեն դեպքում բժշկին առողջություն մաղթեցի: Ճիշտն ասած՝ մի փոքր հանգստացա, քանի որ ես էլ չէի ուզում այսօր գնալ հանդիպման և շատ հնարավոր է, որ ես ինքս զանգեի ու խնդրեի հետաձգել հանդիպումը: Առանց այդ էլ վաղը ծանր օր է ինձ սպասվում: Ծանր օր է սպասվում ինձ վաղը: «շունչ է քաշում» Վաղը կլրանա հորս մահվան տասնամյակը:

Որքան սարսափելի է այս մենակությունը: Պատեր, դատարկություն և ոչ մի շունչ: Ես... ես ու մենակ ես:

Մեկ-մեկ հարցնում եմ Աստծուն, թե ինչու խլեց ինձնից իմ ամենաթանկ էակին՝ հորս: Հայրս իմ հպարտությունն էր, իմ ամեն ինչն էր: Հորս անունը Անդրանիկ էր: Երբ 16 տարեկան էր, ինքնակամ մեկնեց ծառայության ու ծառայեց մինչև այն պահը, երբ սիրտը կանգ առավ: Իմ համար այս ամենը հիշելը բավական ծանր է, այն էլ այս պահին: Ինչևէ...

Ծառայությունը չորս տարի տևեց: 20 տարեկանում ավարտեց պարտադիր ծառայությունը և ետ վերադարձավ տուն: Կարճ ժամանակ անց, գիտակցելով, որ չի կարող ինքն իրեն գտնել այդ սահմաններից դուրս, դարձյալ ետ վերադարձավ ծառայության:

Ծառայության ընթացքում հասցրել էր հասկանալ կյանքի համն ու հոտը: Ընդամենը մի քանի տարում, բավական երիտասարդ տարիքում

տեսել էր այնպիսի բաներ, որ մարդիկ ամբողջ կյանքի ընթացքում չեն հասցնում տեսնել: Ու Աստված տա, որ ոչ ոք տեսնելու առիթներ չունենա: Իր աչքի առաջ ընկերոջն էին սպանել, նույնիսկ իրեն մեկ անգամ թշնամին էր վիրավորել: Այդ պատմությունը լավ եմ հիշում: Առաջին անգամ, երբ սահմանին կից ծառայության անցավ, կանոններին ծանոթ չէր: Միամիտ էր շատ, հանեց ծխախոտը ու վառեց: Հակառակորդը ծխախոտի լույսից բռնեց հորս դիրքը ու կրակեց: Բարեբախտաբար ծուռ կրակեց, ու հորս միայն ձեռքը վնասվեց, որը մոտ կես տարվա բուժումից հետո նոր վերականգնվեց: Աջ ձեռքն էր վիրավորվել, հայրս չէր կարողանում այդ կես տարվա մեջ ոչ մի կերպ օգտագործել այն:

24-25 տարեկանում ծանոթացել է մորս հետ: Մորս խոսքերով՝ հանդիպումը շատ զվարճալի է եղել: Հորս ընկերոջ ծնունդն էր, որտեղ հրավիրված էին և՛ հայրս, և՛ մայրս: Այդ ժամանակ նրանք իրար չէին ճանաչում: Հայրս և իր ընկերներից ևս երեք հոգի սեղանի շուրջ նստած բլոտ էին խաղում: Խաղում պարտվողները պետք է մոտենային աղջիկներից մեկին և լուրջ տոնայնությամբ առաջարկություն անեին: Բարեբախտաբար, հայրս պարտվել է այդ խաղում: Հայրս չի կարողացել մոտենալ աղջկան, քանի որ առանց պարտվելու էլ արդեն իսկ անտարբեր չէր նրա նկատմամբ: Իսկ ժամանակի ընթացքում սովորական տղայական գրազը վերածվել է իսկական սիրո: Գրազից չորս օր անց հայրս գնացել է մորս տան մոտ ու դիմավորել նրան ծաղիկներով: Դե, սկզբից բնականաբար մայրս մերժել է: Ճիշտն ասած՝ այդ շրջանում հայրս էլ դեռ

լուրջ տրամադրված չէր: Այսինքն՝ տրամադրված չէր դեպի ամուսնություն տանող հարաբերություններ զարգացնել: Մի տարի վազվզոցներից հետո վերջապես միացան: Մանրամասներին այդքան էլ ծանոթ չեմ: Բայց որ ամուսնացան, դա հաստատ է: Նաև... Ինչևէ:

Մայրս հորս մասին պատմում էր, երբ ինձ պատրաստվում էին բանակ տանել, երբ հայրս արդեն չկար: Ես ընդամենը տասներկու տարեկան էի, երբ հայրս մահացավ: Իսկ վաղ տարիքում ո՛չ մայրս, և ո՛չ էլ հայրս իրենց մասին չէին պատմում: Նրանք մտածում էին, որ դեռ կհասցնեն: Կյանքը առաջ էր գնում: Իսկ մեր ընտանիքը լեփ-լեցուն կյանքով էր ապրում:

1991-ին, ՀՀ փրկարարական ծառայության բացվելուն պես, հայրս այնտեղ անցավ աշխատանքի: 1998-ին ստացավ գեներալ-լեյտենանտի կոչում:

Ամեն օր և ամեն ժամ հայրս մարդկային կյանքեր էր փորձում փրկել: Մի քանի տասնյակ մարդկանց կյանք է փրկել և՛ ծառայության ընթացքում, և՛ աշխատանքի: Նրա շնորհիվ էր միայն, որ ես հանգիստ քնում էի, որովհետև գիտեի, որ տուն չի գալիս, որ ես ապահով լինեմ: Գիտեի, որ ինքն այն մարդկանցից է, ով ապահովում է մեր երկրի խաղաղությունը: Փոքր ժամանակ ես մտածում էի, որ ինքը հայտնի սուպերհերոս «Կապիտան Ամերիկան» է, ով տնից դուրս գալուց հետո հագնում է հերոսի իր կոստյումը ու սկսում կյանքեր փրկել: Հորս դա այնքան էլ դուր չէր գալիս, բայց ամեն ինչ փոխվեց, երբ ես սկսեցի իրեն «Կապիտան Արմենիա» անվանել: Այդ նոր սուպերհերոսի անվան

հետ նա հաշտվեց: Նա իմ մեջ հայրենասիրություն սերմանեց ու դաստիարակեց ինձ այդ ոգով:

«լռություն» Ինձ համար ահավոր ցավալի է հորս նկարը պատից կախված տեսնել: Նա ժամանակին իր կյանքն է տվել ուրիշների համար: Սակայն նրա մասին հիմա ոչ ոք չի հիշում:

Գրողը տանի, ինչու պետք է մարդասպանները, ավազակները, հանցագործները, ահաբեկիչները շարունակեն ապրել, իսկ հորս նման մարդիկ անիծյալ ինֆարկտի պատճառով հեռանան այս կյանքից: Ինչո՞ւ, տեր Աստված: Հայրս արժանի չէ՞ր ապրելու իր կյանքը: Ինչո՞ւ այդկերպ, այդքան անսպասելի, այդքան հանկարծակի:

2000 թվականի ամռանը, երբ տասը տարեկան էի, սովորական մի օր արթնացա, մտա հյուրասենյակ ու տեսա, թե ինչպես են ծնողներս վիճում: Մայրս բարկանում էր հորս վրա: Ասում էր՝ գործով այնքան է տարվել, որ արդեն սկսել է մոռանալ մեր գոյության մասին: Ասում էր՝ որդին հոր կարիք ունի, որ որպես հայր ինքը երբեք ինձ հետ չի խոսել, որ երբեք ինձ չի հարցրել, թե ինչպես են դասերս, որ երբեք ինձ չի տարել դասի: Հաճախ հայրս տուն չէր գալիս նույնիսկ, մնում էր արտակարգ իրավիճակների վարչությունում: Բայց ազատ ժամանակ ինձ հետ միշտ խոսում էր: Ճիշտ է, դա այնքան էլ հաճախ չէր լինում, բայց երբեք ինձ անուշադրության չէր մատնում: Փորձում էր համատեղել աշխատանքն ու ընտանիքը: Նա մեղավոր չէր, որ ընտրել էր այդչափ պատասխանատու աշխատանք, ու իր պաշտոնին բավականին լուրջ էր մոտենում: Մայրս այդ օրը չափից

շատ էր բարկացած, այնքան էր բարկացել, որ հորս առջև ընտանիքի ու աշխատանքի միջև ընտրություն կատարելու պայման դրեց՝ մեկնաբանելով, որ երկուսը համատեղել չի կարող: Ահավոր լարված մթնոլորտ էր: Հայրս այդ պահին ինձ նկատեց ու խնդրեց, որ դուրս գամ հյուրասենյակից: Ես չգնացի: Նա գոռաց ինձ վրա ու հրամայեց, որ անցնեմ իմ սենյակ: Ես վախեցա, հորիցս ամենաշատն էի վախենում: Իր ասածը ինձ համար օրենք էր, ինքը ինձ համար Աստված էր ու, անկախ ամեն ինչից, նա միշտ ճիշտ էր ինձ համար: Նա իմ կուռքն էր: Վազելով գնացի իմ սենյակ: Ահավոր հուզված էի:

Հայրս ընտրեց աշխատանքը: Մորիցս բաժանվեց՝ թողնելով այս տունը մեզ: Ես և մայրս շարունակեցինք ապրել այստեղ, իսկ հայրս տեղափոխվեց: Առաջ գոնե հորս առավոտները տեսնում էի, իսկ դրանից հետո շաբաթը մեկ անգամ գալիս էր ինձ տեսակցության: Այն էլ այն դեպքում, երբ աշխատանք չէր ունենում: Գործի բերումով նա հանգստյան օրերին նույնպես աշխատում էր:

2002 թվականի հունվարից հայրս իր առողջությունից սկսեց բողոքել: Սկզբում պարզապես սրտի ցավեր էր ունենում: Հետո սկսեց հաճախակի դժվար շնչել, ասես խեղդվեր շնչելիս: Ես այդ ժամանակ երեխա էի, Ամանորն էինք նշում: Ամանորը, Սուրբ Ծնունդը մենք միշտ միասին էինք նշում: Շամպայնը խմելուց հետո սկսեց խեղդվել, ահավոր վախեցել էի: Բարեբախտաբար, մոտ երկու րոպե հետո կարգավորվեց: Տագնապ սկսվեց: Տանը ես էի, մայրս և նա: Մայրս չգիտեր՝ ինչ անել: Հորս

մեջքին էր խփում ու գոռում, որ արագ հեռախոսը բերեմ: Ես էլ էի վախեցել: Այդ պահին սկսեցի մտածել, թե ինչ կլինի, եթե կորցնեմ հորս:

2002 թվականի օգոստոսին հորս առողջությունը կտրուկ վատացավ: Նրա մոտ սրտի հիվանդություն հայտնաբերվեց, որը արյան շրջանառության անբավարարություն էր առաջացրել: 2002 թվականի օգոստոսից հայրս ստիպված եղավ թողնել աշխատանքը ու վերադարձավ տուն: Մայրս այնքան էլ գրկաբաց չընդունեց նրան: Հանուն ինձ ու հաշվի առնելով նրա առողջությունը՝ համաձայնեց, որ հայրս մնա մեզ հետ մինչև բուժման ավարտը: Իր կյանքի վերջին չորս ամիսների ընթացքում հայրս փորձեց լրացնել տասներկու տարիների բացը...

Հայրս ինձ ամենաթանկ բաներն է սովորեցրել: Ինձ դասի էր տանում: Շախմատ խաղալ սովորեցրեց: 1991թ.-ի Շուշիի ազատագրման մարտերի մասին էր պատմում: Ցույց տվեց իր ատրճանակը, որն իրեն նվիրել էր իր պապը: Ես մինչև հիմա այն պահում եմ: Դրած է մահճակալիս տակ, տարիներով չեմ կպել այդ ատրճանակին, երևի վերջին անգամ բանակ գնալուց առաջ եմ այն տեսել: Colt «Python»:

Գիշերները մեր սիրելի սերիալն էր սկսվում՝ «Հզոր ռենջերները»: Ես գիտեի, որ հայրս այդ ֆիլմը չի սիրում, նա պարզապես ինձ համար է այն դիտում: Դե, 20-25 րոպե էր տևում ընդամենը: Ամեն մի գրողի տարած օր սպասում էի, թե երբ է գալու գիշերը, երբ է սկսվելու «Հզոր ռենջերների» նոր սերիան: Դա իմ ամենասիրելի պահն էր օրվա մեջ:

Մեր տուն հաճախ հորս ընկերներն էին գալիս: Սովորաբար ռազմական համազգեստով մարդիկ էին նրանք՝ կլոր դեմքով, թավ ձայնով, ինչպես բոլոր գեներալները: Բայց հայրս այդպիսին չէր: Նա բավական նիհար էր ու բարձրահասակ: Ինչպիսին ես եմ հիմա:

Վերջին չորս ամիսների ընթացքում հորս ու մորս հարաբերությունները այդպես էլ չկարգավորվեցին: Մայրս հիասթափված էր, բայց գնալով փափկում էր, սակայն շարունակում էր իրեն սառը պահել: Հայրս դեռ սիրում էր մորս, դա ես զգում էի: Հայրս սիրում էր ինձ: Նա ծխող էր, բայց այդ ժամանակահատվածում թողեց ծխելը, որպեսզի չվնասի առողջությանը, կարողանա հնարավորինս երկար մնալ մեզ հետ: Բժիշկն իրեն պարտադրել էր ամեն օր քայլել առնվազն մեկ ժամ: Նա ամեն անգամ ինձ տանում էր դասի ու ետ գալիս: Քաղաքային տրանսպորտից բացարձակապես չէր օգտվում: Վերադառնալիս խանութ էր մտնում ու ինձ ինչ-որ քաղցր բան գնում: Ես քաղցրավենիք շատ էի սիրում: Հայրս պահում էր այդ կոնֆետները ու ամեն անգամ գիշերը՝ քնելուցս առաջ, անակնկալ կերպով էր տալիս ինձ: Մի օր քաղցրավենիքը գտնում էի բարձիս տակ, մյուս օրը՝ դասագրքերիս վրա, հետո՝ դպրոցական պայուսակիս մեջ:

Ուսումնական տարին նոր էր սկսվել: Մի ամիս էր, ինչ ինքն էր ինձ  տանում դասի: Հոկտեմբերի սկզբին իմ ժողովին գնաց նույնիսկ: Շատ հպարտ ետ եկավ, երբ իմացավ, որ դասարանում ամենալավը ես գիտեմ ռազմագիտություն առարկան: Ուրախ էր, որ

սովորում էի պատմությունը, իսկ գրականությունից ամենաբարձր գնահատական ստացողներից մեկը ես էի: Ես էլ իմ հերթին հպարտ էի, որ նման հայր ունեմ:

Մի օր հորս խնդրեցի, որ ինձ այլևս դասի ո՛չ տանի ու ո՛չ էլ բերի, որովհետև ես երեխա չեմ: Հայրս էլ ասաց, որ իրեն զբոսնել է պետք, և չի նախընտրում մնալ միայնակ: Ես ուրախացա, որ հայրս ինձ հետ երեխայի պես չի վարվում: Ինքը ինձ հետ հավասարը հավասարի պես էր խոսում:

Նոյեմբեր ամսվա սկիզբն էր, գնացինք կինոթատրոն՝ ֆիլմ դիտելու: Լավ հիշում եմ այդ օրը: Հիշում եմ նույնիսկ ֆիլմը՝ «Հարրի Փոթթերի» երկրորդ մասի առաջին ցուցադրությունն էր: Պրեմիերան: Նույնիսկ շարքն եմ հիշում՝ հինգերորդ: Իմ ձեռքում մե՛ծ Pop Corn կար ու Coca Cola, իսկ առջևում՝ մեծ էկրան, ինչպես էի սիրում ես այդ մե՛ծ էկրանը: Ի՜նչ հրաշալի էր դա: Ամբողջովին կլանված էի ֆիլմով, ընթացքում մի պահ նայեցի հորս ու տեսա, որ քնել է: Հասկացա, որ ֆիլմն իրեն այդքան էլ չի հետաքրքրել: Դե, ես երեխա էի, ֆիլմն էլ՝ մանկական: Չնայած ես մինչ օրս էլ սիրում եմ Հարրի Փոթթերին: Հայրս պարզապես ուզում էր, որ ես ինձ լավ զգամ: Տուն եկա ու սկսեցի ոգևորված մորս պատմել ֆիլմը: Ցույց տվեցի, թե որքան մեծ Pop Corn էր հայրս գնել ինձ համար: Պատմեցի, որ հետո Cola ենք խմել, հորս խնդրանքով գաղտնիքը պահեցի, այն գաղտնիքը, որ նաև պաղպաղակ ենք կերել: Չէ՞ որ հայրս ինձ խնդրել էր չասել այդ մասին: Դրսում ցուրտ էր, իսկ ինքը ինձ պաղպաղակ գնեց: Եթե մաման իմանար, իրոք, կբարկանար:

Ժամանակի ընթացքում վախը, որ զգում էի հորս հանդեպ, վերածվում էր հարգանքի: Ես սիրում էի կյանքը: Ու ընդամենը մի բան էի ուզում, որ հայրս ու մայրս հաշտվեն վերջապես: Ես էլ էի ուզում կատարյալ ընտանիք, ինչպես ամերիկյան, happy end ֆիլմերում է պատահում:

Նոյեմբերի 27-ն էր այդ անիծյալ օրը: Հայրս ինֆարկտից մահացավ: Ինձ տեղափոխեցին տատիկիս տուն, ես նույնիսկ թաղմանը չմասնակցեցի: Ինձ չէին էլ ասում, թե ինչ է կատարվում: Մայրս ընդհանրապես վերացել էր մոլորակից: Մոտ երկու օր նրան չտեսա: Իսկ ես առաջվա վեց տարեկան երեխան չէի այլևս: Ամեն ինչ հասկանում էի և գիտակցում՝ ինչ է կատարվում: Մաման չկա, պապան չկա, տուն չեն թողնում գնալ, տատիկս տխուր է, խառնված, շփոթված, բայց ուզում է ուրախ ձևանալ: Մորական կողմի տատիկս էր: Գրողը տանի, ես ամեն ինչ գիտեի, պարզապես ուզում էի, որ մեկը գար, այդ ամենը ասեր, ու ես սկսեի իմ հիստերիկ լացը: Բայց ոչ ոք չէր ասում, իսկ գլանը, որն այդ պահին խրվել էր կոկորդիս մեջ, ավելի էր ցավեցնում ինձ: Աչքերս սաստիկ ցավում էին: Ես ինձ թույլ էի զգում: Երկու օր անց մայրս հայտնվեց, եկավ ու առանց ինչ-որ բառ ասելու ինձ ամուր գրկեց: Մայրս այս ամենն ավելի ծանր էր տանում: Երևի նա իրեն նաև մեղավոր էր զգում: Չէ՞ որ նա այդպես էլ չներեց հորս: Չէ՞ որ նա զգում էր, թե որքան շատ է սիրում հայրս մեզ, բայց ոչինչ չարեց: Մայրս ինձ ամուր գրկել էր, իրեն թույլ էր զգում ու չէր կարողանում իրեն թույլ տալ, որ ես նայեի իր աչքերի մեջ: Այդ օրվանից նա արդեն իմ նաև երկրորդ

ծնողն էր: Նա գրկեց ինձ ու ականջիս շշնջաց, որ ես ամենաթանկն եմ, որ ինքն ունի, հետո ասաց, որ հայրս ինձ շատ էր սիրում: Ես հարցրեցի. «Իսկ ի՞նչ է, հիմա չի՞ սիրում»: Ասաց, որ նա հիմա էլ է սիրում, բայց, ավաղ, այդ սերը նա իր հետ տարել է երկինք ու երբեք չի կարողանա ցույց տալ. բայց նա միշտ կշարունակի սիրել ինձ:

Այս պահը մոռանալ անհնար է:

«ծանր շնչառության ձայն» Մենք տեղափոխվեցինք դարձյալ այս տուն: Ամեն ինչ ծանր էր: Այլևս չկային կոնֆետները, որոնք ամեն գիշեր անակնկալ հայտնվում էին տարբեր վայրերում, դասի գնում էի մենակ, իսկ իմ ամենասիրելի սերիալը՝ «Հզոր ռենջերները», այնքան անհետաքրքիր էր դարձել: Այլևս գեր ու բեղավոր ձյաձյաներ չէին գալիս մեր տուն: Մորս դեմքին ժպիտ չկար: Կարծես մայրս տասը տարով ծերացած լիներ: Նրա համար այդ ամենը մի քանի անգամ ավելի ծանր էր: «կատվի մլավոց» - Արի՛ այստեղ, Քի՛թթի, արի՛, ի՛մ փիսիկ:

Գրողը տանի, ինչքան շատ եմ զգում քո կարիքը, պա՛պ: Ինչքան դատարկ է ամեն ինչ այստեղ առանց քեզ: Ո՞ւր եմ ես հասել, ինչի՞ եմ ձգտում: Դու իմ ուղղությունն էիր: Դու գնահատում էիր կյանքը, որովհետև դու գիտեիր, թե ինչ է մահը: Դու տեսել էիր և՛ դավաճանություն, և՛ սեր: Դու փրկեցիր հազարավոր մարդկանց, բայց քեզ փրկել ոչ ոքի չհաջողվեց: Գրողը տանի այդ անիծյալ ինֆարկտը:

Պա՛պ, ես գիտեմ, որ դու ինչ-որ տեղ ես, ինձ մոտ ես ու հիմա լսում ես: Ես միշտ աղոթում եմ քեզ համար, ես կարոտում եմ քեզ, ես սիրում եմ քեզ:

Հուսով եմ՝ մաման վաղը նույնպես գերեզման կգա: Բայց դեռ նախօրոք չենք պայմանավորվել: Համենայնդեպս, ես հաստատ կգամ: Ես քեզ հետ խոսելու շատ բան ունեմ:

Ես չկարողացա իմ մեջ այնքան ուժ գտնել, որ լինեմ քեզ պես: Դու իմ տարիքում արդեն զինվորական բարձր պաշտոններ էիր զբաղեցնում, իսկ ես, իսկ ես նույնիսկ շարք չեմ կանգնել ծառայությանս ընթացքում: Ճիշտն ասած՝ ես հիասթափվեցի զինվորական կյանքից: Այն քեզ տարավ անդրաշխարհ: Ես երևի քո մահից հետո սկսեցի ատել ծառայությունը:

Բայց, պապ, տե՛ս, տե՛ս, սա իմ նկարածն է, սա ես եմ նկարել, մի քանի օր առաջ: Ասա, որ ինձ մոտ ստացվում է: Ես կարողանում եմ նկարել: Տեսնո՞ւմ ես այս այգին, գեղեցիկ է չէ՞: Տեսնո՞ւմ ես ճղրտված պարանները: Ամեն փոքրիկ պարանի պատռվածքի վրա աշխատել եմ, պա՛պ: Պապ, նշան տուր ինձ: Խնդրում եմ: Ես մոլորված եմ հիմա: Սկսել եմ հոգեբանի մոտ գնալ: Ի՞նչ է ինձ հետ կատարվում, ի՞նչն է իմ մեջ ուրիշ: «կատվի մլավոց»

Վաղը կհանդիպենք ու ավելի երկար զրույց կունենանք, պա՛պ, ես հիմա նայում եմ քո նկարին, այն հյուրասենյակի պատին եմ փակցրել, ես ուզում եմ քեզ պես դառնալ, պա՛պ: Մինչ վաղը... ու հա, ի դեպ, ես մինչև օրս էլ չեմ ասել մամային, որ կինոյից հետո դու ինձ համար պաղպաղակ գնեցիր:

Վաղը կտեսնես քո տղային: Քո Համոյին: Այսօր այսքանը երևի շատ էր: Մինչ չորեքշաբթի: Ձայնագրության ավարտ: «ազդանշան»

# Գլուխ 7

«ազդանշան»

Զայնագրություն համար յոթերորդ: Նոյեմբերի 28:
Չորեքշաբթի: 2012 թվական: 21:18:

Այսօր առավոտյան մտածում էի, որ, հնարավոր է, բժշկի վատառողջության պատճառով ևս մեկ հանդիպում հետաձգվի, ու որոշեցի գնալուցս առաջ նախապես զանգահարել Վլադ Սամվելովիչին՝ ճշտելու արդյոք հանդիպումը տեղի կունենա, թե ոչ: Դրական պատասխան ստացա և անմիջապես դասերից հետո գնացի:

Բժիշկը ծխում էր, չնայած որ իրեն արգելված էր: Սուրճ առաջարկեց, բայց հրաժարվեցի, չեմ սիրում սուրճ: Նա, ինչպես միշտ, կողքի սենյակ անցավ, հանգիստ ծխեց ու ետ եկավ: Ընթացքում նույնպես հենց այդ նպատակով դուրս եկավ:

Հարցրեց, թե ինչպես եմ, ինչով եմ զբաղվել շաբաթ-կիրակի օրերին ու, ընդհանրապես, այս ընթացքում:

Ասացի, որ շաբաթ-կիրակին անցկացրել եմ հիմնականում Call of Duty խաղալով, Youtube-ով սուպ պատրաստելու tutorial եմ նայել: Չհասկացա, թե ինչու, բայց կյանքումս պատրաստած առաջին սուպն ահավոր էր ստացվել: Ախր արեցի այնպես, ինչպես ցույց էր տրված տեսահոլովակում: Միսը դրեցի ջրի մեջ մինչև եռալը, հետո ավելացրեցի սոխը, կանաչին, գազարը, կարտոֆիլը, կաղամբը, աղն ու պղպեղը: Ի՞նչն եմ սխալ արել: Միգուցե պետք չէր բոլոր բանջարեղենները միաժամանակ լցնել: Ինչևէ... հասկանալով, որ մոտս այդ օրը խոհանոցի հետ կապված ոչինչ չի ստացվում, որոշեցի գնալ տատիկիս տուն, նորմալ հաց ուտել: Մամայի հետ էլ զրուցեցի ու տուն եկա: Դա շաբաթ երեկոյան էր: Կիրակի, երկուշաբթի տանն եմ եղել: Երեքշաբթի... Երեքշաբթի... երեկ գնացի գերեզմաններ: Մաման էլ հետս եկավ: Առավոտյան զանգահարեց, պայմանավորվեցինք ու միասին դուրս եկանք:

Ցավը, որն առաջ տանջում էր հոգիս, արդեն լա՛վ բթացել էր: Հոգու խորքում, ինչ-որ տեղ՝ խոր անկյունում այն թաքնվել էր: Արդեն ամեն ինչ սովորական էր, ուղիղ տասը տարի է անցել: Ամենաբարդ շրջանը սկիզբն էր, երբ ես դեռ դպրոցական էի: Հիմա վերքերից մնացել են միայն սպիներ: Ինչևէ...

«կատվի մլավոց» Այսօր էլ բժշկից հետո նորից գնացի տատիկիս տուն: Այս անտանելի մենակությունը սկսել է խեղդել ավելի շատ, հատկապես այս վերջին օրերին: Առաջ Վաչեի հետ շատ արագ օրը թռչում էր: Այսօր ուզում էի զանգել նրան, բայց մտածեցի՝ եթե պետք լիներ, ինքը առաջինը

կզանգեր: Իսկ եթե գնամ իրենց տուն, գնամ ու հարցնեմ նրա ծնողներին, թե ի՞նչ է կատարվում Վաչեի հետ: Որտեղից որոշեց, որ ես կոնֆլիկտ եմ ստեղծել իրենց տանը: Կամ ավելի ճիշտ չի՞ լինի, եթե Վաչեի հորը զանգեմ ու հարցնեմ՝ ի՞նչ է եղել այդ անիծյալ կիրակի օրը իրենց տանը: Այդ ինչպե՞ս եմ կիրակի օրը հայտնվել իրենց տանը, բարձրաձայն հայհոյել, համակարգչի էկրանը ջարդել ու Վաչեին հարվածել իր իսկ սեփական բնակարանում, երբ ես կիրակի ամբողջ օրը տանն եմ անցկացրել: Չեմ հիշում՝ այդ օրը խանութ դուրս եկել էի, թե ոչ: Բայց, համենայնդեպս, այդ օրը մեր թաղամասից հեռու տեղ չեմ գնացել:

Մի խոսքով, ես հենց այս պահին էլ կզանգեմ Վաչեի տուն ու կխոսեմ իր հոր հետ:

«ոտնաքայլեր» «հեռախոսի ստեղնաշարի ձայներ» «հեռախոսը դնում է»

Չէ՛, այդպես պետք չէ: Ավելի լավ է՝ հենց Վաչեին էլ զանգեմ: Վե՛րջ: Ի վերջո, նա է իմ մանկության ընկերը, ոչ թե նրա հայրը: «հեռախոսի ստեղնաշարի ձայներ»

– Ալո, Վաչ, բարի օր, ո՞նց ես... «լռություն»... շատ լավ է, որ լավ ես: «լռություն» Վաչ, ես նոր մտածում էի, որ ավելի լավ կլինի՝ մեր միջև ծագած կոնֆլիկտին ավելի լուրջ մոտեցում ցույց տանք, միգուցե հանդիպենք ու նորմալ խոսենք, փորձենք հարթել այս ամենը, ախր հո երեխա չե՞նք... «լռություն»... հա, հա, գնում եմ Վլադ Սամվելովիչի մոտ, բայց դե էդ կարևոր չի հիմա... Վաչ, ախպերս, խնդրում եմ... «երկար լռություն»... Լավ, պարզ է, լավ մնա... «դնում է հեռախոսը» Ընտիր է. մանկությանս

ամենամոտ ընկերը չի ուզում շփվել ինձ հետ: Առաջվա ջղայնությունն ու ագրեսիան գրեթե բացակայում էր. գոնե թեթևակի փոփոխություն կար նրա մեջ: Բայց, ամեն դեպքում, Վաչեի հետ՝ վերջ:

Չգիտեմ՝ ինչու է ամեն ինչ այս կերպ ընթանում: Այսօր Վլադ Սամվելովիչի հետ հանդիպումն ավարտելուց հետո հասցրեցի նաև եկեղեցի մտնել: Որոշեցի մոմ վառել: Երեք մոմ գնեցի: Մեկը վառեցի հորս հոգու հանգստության համար, մյուսը՝ մորս համար, երրորդն էլ վառեցի հարազատներիս ու բարեկամներիս համար: Մոմ վառելու սովորություն, ճիշտն ասած, չունեմ: Բայց այս անգամ վառեցի: Պատարագի ժամին էի մտել: Հարմարավետ մի անկյուն գտա ինձ համար ու նստեցի: Ժամանակը եկեղեցում բավական արագ էր թռչում: Վայելելով ամեն ակնթարթ, ամեն պահ՝ ժամերը վերածվում էին վայրկյանների: Իսկ դուրս գալուց առաջ էլ քահանային մոտեցա ու խնդրեցի, որ մեղքերիս թողություն տա:

Հիմա չափից շատ հանգստացած եմ: Նույնիսկ կարողացա Վաչեին զանգել, որովհետև հոգուս խորքում ամեն ինչ մաքուր է, խիղճս չի տանջում: Ուղղակի ուզում եմ հասկանալ այս քաոսի պատճառը: Ինչից սկսվեց այս ամենը: Միգուցե եթե այսօր եկեղեցի չմտնեի, մեջս չէի կարողանա նաև ուժ գտնել Վաչեին զանգելու: Ինչևէ...

Այսօր բժիշկը հարցրեց, թե որքան հաճախ եմ լսում իմ ձայնագրությունները: Պատասխանեցի, որ դեռ չեմ լսել: Դե հա, իրոք, ինչի՞ համար լսեմ: Ընդամենը երեք շաբաթ է անցել, ինչ ձայնագրվում եմ: Այս ամենը նման է օրագիր գրելուն: Օրագրում

էլ սպասում ես, որ անցնի երկար ժամանակ, նոր սկսում ես կարդալ այն: Երևի մյուս տարի նոր սկսեմ լսելը, որ վերապրեմ այս պահերը: Իսկ հիմա այս ամենը բավականին անհետաքրքիր է: Ու ընդհանրապես, ինչու եմ ես ձայնագրվում հիմա. Վլադ Սամվելովիչի պահանջով, բնականաբար, բայց նրա ինչին են սրանք պետք գալու: Ավելի լավ է Վլադ Սամվելովիչը սպանի ինձ, քան հեռախոսս և մեջի բոլոր ձայնագրությունները տամ նրան: Այսպես, թե այնպես՝ չեմ տալու, ոչ էլ մտադրություն ունեմ: Իսկ եթե չի ստանալու, իմաստ էլ չունի անգամ ձայնագրվելը:

Արդեն չգիտեմ՝ էլ ինչ պատմեմ այս ձայնագրությունների մեջ: Միգուցե նաև պատմեմ, թե որ տարիքում եմ առաջին անգամ սեքսով զբաղվել: 17 տարեկան էի, ամառ էր, բանակ գնալուս էլ մնացել էր երեք կամ չորս ամիս: Վաչեի հետ չորս օրով գնացել էինք Վրաստան՝ հանգստանալու: Բարեբախտաբար, բավականին գումար կար մեզ մոտ:

Հետո: Էլ ի՞նչ պատմեմ: Բանակիս մասին պատմեմ: Ես հորս մահից հետո բավականին հիասթափվեցի բանակից: Ես սկսեցի ատել այն, ու, առհասարակ, սկսեցի ատել ծառայությունը ևս: Իսկ բանակում ես ո՛չ շարք եմ կանգնել, ո՛չ սահմանին եմ մոտեցել, ո՛չ էլ բոլոր ծառայակիցներիս հետ մի զորամասում քնել: Ես ծառայել եմ նախարարությունում՝ հենց Երևանի մեջ: Հորս ամենամոտ ընկերը գեներալ էր ու շատ լիազորություններ ուներ: Ինձ համար ամեն ինչ ասված էր, ամեն ինչ՝ արված: Ես տանն էի քնում: Ժամը յոթին կամ ութին ինձ մեքենայով տուն էին հասցնում ինձ հետ ծառայող

լեյտենանտները: Առավոտյան ութին արթնանում էի ու տանից դուրս գալիս: Մեքենայով գնալ չէր ստացվում, երթուղային էի նստում ու անցնում ծառայության: «քմծիծաղ» Պայմանագրեր էի լրացնում: Ձևերը սովորել էի: Ամեն ինչ հրաշալի էր: Իմ սեփական սենյակն ունեի, ինտերնետին միացված համակարգիչ, հեռուստացույց, որն այդքան էլ ինձ պետք չէր գալիս, DVD նվագարկիչ: Ձմռանն այնտեղ տաքացնող սարք էին դնում: Ծառայակիցներիս հետ ոչ մի կոնֆլիկտ չկար: Մենք այդքան էլ շատ չէինք: Այնտեղ բոլորը ինձ պես ծանոթով կամ փողով էին հայտնվել, իսկ եթե ավելի ազնիվ խոսենք՝ և՛ փողով, և՛ ծանոթով: Այստեղ հայտնվելու համար այդ երկուսն էլ պետք են: Ու ես երևի բացառություն էի, որ գումար չեմ տվել այնտեղ ընկնելու համար: Այս ամենի համար պարտական եմ հորս: Նրա հանդեպ հարգանքն այնքան մեծ էր, որ անգամ մահվանից հետո իր ընկերները կարողացան իմ ծառայությանը այսքան հեշտ ընթացք տալ: Ծանոթացա բավականին բարձր պաշտոն զբաղեցնող մարդկանց հետ: Կարծես աշխատանք լիներ, ոչ թե ծառայություն: Անվճար աշխատանք պետության համար: Ճիշտ է, առաջին ամիսը դժվար էր. այդ ժամանակ բոլորի հետ հավասար ծառայում էի: Որոշ չնչին կոնֆլիկտներ, իհարկե, ունենում էի այդ ընթացքում ծառայողներից մի քանիսի հետ, բայց դե անցավ-գնաց այդ ամենը: Մի ամիսը լրանալուն պես հորս ընկերը հայտնվեց ու տեղափոխեց ինձ նախարարություն: Ի տարբերություն ինձ՝ Վաչեն Արցախում էր ծառայում: Իր ծառայությունը, բնականաբար, ավելի ծանր էր ու բացարձակապես

տարբեր էր իմ ծառայությունից: Ինչևէ… Երևի հայրս շատ կհիասթափվեր, երբ տեսներ ինձ… Բայց եթե հայրս ողջ մնար, երևի կշարունակեի ծառայությունս: Ավելի կոնկրետ ասեմ, նախ ես կծառայեի, ինչպես իսկական զինվորին է հարիր, իսկ հետո էլ կշարունակեի հորս պես: Բայց նրա մահից հետո շատ բան փոխվեց իմ մեջ: Ես նույնիսկ իմ խաղալիք հրացանները դեն նետեցի: Եթե կարողանայի նկարագրել իմ ատելությունը ծառայության նկատմամբ: Հարցն այն չէ, որ չեմ ուզում պաշտպանել իմ տարածքը, իմ հայրենիքը: Չէ, պարզապես դա իմը չէ: Ծառայությունը իմը չէ: Աստվածաշունչ չեմ կարդացել, ցավոք, չեմ էլ կարող կարդալ: Մի էջից ավել կարդում եմ, գիրքն ինքն իրեն փակվում է, բայց գիտեմ, որ այնտեղ ասվում է՝ մի՛ սպանիր: Բայց Աստված ստեղծում է կրակը, թույլ է տալիս մարդկությանը օգտագործել զենքը ՝ կարգադրելով օգտագործել դրանք միմիայն պաշտպանելու համար այն, ինչը մերն է: Պաշտպանել այն, ինչը մերն է: Ինձ համար դա շատ փոքր տարածք է, որտեղ իմ տունն է, իմ հարազատները: Ինչպես ասում են, ինձնից այն կողմ թեկուզ ջրհեղեղ: Հորս համար այդ տարածքը չէր սահմանափակվում իր հարազատներով: Հորս համար այդ տարածքը շատ մեծ էր: Որքան այդ տարածքի չափերն են մեծ, այդքան էլ մեծ է այդ տարածքում ապրող մարդկանց հարգանքը քո անձի նկատմամբ: Ամեն մեկը ի զորու չէ հսկել մեծ տարածքներ: Շատերը գերադասում են փոքր տարածքները, ինչպես ես: Նրանք այդ տարածքում իրենց հարազատներին ու բարեկամներին թողնում են, իսկ պատահական

անցորդը, որը հնարավոր է ճակատագրի բերումով ապագայում քո ընկերը դառնա, այդ տարածքից բացակայում է զուտ այն պատճառով, որ մենք պարզապես չենք ճանաչում իրեն: Մեզ չեն հետաքրքրում մեր մերձավորները: Իսկ Աստվածաշունչն ասում է. «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Փոքր տարածքներ պաշտպանելը միշտ էլ հեշտ է: Ինչևէ... Նորից թեյեմ երևի, Քիթթիին կերակրեմ: Ասելու բան չունեմ հիմա:

Բժիշկն ասաց, որ իր հետ մեծ հաջողությունների ենք հասնում: Որ շուտով իմ ախտորոշումը կնշանակի, և արդեն կկարողանանք անցնել բուժման փուլին: Վերջերս մի նոր ալտերնատիվ է առաջացել գլխումս՝ Վլադ Սամվելովիչի հետ կապված: Մտածում եմ՝ միգուցե ուզում է ուղղակի փող աշխատել: Ես պետք է, ոչ ավել, ոչ պակաս, 200000 դրամ վճարեմ այս հանդիպումների ու հետագա բուժման համար: Այսօր այդ թեմայի շուրջ նույնպես խոսեցինք: Դեկտեմբերի սկզբին գումարը պետք է ամբողջովին վճարած լինեմ: Մի շաբաթից քիչ ժամանակ ունեմ գումարը ճարելու համար:

Լավ, ենթադրենք իսկապես ես ինչ-որ հոգեբանական խնդիր ունեմ, այդ դեպքում ինչու բժիշկը չի կապվում իմ հարազատներից մեկի հետ, հենց մորս հետ՝ խոսելու իմ առողջական վիճակի մասին: Չէ՞ որ հոգեկան հիվանդ եմ, գրողը տանի, չեմ կարող ճիշտ որոշումներ կայացնել: Միգուցե շիզոֆրենիկ եմ, և այս ամենը պարզապես իմ ստեղծած աշխարհին է, ֆանտազիայի արդյունք է: Մի խոսքով, եթե ամեն ինչ այսպես շարունակվի, ես, իրոք, կգժվեմ:

Բայց ի՞նչն է իմ մեջ տարօրինակ: Ինչո՞ւ եմ դիմել հոգեբանի: Որտեղի՞ց Վաչեին այդ մարդու համարը: Երևի Վլադ Սամվելովիչին հարցնեմ մյուս անգամ: Կասեմ, որ Վաչեն է տվել ինձ նրա համարը: Պետք է փորձեմ հասկանալ այդ կապը:

«ծանր ռոքի ձայն»

– Չէ՛, էլի այս հոգեկանը: Ա՛յ, ինքն է իսկական հոգեկան հիվանդը: Իր ծանր ու անկապ երաժշտությամբ: Ա՜, ես չեմ կարող դիմանալ, զանգեմ, բողոքեմ... Չէ... չեմ կարող: Ես միշտ ասել եմ, որ ատում եմ իմ բոլոր հարևաններին: Ճիշտ եմ անում, որ բակերը շրջանցելով եմ տուն մտնում, որպեսզի դեմքները չտեսնեմ: Մի նորմալ հարևան այդպես էլ չունեցանք... «ոտնաձայներ» «ծանր ռոքի ձայնը խլանում է»

Այս սենյակում քիչ ավելի թույլ է լսվում: «կատվի մլավոց»

Արի՛ այստեղ, Քի՛թթի: Արի՛ ինձ մոտ: Որտեղի՞ց եմ, տեսնես, գտնելու այդ 200000 դրամը: Վաղը մամայի հետ կխոսեմ: Իմիջիայլոց, անգամ մաման է ուրախ, որ մինչ օրս շարունակում եմ գնալ հոգեբանի մոտ: Ասաց, որ ճիշտ քայլ եմ անում դրանով: Առաջին անգամ, երբ ասացի, որ գնացել եմ հոգեբանի մոտ, մամային շատ ոգևորեց իմ այդ քայլը: Չեմ հասկանում, բոլորը ուրախ են, բացի ինձնից: Մի՞թե իմ ծանոթների մեջ չկա մեկը գոնե, ով կասի. «Հա՛մ ջան, ցա՛վդ տանեմ, սխալ բան ես անում, դու նորմալ մարդ ես, առանց հոգեբանական խնդիրների, քեզ պետք չեն նմանատիպ հոգեբանական սեանսները»: «երգը անջատվեց» Փա՜ռք Աստծու:

Մաման չի աշխատում հիմա: Բայց մոտը փող կլինի, նախկին հաճախորդները տուն են գալիս, որպեսզի մաման իրենց մազերը հարդարի: Վարսավիրանոցում էր աշխատում, հետո դուրս եկավ աշխատանքից ու սկսեց հաճախորդներին տուն կանչել: Երևի փող կունենա... էհ., տասը տարի է անցել: Արդեն պետք է սկսել նորը կառուցել, այլ ոչ թե վայելել պապայի կառուցածը, որն արդեն վերջանալու վրա է:

Փորձեմ հասկանալ, թե ինչ է ինձ հետ կատարվում, դրանից հետո անմիջապես կսկսեմ լուրջ ինչ-որ գործով զբաղվել: Մյուս տարի համալսարանն էլ կավարտեմ, մի աշխատանք կգտնեմ երևի: Հնարավոր է՝ դիմեմ հորս այն գեներալ ընկերոջը և շարունակեմ պայմանագրեր լրացնել, ինչպես որ անում էի ծառայությանս ընթացքում:

«կատվի մլավոց» Լավ, Քիթթին սովածացել է:

Այսօր այսքանը բավական էր, առավել ևս, որ խոսելու բան նույնիսկ չկար էլ: Քահանայի մոտ երկար մնացի ու իր մոտ էլ երկար խոսեցի: Ընդհանրապես եկեղեցու մթնոլորտից հետո ուզում ես տուն գալ և պարզապես լռել:

Կձայնագրվենք ուրբաթ օրը: Ձայնագրության ավարտ: «ազդանշան»

# Գլուխ 8

«ազդանշան»

Ձայնագրություն համար ութերորդ։ Նոյեմբերի 30։
Ուրբաթ։ 2012 թվական։ 20:20

Երեկ անտանելի անցավ օրը։ Դասի չգնացի, չէի ուզում գնալ, գիշերը լավ չէի քնել, առավոտյան նոր-նոր սկսեցի քնել։ Ժամը վեցն էր։ Երկու ժամն էլ հազիվ անցավ, ու հեռախոսիս զարթուցիչը զնգաց։ Ավելի լավ է՝ դժոխքում այրվեի, միայն թե մոտ չորս ժամ ավել քնեի, ու քնեցի։ Երբ արթնացա, հասկացա, որ դասի գնալն արդեն ուշ է։ Ինչևէ...

Ամբողջ օրը տանը մնալուց վատ բան չկա։ Իսկ առաջին հարկում ապրելն ավելի նյարդայնացնող է։ Ակամայից լսում ես շքամուտքի մոտ հավաքված հարևանների անիմաստ խոսակցությունները։ Շատ կուզեի ապրել սեփական տան մեջ, որտեղ մեկ կմ շառավղի վրա ոչ մի հարևան չլիներ։ Բակից խորոված հոտ էր գալիս, շենքի պապիկները ոգևորված այս կողմ ու այն կողմ էին գնում։ Խոսակցություններից հասկացա, որ մեր կողքի հարևան Լևոն

պապիկի 70-ամյակն է այսօր: Դուրս չեկա տնից: Ես նրան բարևել անգամ չեմ ուզում, ուր մնաց մի հատ էլ ժպտերես նայեի աչքերին ու ծնունդը շնորհավորեի: Որից հետո էլ ստիպված պետք է նաև առողջություն ու երկար տարիների կյանք մաղթեի: Չնայած դժվար թե մինչև 140 տարին ձգի: Չեմ սիրում նմանատիպ մաղթանքները: Գերադասեցի մնալ տանը: Աղը վերջացել էր, չցանկացա նույնիսկ գնալ խանութ՝ աղ գնելու: Ախր այդ Լյով պապին միշտ շքամուտքի մոտ կանգած ծխում է: Ու միշտ դիմացս է հայտնվում հենց այն պահին, երբ մուտքի դուռն եմ բացում, որպեսզի շենքից դուրս գամ: Ժամը հինգի կողմերը դուռը ծեծեցին: Մտածեցի՝ հարևաններից մեկը կլինի, դե, էլ ո՞վ պետք է լիներ: Ինձ մոտ միայն մայրս է գալիս, նախկինում նաև Վաչեն: Մաման գալուց առաջ միշտ զանգում է ինձ, իսկ Վաչեի գալը բացառվում էր: Մտածեցի՝ հարևաններից մեկը կլինի կամ չգիտեմ, ասենք, լույսի կամ մեղր վաճառողը: Որոշեցի չմոտենալ դռանը: Համակարգչի ձայնը իջեցրի, որպեսզի տպավորություն ստեղծվի, թե տանը մարդ չկա: Ինչևէ...

Այսօր, Վլադ Սամվելովիչի հանդիպումից հետ գալուց հետո, պատահաբար տեսա Իռեն տատիկին՝ ինձնից մի քանի մետր առաջ ընկած: Շուկայից էր գալիս, մե՛ծ-մե՛ծ տոպրակները ձեռքին: Քայլում էր իմ առջևով: Որոշեցի դանդաղեցնել քայլերս, նրա ետևից կամաց-կամաց քայլել, որպեսզի բախում տեղի չունենա: Ճիշտ է, խիղճս տանջում էր, որ չէի մոտենում օգնելու: Բայց արի ու տես, հեռվից հայտնվում է մեր շատ սիրելի Բելան՝ Իռեն տատիկի թոռնուհին: Կողքովս անցնում է, ուրախացած ու լայն

ժպիտով արագ բարևում ու անցնում է Ռոեն տատիկի կողմը, որպեսզի օգնի վերջինիս: Ռոեն տատին էլ ետ է նայում, ինձ տեսնում ու զարմացած նայում վրաս, թե բա՝ «ա՛յ բալա, էս ինչի՞ ես ետևիցս գողեգող ման գալիս», ու ծիծաղում: Անկեղծ ասած՝ այդ պահին շփոթվեցի: Ինձ վատ զգացի: Ամաչեցի: Լինում է, չէ՞, որ օրվա մեջ մի հիմարություն է կատարվում քեզ հետ, ու այնքան ես դրա վրա կենտրոնանում, որ օրերով գլխիցդ դուրս չի գալիս: Ասենք, հենց հիմա էլ ուզում եմ կենտրոնանալ, որ պատմեմ այսօրվա իմ ու Վլադ Սամվելովիչի հանդիպման մասին, բայց այդ տեսարանը մինչև հիմա էլ աչքիս առջև պտտվում է: Վերհիշում եմ ու փորձում ալտերնատիվ շարունակություններ հորինել, որոնք երբեք չէի անի: Դե ասենք, կատակի տալն ու անցնելը: Կամ եթե փորձեի «տակից դուրս գալ», օրինակ՝ կարող էի ասել. «Բոլորովին էլ գողեգող չէր, հեռվից տեսա ձեզ, արագ քայլերով ուզեցի մոտենալ ու օգնել, այն էլ Բելան առաջ ընկավ ինձնից»: Ինչևէ... Ավելի լավ է այդ պահին երկնքից աստերոիդ ընկներ կողքի բակ, քան այսօրվա այդ հիմար դեպքը տեղի ունենար: Ես շարունակում էի տեղումս մնալ լուռ կանգնած ու խառնված: Մի կերպ հավաքելով ինքս ինձ՝ ասացի. «Ահ, կներեք, չէի նկատել ձեզ», ու առաջ ընկա: Ռոեն տատիկն էլ կանգնեցրեց ինձ ու ասաց. «Համլետ ջան, երեկ համատիրությունից էին եկել, դուռդ ծեծել են, տանը չես եղել»: Ասացի, որ կգնամ ու կճշտեմ: Ու արագ քայլելով մտա շենք: Ինչևէ...

Պատմեցի այս ամենը, մի քիչ թեթևացա: Ու քնելուց բարդ կլինի: Նորից այդ հատվածը աչքիս առաջ է գալու: «կատվի մլավոց»

Քիթթին էլ է քաղցած: Ես մի քանի րոպեով դադարեցնեմ ձայնագրությունս: Քիչ հետո կշարունակեմ:

«ազդանշան»

«ազդանշան» Ձայնագրության շարունակությունը: 21:10:

Թեյ խմեցի, Քիթթիին կերակրեցի: Հոգնած եմ ահավոր: Երեկ կուրսեցիս զանգեց, առաջարկեց հանդիպել մեր տանը, որպեսզի դիպլոմայինի վրա աշխատենք: Մենք դիպլոմային աշխատանքի թեմայի մեջ մի ընդհանուր կետ ունենք: Բայց ասացի, որ չեմ կարողանա, որովհետև մի փոքր վատառողջ եմ: Հա՛, երեկ, իրոք, չէի ուզում ինչ-որ մեկի հետ հանդիպել: Չէի ուզում նույնիսկ տանից դուրս գալ: Խոսքերիս մեջ ճշմարտություն կար ինչ-որ տեղ: Վատառողջ եմ, բժշկի եմ դիմում: Գրիպ չի, կոտրվածք էլ չի: Հոգեբանի մոտ կոնսուլտացիաներ են:

Այսօր դասի ընթացքում էլ հիշեցրեց, բայց ասացի, որ այսօր էլ եմ զբաղված լինելու ու մերժեցի: Կուրսում քիչ թե շատ Արամի հետ եմ մոտ: Հենց այդ տղայի, ում հետ պետք է դիպլոմայինի վրա աշխատենք: Նա արդեն հասցրել էր նկատել, որ որոշ օրերի դասից տուն գնալիս մեկ այլ կանգառից ու մեկ այլ ուղղությամբ գնացող երթուղային եմ նստում: Մտածեց, որ հնարավոր է՝ տան վայրն եմ փոխել: Երբ հարցրեց, թե ուր եմ գնում այդ ճանապարհով, ամաչեցի ասել, որ գնում եմ հոգեբանի մոտ: Ասացի, որ գնում եմ ընկերոջս՝ Վաչեի տուն: Դե նա ճանաչում էր Վաչեին: Մի քանի անգամ տեսել էր: Իսկ երթուղայինը, որը նստում եմ Վլադ

Սամվելովիչի մոտ գնալու համար, անցնում է նաև Վաչեենց տան կողքով: Ինչևէ...

Էսօր Վլադ Սամվելովիչը լավ չէր: Անընդհատ հազում էր ու, անկախ ամեն ինչից, շարունակում էր ծխել: Դրսում ցուրտ էր: Առաջվա պես դուրս չէր գալիս ծխելու համար: Կողքի սենյակում: Սուրճ ու ծխախոտ: Միստիկ համադրություն: Ինձ մի ժամանակ թվում էր, որ միայն մեր համալսարանի տղերքն են այդ համադրության զոհերը: Բայց հետո հասկացա, որ համադրությունը վարակել է բոլոր համալսարանները: Չնայած կարծում էի, որ դա ինչ-որ տարիքային հետաքրքրություն է: Բայց դե բժիշկն էլ է սիրում, բոլորն են սիրում, բացի ինձնից:

Երբ վերադարձավ, վերջապես ասացի այն, ինչը նախորդ օրն էի պատրաստվում ասել: Ասացի, որ Վաչեն է ինձ  ուղարկել իր մոտ: Վաչե Կիրակոսյանը՝ իմ մանկության ընկերը: Վլադ Սամվելովիչն ասաց, որ շատ լավ է ճանաչում Վաչեին, պարզվեց նույնիսկ, որ փոքր տարիքում ես մի անգամ հանդիպել եմ Վլադ Սամվելովիչի հետ: Վլադ Սամվելովիչը Վաչեի հոր ծառայակիցն է եղել: Երբ ես փոքր էի, ու Վաչեի հետ խաղում էինք, (ի դեպ, փոքր ժամանակ Վաչեն մեր հարևանն էր, բայց շատ կարճ ժամանակ հետո նրանք տեղափոխվեցին) մի անգամ ինձ էլ է տեսել: Բնականաբար, ես չհիշեցի երիտասարդ Վլադ Սամվելովիչին, երևի հինգ կամ վեց տարեկան էի: Տեսնես ինչպիսին էր նա տասնհինգ տարի առաջ: Երևի նման անիմաստ թրաշ չէր պահում: Ու, հավանաբար, ճաղատ էլ չի եղել: Բայց այն, որ այդ տարիքում էլ էր անիմաստ հումորների մեծ սիրահար, չեմ կասկածում:

Երբ Վաչեենք տեղափոխվեցին այլ բնակարան, նոր էինք ավարտել առաջին դասարանը: Ծնողները մտածեցին, որ դասարանը փոխելը սխալ կլինի, և որոշեցին թողնել նույն դպրոցում, որպեսզի սովորի նույն դասարանում իր ամենամոտ ընկերոջ՝ ինձ հետ: Եթե դպրոցը փոխեին, ես Վաչեի հետ կապը չպահպանեի, այն անիծյալ կիրակի օրն էլ իրենց տուն չէի գնա ու սկանդալ չէի սարքի: Հա՛, հա՛, հենց այն կիրակի օրը, երբ ամբողջ օրը տանը նստած էի: Գրողը տանի, այդ խեղկատակության հետ ոչ մի կերպ չեմ հաշտվում: Ամեն անգամ դա հիշելիս նյարդայնանում եմ: Եթե դա չլիներ, Վաչեն խորհուրդ չէր տա դիմել Վլադ Սամվելովիչին: Ինչևէ...

Այդքան էլ անակնկալ չէր Վլադ Սամվելովիչի համար իմանալ, որ Վաչեն է ինձ տվել իր հեռախոսահամարը: Միգուցե լավ հոգեբան է, բայց՝ վատ դերասան: Կամ էլ նա նույնպես քաջ գիտակցում էր, որ շատ լավ գլխի եմ ընկնում, ու նույնիսկ դերասանություններ անելու կարիքը չկա: Վլադ Սամվելովիչը վաղուց կապված կլինի Վաչեի հոր հետ, նա էլ ասած կլինի իմ մասին, թե ինչու եմ գալիս: Հնարավոր է: Վլադ Սամվելովիչը անակնկալի չեկավ, երբ իմացավ՝ ով է ինձ տվել իր հեռախոսահամարը:

Չեմ հավատում, երբ ասում են՝ դերասանությունը հոգեբանություն է, վոկալը հոգեբանություն է: Դրանք Աստծու կողմից են մարդուն շնորհվում: Երևի ես հոգեբանության մեջ ինչ-որ սև բաներ եմ տեսնում և մի աչքով եմ նայում այս ամենին, չեմ հասկանում այս գիտության խորությունը: Բայց ախր հիմա այս ամենը իմ կաշվի վրա եմ զգում: Շաբաթը երեք անգամ գնում եմ բժշկի մոտ ու

խոսում: Հարցն այն է, որ ես պարզապես խոսում եմ, ես չեմ պատմում բուն խնդիրներիս մասին, մենք չենք փորձում հասկանալ, թե ինչ է ինձ հետ կատարվում, պարզապես զրուցում ենք: Ընդ որում՝ Վլադ Սամվելովիչն այդքան էլ հաճելի զրուցակից չէ: Մենք ունենք տարբեր հետաքրքրություններ: Արդեն երրորդ շաբաթն է, ինչ զրուցում ենք:

Հիշեցի, որ գումարը չեմ վճարել: Երեկ մոռացա այդ թեմայով մամայի հետ խոսել: Ավելի ճիշտ՝ չմոռացա, ուղղակի չգիտեմ ինչ ասեմ մամային, ինչպես խնդրեմ այդ փողը: Քսաներկու տարեկան եմ, ես պետք է արդեն աշխատեմ, ամոթ է նույնիսկ:

Հուսով եմ, որ այս կոնսուլտացիաներն իրենց արդյունքը կտան: Իմիջիայլոց, եթե մի ամիս է տևելու, ու մենք սկսեցինք նոյեմբերի 14-ին , ուրեմն մեզ մնացել է մեկ, երկու, երեք, (այն մյուս շաբաթ արդեն տասներորդն է) չորս, հինգ, չորս կամ հինգ հանդիպում, կեսից շատն արդեն անցել է: Դա լավ է, թեպետ անօգուտ է անցել:

«ոտնաքայլեր»

Երևի անջատեմ ձայնագրիչը ու զանգեմ մամային կամ էլ՝ չէ՛, թող միացրած մնա: Եթե բուժման համար պետք չգա, գոնե հուշեր կունենամ այս ձայնագրություններից:

«հավաքում է հեռախոսահամար»

– Ալո, բարև, տատի, ո՞նց ես: Ես էլ եմ լավ: Հա՛... հա՛... ամեն ինչ նորմալ է, քննությունները մի քանի շաբաթ հետո նոր կսկսվեն...հա բա իհարկե, պարապել եմ... չէ, չէ, լիկվիդ չեմ մնա: Ահա, տա՛տ, որ խնդրեմ՝ մամային կկանչե՞ս հեռախոսի մոտ...

Անցյալ անգամ էի ասել տատիկիս, որ քննությունները սկսվում են դեկտեմբերից, բայց միևնույն է, ինքն ամեն անգամ պետք է հարցնի, երևի բոլոր տա...

– Մամ, բարև, ո՞նց ես: ... Ես էլ: Մամ ջան, մի հարցով եմ զանգել, որն ավելի ճիշտ կլիներ՝ քննարկեինք առանց հեռախոսի, բայց դե… Վլադ Սամվելովիչը նախորդ անգամ փողի մասին խոսեց, եթե հնարավոր է՝ այս շաբաթ-կիրակի օրերի ընթացքում գտնենք այդ գումարը, որպեսզի վճարեմ իրեն... երկու հարյուր հազար, մամ: Հա, շաբաթ կգամ: Մամ, բայց ումի՞ց ես վերցնելու այդքան փող... մամ, գիտեմ, որ կարող ես ճարել,  ուղղակի ուզում եմ իմանալ՝ ումից: Բայց ներկա պահին քո մոտ այդքան գումար չկա, չէ՞... մամ, եթե չկա, կարող ենք մի շաբաթ... լավ, մամ, մերսի շատ... երևի մի քանի տարուց ես իմ սեփական ֆիզիկայի լաբորատորիան կունենամ կամ նկարներիս ցուցահանդեսը կբացեմ, ինձնից իմ գործերը կգնեն, այդ ժամանակ էլ հերթով բոլոր փողերը կփակվեմ: Չէ, լուրջ եմ ասում: Ես էլ եմ պաչում: Բարի գիշեր, մամ ջան:

«հեռախոսը դնում է» «ոտնաքայլեր»

Մաման փող չունի, այդպես հասկացա: Վերջերս հաճախորդներ չի ունեցել երևի: Դե տնային պայմաններում մազեր հարդարելը միգուցե հարմար չէ: Չնայած՝ սխալվում եմ: Ինչևէ...

Տատիկիցս կվերցնի: Փո՛ղ, ի՞նչ ես անում մարդկության հետ: Երևի մոլորակի շարժիչ ուժը հենց փողն է: Ամեն ինչի ենթատեքստում կարելի է գտնել դա: Բարի մարդիկ չկան: Ուղղակի հանուն փողի ոմանք բարիանում են: Օրինակ՝ Վլադ Սամվելովիչը. նա շատ բարի է, ինձ շա՜տ է օգնում, ճիշտ է, անօգուտ

կերպով, բայց օգնում է: Իսկ ո՞վ գիտի, թե ինչով է նա հիմա զբաղված: Ինչի՞ վրա է պատրաստվում ծախսել այդ փողը, որը դժվարանում եմ գտնել: Առողջությա՞ն, թե՞ աղջիկների: Տեսնես տարիքը դեռ ներո՞ւմ է նման շռայլություններ թույլ տալ:

Բոլորը փողի քողի տակ և՛ բարի են, և՛ չար: Աստված տա, որ ես սխալվեմ: Բայց դե ես էլ եմ այդպիսին: Հիմա եմ հասկանում փողի անհրաժեշտությունը: Ու աղոթում եմ, որ սրանք լինեն վերջին դրամները, որ խնդրեցի մամայից: Ուզում եմ ուղղակի դուրս գալ այս կապանքներից: Չեմ ուզում ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ գնալ հոգեբանի մոտ ու գիժ-գիժ խաղալ: Չեմ ուզում ամեն առավոտ ինն անց կեսին լինել համալսարանում, ինչ է հանկարծ կրեդիտային բալեր չկորցնեմ: Չեմ ուզում պարտավորվածությունների մեջ ընկնել: Ազատություն եմ ուզում, բայց ինչ-որ բան ներսից ինձ բռնել է: Ինչ-որ շատ ուժեղ բան ճնշում է ինձ... ինչ-որ մի.. «կատվի մլավոց»

– Գրողը տանի, Քի՛թթի, վախեցրիր: Սիրտս կանգ առավ, ա՛յ դմբո...

Չէ՛, վե՛րջ, այսօր այսքանը: Ձայնագրությունները շատ տարօրինակ մթնոլորտ են ստեղծում: Երևի կամաց-կամաց ինչ-որ բան ստացվում է: Չնայած ինքնախաբեությամբ եմ զբաղված: Փորձում եմ ինքս ինձ մխիթարել, որ այս ձայնագրություններն անտեղի չեն: Ինչևէ...

Թեթև հանգստյան օրեր, Համ, ջան: Կարևորը, որ վաղը դաս չկա: Ձայնագրության ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 9

«ազդանշան»
Ձայնագրություն համար ... արդեն չեմ էլ հիշում, թե որերորդ: Դեկտեմբերի 2, չէ, չէ՝ 3, թե 2...

Գրողը տանի... պատից կախված ժամացույցի մարտկոցներն էլ նստած են... ժամացույց չկա մոտակայքում, իմ կարծիքով՝ 11-ն անց կես կլինի, օրն էլ՝ երկուշաբթի, դա որ հաստատ: Ծանր օր էր: Հերիք չի՝ գիշերը չկարողացա քնել, դեռ մի բան էլ օրը ծանր դուրս եկավ: Գիշերվա ժամը երեքից մինչև առավոտյան ութն ընկած ժամանակահատվածում մահճակալիս մեջ հոլի պես պտտվում էի: Մոտ մեկ-երկու ժամ եմ քնել, ոչ ավել: Առավոտյան յոթի կողմերը աչքս նոր-նոր կպավ, բայց դե ինձ սպասում էր անտանելի երկուշաբթին: Դասերի և դիպլոմայինի տոկոսավորման մի ողջ օր դեռ առջևում է: Ստիպված արագ վեր կացա «ուժեղ հազի ձայն»... գրողը տանի... ստիպված վեր կացա, սուրճ պատրաստեցի, սիրտս քաղցր էր ուզում, արագ իջա սուպերմարկետ, Nutella գնեցի ու

նախաճաշեցի: Հաց, վրան Nutella կրեմը ու սուրճ. իդեալական նախաճաշ: Զգալով, որ քաղցրի նկատմամբ թուլություն ունեմ՝ հացը մի կողմ դրեցի ու սկսեցի շոկոլադե կրեմը ուտել առանց որևէ բանի: Ամբողջը լցրեցի ստամոքսս ու դուրս եկա տնից: Տրամադրությունս մի քիչ բարձրացել էր. երևի շոկոլադը նպաստեց:

Դուրս գալիս մեր հարևան Արտյոմին տեսա: Այն գժին, որ ամբողջ օրը ռոք է լսում: Տղան իրոք որ տարված է: Ականջակալներով գնում էր, ուղիղ ութ անգամ գոռացի, մինչև լսեց: Չնայած մի հրաշք կատարում էր լսում, այդ երգի համար արժեր չլսել իմ գոռգոռոցները՝ Alter Bridge «Blackbird», գժական գործ է:

Ասում եմ՝ ա՛յ ախպեր, էդ ականջակալներով ման գալը քեզ կտրում է կյանքից, համ չես նկատում՝ կողքդ ինչ է կատարվում, համ էլ վնասում ես լսողությունդ: Միշտ չեմ հասկացել ականջակալներով քայլող մարդկանց: Նրանք միշտ մի քանի բանով նույնացվում են՝ անջատված են, որովհետև չեն լսում, թե ինչ է կատարվում շուրջբոլորը, շշմած, որովհետև վայելում են իրենց սիրած երգը ու լարված են, որովհետև ամեն պահ մեկը կարող է կանչել, ու պետք է լսեն այդ կանչողին, որպեսզի անջատվածի տպավորություն չթողնեն: Այդպիսի մարդկանց ես կարճ ասում եմ ԼԱՇ՝ լարված, անջատված, շշմած:

Մեր շատ սիրելի հարևան Արտյոմը հենց այդպիսի մի ԼԱՇ է: «ծանր ռոքի ձայն»... Շան անունը տուր, փայտն առ ձեռքդ: Մի վայրկյան, Համ ջան, հեսա կգամ... «ոտնաքայլեր» «հեռախոսի կոճակների ձայներ»

– Ծյո՛մ ... չէ, Համոն չի, Համլետն է, ախպեր... որ խնդրեմ, էդ երգդ կանջատե՛ս: Գործ եմ անում, խանգարում է... «երգն անջատվում է» շատ մերսի, ախպերս: Իմիջիայլոց, ծանոթ էր, ովքե՞ր էին որ, Nirvana էր: Ի՞նչ: Չէ՛, չեմ լսել այդ խմբին: Հեսա վերջացնեմ գործս, ուզում ես իջի մեր տուն, ցույց տուր էդ խմբի երգերը: Լավ, Ծյոմ ջան: Իրոք որ ուշ է, էսօր չարժե: Թող մնա վաղը... բարի գիշեր, ախպերս: «դնում է հեռախոսը» «ոտնաքայլեր»

ԼԱԾ-ն էր: Առավոտը հարցնում եմ, թե որտեղ է սովորում: Պարզվեց՝ Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում: Որքան էլ ուզում էր համոզել, որ մարտի 8-ը Բրյուսովի տղերքի համար այդքան էլ վախենալու չի անցնում, ինչքան որ մենք ենք պատկերացնում, այնուամենայնիվ, չհավատացի: Կանգառ հասնելուն պես բաժանվեցինք, տարբեր երթուղայինների էինք սպասում: Կուրսեցուս՝ Արամին, ասացի, որ այսօր կարող ենք հանդիպել ու աշխատել դիպլոմայինի վրա: Առաջարկեց, որ դասերից անմիջապես հետո գնանք մեր տուն, բայց ասացի, որ գործեր ունեմ մինչև ժամը հինգը կամ վեցը: Բնականաբար, չասացի, որ գիժ եմ ու հոգեբանի մոտ եմ գնում: Օրինակ, եթե դու լինեիր՝ կասեի՞ր էդպիսի բան: Այ, ես էլ չասացի:

Վլադիկ Սամվելովիչ... զգում եմ ինձնից հետո նրա հաջորդ հաճախորդը լինելու է Մաhը: Ուժեղ հազում է «ուժեղ հազ»... աչքիս ես էլ եմ մեռնելուն մոտ կանգնած: Այսօր Արամը բնակարանս մառախուղով էր պատել: Դե թաքուն է ծխում ծնողներից ու երբ տեսավ իմ ազատությունը տան մեջ, երանություն տվեց ու սկսեց անդադար ծխել: Չեմ

կարողանում հարմարվել այս փոքրերի հետ, բան չունեմ ասելու՝ մեր միջև տարբերությունը ընդամենը երեք տարի է, բայց դե ծնողներից թաքուն ծխելը, երանություն տալն ինձ... համոզված եմ՝ երեք օր ավել չէր կարող այս տան մեջ մնալ: Ենթադրում եմ՝ անգամ ձվածեղ պատրաստել չի կարողանում... ի՞նչ երեք օր... երեք ժամ՝ մաքսիմում:

Այսօր վերջապես Վլադիկ Սամվելովիչին տվեցի իր պահանջած 200000 դրամը: Երեկ մամայի մոտ գնացի, երկար զրուցեցինք, հետո էլ փողը տվեց, ու վերադարձա տուն: Պապային էինք հիշել... «լռություն»... հետո հարցրեց, թե ինչպես են ընթանում գործերս հոգեբանի հետ: Ասացի՝ լավ, բայց ուզեցի մի բան հասկանալ: Մայրս դեմ չէր հոգեբանի մոտ իմ գնալուն, հակառակը, նա կողմ էր դրան, նույնիսկ մինչև Վաչեի ասելը նա էլ էր մեկ անգամ ասել, երբ դեռ նոր էի բանակից վերադարձել: Բայց պատճառը ո՞րն էր... ինչո՞ւ էր նաև նա կողմ դրան, հարցրեցի նրանից: Ասաց, որ բանակից գալուց հետո հաճախ էի իր հետ կոպիտ խոսում ու հակառակվում, իսկ հետո մեղքերս քավելու համար «բարիացած» գալիս էի տուն: Դե հա, բոլորն էլ այդպիսին են: Բոլորն էլ ծնողների հետ կոնֆլիկտ են ունենում, իսկ շտկելու ու ներողություն խնդրելու փոխարեն իրենց 180 աստիճանով փոխում են ու վերադառնում՝ կարծես ոչինչ էլ չի եղել: Բայց մաման ասաց, որ իմն այդ դեպքերից չէր: Հատկապես նրանից հետո, երբ ես ջարդեցի ծաղկամանը՝ հորս առաջին նվերը մամային... Ստո՞պ... այդպիսի բան չի էղել... դու հիշո՞ւմ ես այդպիսի բան, դու այդպիսի բան կարո՞ղ էիր քեզ թույլ

տալ... իըմ, Հա՛մ: Այդ ծաղկամանը հայրս էր նվիրել այն ժամանակ, երբ նրանք դեռ նշանված էլ չէին, կարծեմ մորս ծննդյան կապակցությամբ էր: Իսկ դու ջարդել ես այն... Ես ինձ երբեք այդպիսի բան թույլ չէի տա: Նույնիսկ ամենաագրեսիվ պահին, ես այդպիսի բան չէի անի: Չէ՞ որ դա մորս ամենաթանկ իրն էր: Անկեղծ ասած, շոկի մեջ ընկա, երբ իմացա, որ այդպիսի բան եմ արել: Դե մորս չհավատալ ես չեմ կարող... ինքը չէր խաբի՝ հաստատ: Ինչի՞ խաբեր: Ըստ ո՞ր ալիբիի: Ուրեմն՝ իրոք, ջարդել եմ... բայց ես չեմ արել նման բան, չեմ հիշում, գրողը տանի... ո՞ւմ հավատամ: Վլադիկ պապիկին: Ով մինչև այսօր ինձ հուզող ոչ մի հարցի պատասխանը չի տվել: Մամայից հարցրի, թե ուր է հիմա այդ ծաղկամանը, ասաց, որ դեն է նետել, միայն փշուրներ էին մնացել դրանից: Հարցրեցի, թե երբ է տեղի ունեցել այդ դեպքը, ասաց՝ մոտ երկուսուկես տարի առաջ: Հետո հարցրեցի, թե ինչու մինչև հիմա ինձ դրա մասին չէր պատմել: Նա լռեց: Մաման նկատել էր, որ ես պարզապես մոռացել էի այդ դեպքը, բայց միգուցե այստեղ հոգեբանի գործ չկա: Միգուցե սա սկլերոզ է կամ հիշողության կորստի հետ կապված որևէ այլ հիվանդություն: Սրանք հոգեբանական հիվանդությունների շարքի՞ն են դասվում, թե՞ ոչ, բայց... բայց ինչ, բայց... այս հիմար լաբիրինթոսից թվում է, թե այլևս ելք չկա:

«կրակայրիչի ձայն» «ծուխը քաշում է թոքերը»

Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում: Այսօր Վլադիկին ամենաառաջինը հենց դա եմ պատմել: Պատմել եմ, որ մորս ամենաթանկ նվերը ավիրել եմ ու չեմ հիշում դեպքը: Իսկ ինքն ասաց, որ ամեն

ինչին կանդրադառնանք հերթով, դեռ ժամանակը չէ: Գրողը քեզ տանի, Վլադիկ, մնացել է ընդամենը երկու, լավագույն դեպքում՝ երեք հանդիպում: Ե՞րբ պետք է գա այդ ժամանակը: Ջայրացա այդ պահին ու ասացի՝ «Վլա՛դիկ ձյա, ես չեմ պատրաստվում ևս 200000 դրամ Ձեզ վճարել ու նորից անցնել միամսյա կոնսուլտացիաներ: Չեմ կարծում, որ մեր վերջին հանդիպումների ընթացքում ինչ-որ բան կբացահայտվի, ես ուղղակի ուզում եմ պատասխաններ ստանալ, ուզում եմ, որ այս ամենը արդարացնի իմ սպասելիքները: Իմ կարծիքով՝ դրա ժամանակը եկել է արդեն»: Բժիշկը լռեց ու ներողություն խնդրեց՝ ասելով, որ կոնկրետ այս պահին նա ինձ օգնել չի կարող: Ես մի պահ ցանկացա պոռթկալ, գոռալ ու ասել՝ «բա, գրողը տանի, ե՞րբ կկարողանաս, Վլադիկ»... բայց չարեցի: Ի՞նչ է մտածել այս շառլատանը: Իրեն լրիվ դրել է Մավրոդիի տեղը: Ուզում է փողերը ստանալ, իսկ հետո գողեգող ու սուսուփուս կորչել աշխարհի երեսից: Հետո ի՞նչ, որ մի քանի բարձրագույն կրթություն ունի, հետո ի՞նչ, որ մի քանի գիտական թեզ է պաշտպանել: Հնարավոր է՝ այնքան է խորացել հոգեբանության մեջ, որ սկսել է մարդկանց կառավարել, հատկապես նրանց, ովքեր մոլորության մեջ են: Չնայած չեմ կարծում, որ իմ գիտակցության հետ խնդիր կա: Չեմ կարծում, որ Վաչեն ինձ վատ մարդու խորհուրդ կտար: Եթե այս ամենը ցնորք չէ ու մտացածին բաներ չեն, եթե այս ամենը, իրոք, կատարվում է, այլ ոչ թե իմ աչքին է երևում, ուրեմն ես գիտակից վիճակում եմ և հուսալի ձեռքերում: Վաչեն ինքը կուզեր, որ ամեն ինչ

կարգավորվեր, ինքն այն մարդը չի, ով ինձ անդունդը կգցեր: Եվ հետո ի՞նչ, որ շաբաթներով էլ չենք շփվում...

Վլադիկ Սամվելովիչն ասաց, որ ամեն ինչ լավ կլինի, ուղղակի պետք է իր հարցերին պատասխանեմ ու շարունակեմ վստահել իրեն: Իսկ հարցերը աբսուրդի ժանրից են՝ ի՞նչ ֆիլմ եմ սիրում՝ Տարանտինոյի «Inglourious basterds»-ը, հետո հարցրեց՝ որ գիրքն եմ սիրում, ասացի՝ Ժյուլ Վեռնի «80 օր աշխարհի շուրջը», հետո հարցրեց սիրածս ուտելիքը, ու մինչև հարցին պատասխանելը ես հարց տվեցի. «Վլադ ձյա, էս հարցերը, ավելի ճիշտ կլիներ, առաջին հանդիպմանը տայիք, ոչ թե վերջից երրորդին»: Նա ժպտաց, ես էլ ասացի, որ ցանկացած բան, միայն թե քաղցր լինի: Նորից հարցեր տվեց, արդեն չեմ հիշում, թե ինչ հարցեր եղան: Վերջում էլ հավատքից խոսեց: Ասացի, որ ծանոթ եմ Աստվածաշնչին, բայց հավատացյալ չեմ: Հարցրեց՝ խաչ կրում եմ, թե ոչ: Պատասխանեցի, որ չեմ կրում: Երկու պատճառ կար. նախ չեմ սիրում, երբ տղան վզի ակսեսուարներ է կրում, չէ՛, ես առհասարակ չեմ սիրում, երբ տղան ակսեսուարներ է կրում, բացի, իհարկե, ժամացույցից: Չնայած ժամացույց նույնպես չեմ կապում, և երկրորդ՝ ես մոլի հավատացյալ չեմ, չեմ կարող ամեն շաբաթ եկեղեցիներ գնալ ու շարականներ լսել, ավելի նախընտրելի է Արտյոմի ծանր ռոքը լսելը:

Է՜հ., է՜հ... տեսնես ինչի՞ է հասնելու բժիշկն իր այս ձայնագրությունների մտքերով:

Միշտ չեմ սիրել հոգեբանությունը: Օրինակ՝ ոնց կարող է մարդ իմանալ, թե ինչ կա դիմացինի

մտքին: Հոգին Աստծունն է: Այն կառավարելը՝ սատանայինը: Վատ հոգեբանները պետք է ուղարկվեն դժոխք: Չէ՞ որ հոգի վաճառելը գործարք է սատանայի հետ: Իսկ ես ոչ միայն ինքնակամ եմ իմ հոգին հանձնում Վլադ Սամվելովիչին, այլ նաև փող եմ վճարում դրա համար, որպեսզի նա կառավարի այն: Ուղղակի հոյակապ է:

«կատվի մլավոց»

– Քի՛թթի, ռա՛դ եղիր, այսօր ուտելու բան չկա: «կատվի մլավոց» Դու՛րս գնա սենյակից, գնա սոված ման արի: «դռան չրխկոց»

Ոնց եմ հոգնել ես այս կատվից: «ուժեղ հազի ձայն»

Չէ, դու լավ չես: Ուզո՞ւմ ես՝ թեյ դնեմ քեզ համար: Դու թեյ սիրում ես: Չնայած թեյը քեզ չի օգնի, Համ ջան, այդ ամենը ծխախոտի արդյունքն է: Թե ասա ինչի խնդրեցիր Արամին, որ չորս հատ ծխախոտ թողնի: Չնայած գիտեմ... «քմծիծաղ» սիրում եմ…

Քունս տանում է ահավոր: Գնանք քնելու...

Օ՜ֆ, օ՜ֆ... էս ձայնագրությունները դառել են թմրանյութ ինձ համար... Հա, ի դեպ, Վլադիկը հարցրեց, թե արդյոք թմրադեղեր չե՞մ ընդունում: Ասացի, որ նույնիսկ փորձած էլ չկամ... թեպետ դրանց ազդեցության տակ միգուցե կկարողանայի հրաշալի նկարներ նկարել, ասենք՝ Դալիի ոճով: Ճիշտ չե՞մ ասում, չնայած քեզ ինչի եմ ասում, դու արվեստից գլուխ չես հանում:

Քեզ թողնեն՝ ամբողջ օրը Call of Duty խաղաս: Հետոո… այդ խաղով ի՞նչ պետք է անես: Հը՞մ:

Գործի ընդունվել չես կարող: Ոչ մեկին չի հետաքրքրում, թե որքան level ես անցել, թե որքան ուժեղ ես խաղում, ու, գրողը տանի, թե որքան չիտկոդեր գիտես: Համ, այս խաղերի թարգը տուր, իրոք, մաման ճիշտ է ասում: Այս խաղերը, հնարավոր է, ագրեսիա են քո մեջ արթնացնում: Հնարավոր է՝ բոլոր հարցերի պատասխանները թաքնված լինեն հենց այդտեղ:

Է՜հ… գոնե Վլադիկ Սամվելովիչը մի արժեքավոր բան ասեր: Արդեն այն բանին եմ հասել, որ ինքս ինձ եմ քննում ու քննարկում իմ վիճակը: Հարցերի պատասխանները գտնելու համար ամեն ինչի պատրաստ եմ: Գնամ մի բաժակ տաք շոկոլադ երևի խմեմ… էն Nutellan էլ ամբողջությամբ կերա, գոնե մի քիչ թողած լինեի հիմա…

«հեռախոսի զանգ» Էս ո՞ր մի գիժն է զանգում էս ժամին: «ոտնաքայլեր» – Ալո… Ծյոմ ջան, իմ անունը Համ չի, իմ անունը Համլետ է: Խնդրում եմ մի կրճատիր անունս, ինձ դուր չի գալիս:… Չէ՛, ախպերս, կներեսի բան չկա, ուղղակի դուրս չի գալիս՝ դրա համար եմ ասում:… Չէ, չես խանգարում:… Գրողը տանի, ի՞նչ: Մերսի, որ ասացիր…

«դռան շրխկոց» «արագ ոտնաքայլեր» Լվացքի պարանից շորերս ընկել են ցած… «բացում է պատուհանը» «ուժեղ քամու ձայն» Գրողը տանի, լավ էլ ուժեղ քամի է դրսում: Լավ, իջնեմ հավաքեմ շորերը: Վաղվա համար մաքուր շոր չունեմ, մնացի տանը: Ամոթ էլ է. մաքուր շոր չունենալու պատճառով վաղը դասի չեմ կարող գնալ: «Թքած, տաք բաճկոնի տակից կարճաթև կհագնեմ ու կգնամ: Ի՞նչ կա որ: Ցերեկները այդքան էլ ցուրտ չի:

Լավ, վերջ, «կատվի մլավոց» գնացի շորերս հավաքելու: Քանի ավտոմեքենաներ չեն անցել դրանց վրայով:– Քի՛թթի, ոտքիս տակ մի՛ ընկի, ա՛յ էշ:

Էշ կատու: Հա, հա, հա՜:

Մինչ վաղը չէ մյուս օրը: «ազդանշան»

# Գլուխ 10

«ազդանշան»
Ձայնագրություն համար տասներորդ, միգուցե և վերջին: Դեկտեմբերի 5: Չորեքշաբթի: 2012 թվական: 20:08:

Վլադ Սամվելովիչն ասաց, որ շատ հնարավոր է՝ այլևս պետք չգան ձայնագրությունները: Ամենայն հավանականությամբ սա վերջինը կլինի, կամ՝ նախավերջինը: Հուսանք, որ վերջինն է, այլապես ես կգժվեմ հենց այս ձայնագրություններից: Երեկ, ի դեպ, ֆանտաստիկ մի միտք ծագեց ուղեղումս: Մտածում եմ, որ Վլադ Սամվելովիչը ոչ թե բուժում է, այլ ընդհակառակը՝ հիվանդացնում: Չէ՞ որ ես նորմալ մարդ էի, երբ դիմեցի նրան... չնայած նորմալ էի՞ որ... ամեն դեպքում, ամեն անգամ ինքս ինձ չէի ձայնագրում ու հոգեբանի մոտ չէի հաճախում... Ինչևէ...

Հեռախոսով ձայնագրվելն էլ է անհարմար: Բայց դե դրան էլ հարմարվեցի: Մտածում եմ՝ արժե նոր Iphone գնել... չնայած հետո փոշմանելու եմ:

Միշտ էլ այդպես է եղել: Ձգտելու զգացողությունը ավելի եմ սիրում, քան դրան հասնելու պահը: Անհասանելին միշտ ցանկալի է: Ցանկությունը կորում է, երբ դառնում է հասանելի: Եթե չի կորում, ուրեմն դա այն էր, որի համար արժեր պայքարել ու հասնել: Ինձ միշտ թվում է, որ ինչ-որ բան պակասում է: Դա արդեն հասցրել եմ նկատել: Միշտ դժգոհ եմ: Օրինակ, հեռախոսս դուրս չէր գալիս, Nokia 3230 էր, որոշեցի նոր հեռախոս գնել: Մտա հեռախոսների խանութ, ուսումնասիրեցի, գտա այս մեկը, որով այժմ ձայնագրվում եմ: Ինձ դուր եկավ տեսքը, ինչպես նաև իր համեստ ֆունկցիաները: Ես որոշեցի գնել այն: Բավական գումար չունեի մոտս, որոշեցի ընդունվել աշխատանքի: Իսկ աշխատանքիս մասին էլ չպատմեմ. հիշելու ցանկություն չկա: Ստացած աշխատավարձի մի մասը գումարեցի մամայի տված փողերին ու գնեցի հեռախոսը: Գնելուց ուղիղ 15 րոպե հետո այդ հեռախոսը վայելելու ցանկությունը վերացավ: Դե բնական է, արդեն իմն էր հեռախոսը, բայց չունեի այն վայելելու առաջվա տրամադրվածությունը: Ու այդպես միայն հեռախոսի հետ չեղավ: Նույնիսկ PC-խաղեր խաղալիս իմ ակնկալիքները միշտ ավելի շատ են լինում, ես ավելին եմ սպասում, բայց միևնույն է... Միգուցե ես անշնորհակալ եմ կամ չեմ գնահատում այն, ինչ ունեմ, և միևնույն է, ես մնում եմ իմ կարծիքին՝ այն, ինչն անհասանելի է, միշտ էլ ցանկալի է: Ամեն դեպքում ձգտել ինչ-որ մի բանի միշտ է պետք. լինի դա նյութական, թե ոչ նյութական: Որովհետև երբ ինչ-որ բանի ձգտում ես, կյանքդ վերաիմաստավորվում է և ուժ է տալիս

շարունակելու ապրել: Ավելի հետաքրքիր է, երբ ձգտում ես ինչ-որ բանի, որին երբեք չես հասնի: Օրինակ՝ կատարելությանը: Կատարելությունը միշտ էլ բոլորիս համար ցանկալի է, պատճառը մեկն է՝ այն անհասանելի է: Ու երբ գա այն օրը, երբ մարդկությունը հասնի կատարելության, կատարելությունը կդառնա անհետաքրքիր բան մարդկության համար: Ինչևէ... Խմել չեմ սիրում, բայց երբ թեկուզ մի գրամ ալկոհոլ եմ օգտագործում, այսպես սկսում եմ փիլիսոփայել:

Այսօր մեր կուրսի Արամի ծնունդն էր: Վլադ Սամվելովիչին տեսնելուց հետո միանգամից գնացի իրենց տուն: Ճիշտն ասած ծնունդ նշելու տրամադրություն չկար: Ամենից շատ ուզում էի տուն գալ, Քիթթիին շոյել ու նյարդերս հանգստացնել: Չէ՞ որ այսօր էլ անցավ. ևս մեկ անիմաստ հանդիպում բժշկի հետ: Բայց դե ինչ անեմ... հո չեմ պոռթկա ու բղավեմ Վլադ Սամվելովիչի վրա: Մարդը պրոֆեսիոնալ է իր գործում ու հույսեր է տալիս, որ հաջորդ իսկ հանդիպումից ինձ բուժում կնշանակի: Ուղղակի հետաքրքիր է՝ մինչև բուժումը գոնե դիագնոզ կտա՞: Ինչևէ...

Արամի կենացը չխմել չէի կարող. ստիպված եղա կես բաժակ օղի խմել: Ծնողների կենացից հրաժարվել նույնպես չէի կարող, բաժակումս օղու մնացած պարունակությունն էլ այդ պահին դատարկվեց ստամոքսիս մեջ: Իսկ հետո էլ սկսեցի արդարացումներ փնտրել, որպեսզի նախատեսվածից շուտ հեռանամ: Կուրսի կեսը իրենց տանն էր, բակի ընկերները, դասարանցիները: Մի խոսքով, երևի մոտ 15-17 մարդ կար: Ասում եմ,

երբ տարբեր մարդկանց իրար գլուխ են հավաքում, ամենից շատ ատում եմ, երբ հրավիրում են չորսից ավել մարդկանց: Իսկ անծանոթները մոտենում ու շաբլոն հարցեր են սկսում տալ՝ «Որտե՞ղ ես սովորում», «Ո՞ր փողոցում ես ապրում», «Արամին որտեղի՞ց ես ճանաչում»... և նմանատիպ հիմարություններ: Արդարացում փնտրելիս պետք է այնպիսի բան մտածել, որից հետո հակաճառումներ չլինեն: Իսկ այդպիսի արդարացումները միայն կարող են կապված լինել մի բանի հետ, որն, անկասկած, ավելի վեր է այն մարդուց, ում մոտ փորձում ես արդարանալ, տվյալ դեպքում՝ Արամից: Արամը ասոցացվում է ընկերության հետ, իսկ ընկերությունից վեր ընտանիքն է: Ասացի, որ մամային տանն օգնելու բաներ կան: Իմիջիայլոց, պետք է նաև նշես, թե կոնկրետ ինչով պետք է օգնես, այնպես, որ արդարացումից հետո հարցեր չհաջորդեն: Ասացի, որ խոհանոցի լամպն է փչացել, պետք է վերանորոգեմ, այլապես այնտեղ գործ անելը ուշ ժամին անհնար կլինի՝ մթության պատճառով: Ի դեպ, «այլապես»-ը նույնպես պետք է շեշտել, դա կարծես արդարացում է՝ արդարացման մեջ: Մի տերմին կար, Վաչեն այնքան շատ էր սիրում, որ միշտ առիթ էր փնտրում այն օգտագործելու՝ ռեկուրսիա: Այդ տերմինը սկսել էր ինձ էլ դուր գալ: Կարելի է ասել, որ այս տարբերակը ռեկուրսիվ արդարացում է: Ինչևէ...

Խմելուց հետո ալկոհոլը իր ազդեցությունը իրոք որ թողել է: Այսօր անդադար ուզում եմ խոսել: Ուզում եմ խոսել ամեն ինչից ու քննարկել

ամեն ինչ: Ճիշտ է, ընդհանուր առմամբ, ես դեռ խոսում եմ ոչնչից:

Երևի անհասանելիության թեմային վերադառնամ: Ու մի բացառություն անեմ: Չէ՞ որ ինքս էլ գիտեմ, որ կար մի բան, երբ ես սիրեցի, համ հասնելու ձգտումը, համ էլ այն պահը, երբ հասա: Միգուցե, եթե խմած չլինեի, երբեք էլ չէի պատմի Նարեի մասին: Գրողը տանի, եթե մի քիչ ավել խմած լինեի, անգամ կնկարագրեի, թե ինչ է ինձ հետ կատարվում, երբ բարձրաձայն իր անունն եմ տալիս:

Շատ եմ սիրում աղջիկների այն անունները, որոնք բաղկացած են չորս տառից, հատկապես, երբ վերջանում են ձայնավորով: Ես շա՜տ եմ սիրում այս անունը՝ Նարե...

Բանակից նոր էի վերադարձել ու փորձում էի նորից հարմարվել այս ամենի հետ: Դե հա, բան չունեմ ասելու, իմ ծառայությունը շատ հեշտ անցավ, բայց ամեն դեպքում, ես երկու տարի շարունակ քաղաք չեմ իջել ուղղակի զբոսնելու, չհաշված ընթացքում եղած Նոր տարիները: հիմա արդեն ազատ էի: Նոր կուրսում ամեն ինչ անհետաքրքիր էր: Մի խոսքով, կային շատ նոր բաներ:

Մի օր սովորականի պես գնացի Վաչեին տեսնելու: Պոլիտեխնիկի մասնաճյուղերից մեկի դռան առջև կանգնած էի: Ուժեղ անձրև էր գալիս՝ նոյեմբեր ամիսն էր: Որոշեցի մտնել շենք ու դուռը բացելուն պես մի աղջկա բախվեցի: Նա չնկատեց ինձ, քանի որ անձրևից խուսափելու համար արևանոցն էր փորձում բացել, և ուշադրությունն արևանոցի կողմն էր: «Կներեք»: «Ամեն ինչ նորմալ է, դուք ինձ կներեք»:

Սա իմ ու Նարեի առաջին երկխոսությունն էր: Շատ կարճ էր, համամիտ եմ: Դուրս շատ եկավ այդ աղջիկը: Սև, գեղեցիկ վարսերը, խորը, կլոր, սև, պարզ ու անմեղ աչքերը, բայց խորամանկ աչքերը: Այդ խորամանկ ու անմեղ աչքերը: Սիրում էի նկարել նրա աչքերը: Եթե ես նկարչության հետ կապ չունենայի, երբեք չէի կարողանա առաջին հայացքից ֆիքսել բոլոր այն դետալները, որոնք տեսա նրա աչքերում: Նուրբ դիմագծեր ուներ, հայացքը գլխիցս դուրս չէր գալիս: Վաչեին ես բան չասացի: Դե, շատ մեծ համալսարան, հազարավոր ուսանողներ. անիմաստ էր:

Նոյեմբերի վերջերին, երբ ևս մեկ անգամ գնացի Վաչեին դիմավորելու, հանկարծ նորից նկատեցի այդ աղջկան: Մտավ նույն այն լսարանը, որի առջև ես ու Վաչեն էինք կանգնած: Ուրախացա ու մտածեցի, որ Վաչեի կուրսից է: Բայց պարզվեց, որ զուգահեռներից է: Ասացի Վաչեին, որ այդ աղջկա դեմքը գամվել է ուղեղիս մեջ ու դուրս չի գալիս: Վաչեն ասաց, որ հանգիստ մնամ: Ասաց, որ նա ինչ-որ բան կմտածի: Մի քանի օր անց Վաչեն զանգեց ու ասաց, որ ամբողջ կուրսով որոշել են փարթի կազմակերպել: Ու չնայած որոշել են կողմնակի անձանց այդ փարթիին չհրավիրել, Վաչեն խոստացավ կազմակերպել իմ և Նարեի «բախումը» այդ փարթիի ընթացքում: Դե Վաչեն ուսանողական խորհրդում շատ ծանոթներ ուներ, և իր համար դժվար բան չէր նման բան կազմակերպելը:

Երբ եկա փարթիին, տեսա նաև Նարեին: Մի սեղանի շուրջ էինք նստած, բայց չէինք շփվում: Փորձեցի խոսել, բայց այդ պահին նոր ուղեղիս

hասավ, որ անունը դեռ չգիտեմ: Փորձեցի հարցնել, բայց չկարողացա այդքան ուժ իմ մեջ հավաքել: Նարեն եկել էր իր ընկերուհու համար, նա այդպիսի տեղեր չէր սիրում: Ապացույցն եղավ այն, որ մեկ ժամ հետո լքեց ակումբը:

Ես ինքս էլ չեմ սիրում փարթիներ: Փարթիին իմ ու Նարեի բախումը այդպես էլ տեղի չունեցավ:

Ես այդպես էլ չքնեցի այդ գիշեր:

Բայց բախտը ժպտաց ինձ դեկտեմբերի 24-ին, երբ Վաչենց ամբողջ հոսքը ծրագրավորումից քննության էր: Ես այդ օրը Վաչեին էի պարզապես սպասում, որ քննությունից հետո գնայինք ֆուտբոլ խաղալու: Տեսա, թե ոնց է Նարեն մտնում քննասենյակ: Չգիտեմ դա ճակատագիր էր, թե ոչ, բայց քննասենյակ մտնելուց մոտ տասը րոպե անց Նարեն դուրս եկավ ու հեռախոսով զանգեց ինչ-որ մեկին ու բառ առ բառ ասաց հետևյալ նախադասությունը. «Բարև, լսի, դասախոսը ինձ խնդրեց, որ իր համար դեկանատից ստուգման ցուցակը բերեմ, ու ես հիմա դեկանատ եմ բարձրանում, բայց մինչ այդ հասցրել եմ տոմսը քաշել, ու զգացի, որ տոմսի հարցերից ոչ մեկի պատասխանը չգիտեմ: Իմը հինգերորդ տոմսն է: Խնդրում եմ՝ պատասխանները գտի ու արագ զանգի ինձ, թելադրի: Եթե այս քննությունը ես վատ հանձնեմ, անվճարից կկտրվեմ: Լավ, ես ամենաշատը տասը րոպե ժամանակ ունեմ»: Նարեն բարձրացավ դեկանատ:

Ուսանողներ: Մարդիկ, ովքեր միշտ կարճ ճանապարհներ են փնտրում քննությունը ստանալու համար: Իսկ ամենակարճ ու ամենադասական

տարբերակը հուշաթերթիկներ պատրաստելն է: Ու չկա գոնե մեկ ուսանող, ով չունենա տվյալ տոմսի պատասխանները: Դա նույնն է, երբ բժիշկը առանց խալաթի է: Դե իհարկե, բացառություններ միշտ էլ հանդիպում են: Օրինակ, մեր կուրսի Ասյան ու Վլադ Սամվելովիչը: Ասյան ազնվագույն ուսանող է, անգամ ծայրահեղ դեպքում հուշաթերթիկից չի օգտվի: Իսկ, ա՛յ, Վլադ Սամվելովիչը այդքան էլ սկզբունքային չէ, իր սպիտակ խալաթը հագավ միայն ամենածայրահեղ դեպքում: Բայց դե դա միակ հանդիպումն էր, որի ընթացքում սպիտակ խալաթով էր:

Ես իսկույննեթ վազեցի այն լսարանը, որտեղ Վաչեն քննության էր, դուռը կիսով չափ բացեցի: Վաչեն ամենավերջում էր նստած, ու եթե անգամ գոռայի, նա չէր էլ լսի: Բարեբախտաբար դիմացը՝ առաջին շարքում, նստած էր Վաչեի ընկերը, ում ես էլ էի ճանաչում: Շշուկով հասկացրի, որ ինձ այդ քննության հուշաթերթիկն է պետք: Կոնկրետ 5-րդ տարբերակի հուշաթերթիկը: Վաչեի ընկերը՝ Արեգը, հարցրեց, թե ինչիս է պետք: Ասացի, որ ժամանակ չունեմ բացատրելու: Նա էլ շշնջալով հասկացնել տվեց, որ դասախոսին շեղել է պետք: Դասախոսը այդ պահին շշուկներ լսեց ու մոտեցավ Արեգին՝ նկատողություն անելու: Ես էլ, պահը բաց չթողնելով, բացեցի դուռը ու սկսեցի դասախոսին շեղել: Մտա ու ասացի՝ «Բարև ձեզ, Ռազմիկին կարելի՞ է»: Դասախոսը նայեց իմ ուղղությամբ, բարկացավ վրաս, որ քննություն է, ու իրավունք չունեմ խանգարելու վերջինիս ընթացքը: Ես ևս մեկ անգամ պնդեցի, որ ինձ շատ շտապ Ռազմիկն է

հարկավոր: Նա է՛լ ավելի բարկացավ: Ու այս իրարանցման մեջ վերջապես Արեգը գտավ 5-րդ տոմսի պատասխանները: Մնում էր, որ ինձ փոխանցեր: «Ուժեղ» տղա ձևանալով՝ Արեգը ոտքի կանգնեց, մոտեցավ ինձ ու կոպիտ տոնով ասաց. «Ապե՛, քննություն է այստեղ, խանգարում ես, դո՛ւրս գնա, թո՛ղ հանգիստ գրենք»: Քննասենյակից դուրս նետեց ինձ ու 5-րդ տարբերակի հուշաթերթիկը վայր գցեց միջանցքում, ինձ տեսանելի մի վայրում: Ես էլ հասցրեցի Արեգի հասցեին ուղղված դասախոսի ողջույնները լսել, հետո իսկույն վերցրեցի հուշաթերթիկը: Ամենահետաքրքիրն այն էր, երբ հետո Վաչեից իմացա, որ նրանց խմբում Ռազմիկ անունով մարդ չկար: Ինչևէ...

Ես ունեի 5-րդ հարցաթերթիկի պատասխանները: Երբ մի քանի րոպե անցավ, նկատեցի Նարեին՝ սանդուղքներով իջնելիս: Իսկույնևեթ մոտեցա ու ասացի. «Կներես, ես քո խոսակցությունը լսեցի, երբ դուրս եկար լսարանից ու ո՛նց հասկացա, քեզ 5-րդ տոմսի պատասխաններն են պետք: Ինձ մոտ այն կա»: Ու պարզեցի թուղթը: Նարեի ժպիտն այդ պահին անմոռանալի էր: Կարծես այդ պահին նա ուզում էր գրկել ու շնորհակալություն հայտնել ինձ, բայց նա արագ վերցրեց թուղթը, շատ էր խառնված, ասաց՝ «այո՛, հենց սա՛ է, շատ շնորհակալ եմ» ու, ի զարմանս ինձ, արագ մտավ լսարան:

Այդպիսի ռեակցիա չէի սպասում: Վաչեն դուրս եկավ, բայց խնդրեցի նրան, որ առանց ինձ ֆուտբոլի գնա: Պատմեցի տեղի ունեցածը: Վաչեն էլ ասաց, որ երբ դուրս գա, հաստատ կխոսենք: Դուրս գալուց նկատեցի նրան, մոտեցա ու

հարցրեցի, թե ինչպես հանձնեց: Ասաց, որ գերազանց է ստացել, ու շնորհակալություն հայտնեց: Այդ պահից սկսած երկուսիս մոտ ինչ-որ մի բան սկսվեց: Մենք խոսելով դուրս եկանք համալսարանի տարածքից: Իսկ վերջում նա հարցրեց, թե ինչպես կարող է իր շնորհակալությունը հայտնել ինձ, ես էլ ասացի, որ պարզապես գտնի և ընկերության առաջարկ անի ինձ ֆեյսբուքում: Նա այդպես էլ արեց: Մենք մոտ մի ամիս գրեթե ամեն օր խոսում էինք... Նոր տարուն մի անգամ նույնիսկ հանդիպեցինք, ու չնայած որ դրսում ուժեղ ձյուն էր գալիս, զբոսնեցինք: Նարեն սիրում էր ձյուն... շա՜տ: Ինչնէ...

Իսկ փետրվարին ես վերջապես իմ մեջ ուժ հավաքեցի ու մեր հերթական հանդիպման ժամանակ իրեն ընկերության առաջարկ արեցի, ասացի, որ սիրում եմ իրեն: Այդ օրերին ինձ մոտ ամեն ինչ հոյակապ էր, ես աշխատում էի, ճիշտ է, անիմաստ ու հորինված կոնֆլիկտի պատճառով ինձ գործից հանեցին, բայց դե Նարեն ինձ հետ էր: Նարեն էլ ինձ էր սիրում: Ես կարծես վերածնվել էի:

Նարեն ձևականությունների հետևից չընկավ: Չասաց այն անիմաստ նախադասությունները, որոնք սովորաբար աղջիկները ասում են այդ դեպքերում. «Գիտես, դու լավ տղա ես, ես քեզ հավանում եմ, բայց չէ, մենք չենք կարող միասին լինել»:

Չէ: Նա շատ լավ էր համադրում խելքն ու սրտի թելադրանքը: Մի բան, որ շատ քչերի մոտ է ստացվում: Նա ինձ սիրում էր: Նա ուներ մի աքսիոմ, մի հրաշալի աքսիոմ. «Եթե սիրում եք իրար, ուրեմն փոխանցեք այն»:

Այդ պահից սկսած ես սկսեցի գնահատել այն ամենը, ինչ ունեմ: Հասկացա, թե ինչ լավ է, երբ ձգտում ու հասնում ես մի բանի ու չես հիասթափվում, այլ շարունակում ես էլ ավելի սիրել ունեցածդ:

Ես ու Նարեն շատ էինք կապված իրար հետ: Ամեն օր խոսում էինք, զբոսնում էինք ամենուրեք: Ամեն ինչ այս քաղաքում ինձ իրեն է հիշեցնում: Նա, իրոք, խենթ էր: Չէր սիրում հանդիպել մի տեղ, որտեղ արդեն հանդիպել էինք, ու ամեն անգամ նոր վայր էինք փնտրում հանդիպման համար: Մի օր ռոմանտիկ մի այգի, հաջորդ օրը շինարարական խանութի դիմաց: Հիշում եմ՝ մի անգամ մետրոյում էինք հանդիպել՝ «Սասունցի Դավիթ» կայարանում: Բայց ամենաինքնատիպ հանդիպումը կինոթատրոնում էր: Նախապես պլանավորել էինք շարքն ու տեղը: 6-րդ շարք, 13-րդ տեղում ես, 14-րդում՝ նա: Առանձին տներից դուրս եկանք, տոմսերը գնեցինք ու հանդիպեցինք կինոթատրոնի դահլիճում: Անշուշտ, Նարեն ուշացավ այդ օրը: Դրանք հրաշալի օրեր էին: Ինձ համար արդեն երեք թանկ բան կար՝ Նարեն, մաման ու Քիթթին:

Ես գիտեի Նարեի բոլոր գաղտնիքները: Գիտեի նրա բոլոր նախասիրությունները: Գիտեի, թե ինչն է նա իմ մեջ գնահատում: Նա սիրում էր իմ նկարները: Ի դեպ, Նարեն նաև իմ մուսան էր. այդ ժամանակ շատ ավելի հեշտ էր ստացվում նկարել: Ես չէի սիրում ծխախոտ ու ալկոհոլ ու ինքնահաստատվելու համար շատերի պես այդ տարբերակը չէի ընտրում: Նարեն իմ մեջ դա շատ էր գնահատում: Զարմանում էր քաղցրի հանդեպ իմ անտարբերության վրա: Նա սիրավոր քաղցրակեր էր:

Ամեն հանդիպմանը ինձ ստիպում էր մի կտոր միկադո գնել իր համար:

Նա գիտեր նաև, թե ինչը չեմ սիրում: Հեռախոսից միջից նկարները ջնջելու սովորություն ուներ: Ինձ հատուկ բարկացնելու փորձեր էր անում: Նման մանկական բաներ էլ ուներ:

Գրողը տանի, եթե կարողանայի մոռանալ այս ամենը: Այս ամենը հիշելն այնքան ցավոտ է ինձ համար:

Ընթացքում սկսեցին կոնֆլիկտներ առաջանալ մեր մեջ: Ասում էր, որ հաճախ եմ իր հետ կոպիտ խոսում: Բայց ես ձևը գտել էի, եթե կոնֆլիկտը շատ լուրջ չէր, միկադոն այն միշտ լուծում էր: Բայց ընթացքում, ավելի կոնկրետ՝ վերջում, մի բան եղավ, ինչը բաժանեց ինձ ու իրեն, նույնիսկ միկադոն չկարողացավ դրան լուծում տալ:

Մոտենում էր մեր ընկերության միամյակը՝ փետրվարի 18-ը: Մենք պատրաստվում էինք նշել այն: Մոտ մի ամիս կար մինչ այդ օրը: Նա գտել էր իր մանկության օրագիրը, որը շատ թանկ էր իր համար, այնտեղ նկարագրել իր պատանեկությունը, սիրահարության ու հիասթափության օրերը: Փոքր ժամանակ հետաքրքիր աղջնակ էր: Սիրահարվում էր ամեն պատահած տղային, մի քիչ տվայտվում ու տառապում, իսկ մի ամիս հետո մոռանում ու սիրահարվում մեկ այլ տղայի: Երևի բոլոր աղջիկներն են այդպիսին: Իհարկե, ինձ դա դուր չէր գալիս: Հատկապես նրա վառ նկարագրումներն օրագրում: Պատկերավոր նկարագրում էր, թե ոնց է սիրում այս տղային, թե ինչերի էր պատրաստ հանուն նրա հետ մեկ համբույրի: Ես չգիտեմ, դրանք

կարդալուց ավելի շատ ջղայնանում էի, թե խանդում, բայց միաժամանակ հասկանում էի, որ դա ընդամենը օրագիր է՝ գրված դեռահաս աղջկա կողմից: Եվ որ բոլոր դեռահաս աղջիկների մտքում էլ այդ տարիքում սերն է ու սիրահարվելը:

Այդ օրագիրը ես ուզում էի վերադարձնելՆարեին: Սակայն մի օր, երբ տուն մտա, այն ամբողջովին ճղված վիճակում գտա: Նույնիսկ վերականգնելն անհնարին կլիներ: Մտածեցի, որ սեղանին եմ դրել, Քիթթին էլ օրագրի վրա է կանգնել ու ճանկռելով ամբողջովին պատռել: Զանգեցի Նարեին ու ասացի, որ օրագիրը ճղվել է: Չհավատաց, ասաց, որ ապուշ կատակ է, ու ավելի լավ է, որ վաղվա հանդիպման համար նոր վայր մտածեմ: Դե նա ինձ լավ ճանաչում էր, ու, իրոք, օրագիրը ճղելը իմ ձեռագիրը չէր:

Երբ հաջորդ օրը հանդիպեցինք, նորից նայեցի Նարեին ու ասացի, որ հետս բերել եմ նրա ճղած օրագիրը: Նարեն էլ ծիծաղելով ասաց. «դե հա, բա ո՞նց, ճղել ու կերել ես թղթերը, դե դու թղթեր սիրում ես ուտել»: Նա, իրոք, չէր հավատում, բայց հայացքը իսկույն փոխվեց, երբ տեսավ ճղված օրագիրը: Ժպիտը չքվեց, արցունքն իսկույն ընկավ աչքից, որից հետո ուժեղ հարված հաջորդեց դեմքիս: Նա գոռաց փողոցով մեկ, որ ատում է ինձ, որ անսիրտ եմ ու նույնիսկ չեմ էլ հասկացել, թե ինչ արժեք է ունեցել իր համար այդ օրագիրը: Ես փորձեցի գրկել, հանգստացնել նրան ու հասկացնել, որ ես դրա մեջ բոլորովին մեղք չունեմ: Փորձեցի ասել, որ օրագիրը Քիթթին է հավանաբար ճղել, երբ մոռացել էի այն դարակում պահել և

պատահմամբ թողել գրասեղանիս վրա: Նա գոռաց վրաս, ասաց, որ չդիպչեմ իրեն ու խնդրեց, չէ՛, հրամայեց, որ գնամ: Ես ինձ չկարողացա զսպել: Որպեսզի Նարեն չտեսներ իմ արցունքները, ես շրջվեցի ու արագ քայլերով հեռացա՝ թողնելով նրան միայնակ:

Մի քանի ժամ հետո զանգեցի: Նարեն հանգիստ էր: Խնդրեցի, որ ինձ լսի, ասացի, որ կատուն է մեղավոր: Նա ասաց, որ ձեռ եմ առնում իրեն: Ասաց, որ կատուն կարող էր քերծել մեկ էջ կամ երկու էջ... Բայց այս օրագրի էջերի պատռվածքները երկրագնդի վրա ոչ մի կատու չի կարող անել: Սա մարդու արած է: Եվ պետք չէ մեղքը կատվի վրա գցել: Կատուն ձեռքեր չունի, որ միաժամանակ տասը էջ իրար հետ նույն տեղից ճղի... Ինչևէ... Ես ինքս էլ պարզ հասկանում եմ, որ, իրոք, կատուն չէր կարող ճղել այն:

Նա ասաց, որ կբաժանվենք: Որովհետև ես, իմանալով, թե որքան թանկ է նրա համար իր օրագիրը, ճղել եմ այն: Նա ինձ վստահել էր այն, նա ինձ էր վստահել այդ օրագրի մեջ գրված ամեն մի տողը: Նա ազնիվ էր: Նա շա՜տ ազնիվ էր: Իսկ ես վերադարձրեցի իր օրագիրը՝ իր ազնվությունը, ճղված վիճակում: Ատում էր սուտը: Համոզված էր, որ օրագիրը ճղել եմ ես, բայց ես մինչև վերջին պահը չընդունեցի դա: Չընդունեցի, որովհետև ես այդպիսի բան չեմ արել: Ես չգիտեմ, ո՛նց բացատրեմ դա, բայց մեղավոր չեմ դրանում: Ես մինչ օրս ատում եմ այդ օրը, այդ պահը, ես խեղդվում եմ կարոտից: Ես շարունակում եմ սիրել այդ աղջկան ամեն պահ, ամեն վայրկյան, ամեն ակնթարթ:

Մենք բաժանվեցինք: Մի ամիս հետո ես գնացի պոլիտեխնիկ, որպեսզի տեսնեմ նրան: Կանգնած էինք ճիշտ նույն տեղում, որտեղ առաջին անգամ տեսել էի նրան: Խնդրեցի, որ կանգնի, նայելով նրա աչքերի մեջ՝ ասացի. «Կներես»: «Ամեն ինչ նորմալ է, դու ինձ կներես»,- պատասխանեց նա ու գնաց:

Ա՜խ այդ շրջանները: Մեր բաժանման վերջին դիալոգը համընկավ մեր առաջին հանդիպման դիալոգի հետ: Ես կորցրեցի նրան ճիշտ նույն տեղում, որտեղ որ գտել էի: Դրանից հետո դադարեցի նրան հետապնդել: Դա մեր վերջին հանդիպումն էր: Սկզբնակետը շրջանի մեջ:

Նա խնդրեց, որ ներեմ իրեն: Ասաց, որ ինձ չի թողնում, պարզապես գնում է ինձնից: Ասաց, որ թողնելն ու գնալը տարբեր բառեր են: Գրողը տանի, ինչ կապ ունի՝ թողեց ինձ, թե գնաց. երկու դեպքում էլ նա ինձ հետ չէ: Արդարացումներ... Ռեկուրսիվ արդարացումներ... Անցել է մոտ ութ ամիս դրանից հետո:

«կատվի մլավոց»

– Քի՛թթի, սիրելի՛ս, թերևս դու միակն ես, ով ինձ չի լքում: Արի՛ ինձ մոտ, հրաշքս: Ահա, ես քեզ ուտելու բան եմ բերել, ինձ էլ թեյ կդնեմ, միասին կընթրենք: Արի՛ ինձ մոտ, սիրելի՛ս:

Ահա և վերջ: Իմ կարծիքով սա վերջին ձայնագրությունն է: Այնպես որ, «մինչ նոր հանդիպում» ասելու փոխարեն կասեմ՝ «հաջողություն»:

Ձայնագրման ավարտը: «ազդանշան»

# Գլուխ 11

«ազդանշան»

«Ձայնագրությունները կարող ես ավարտել, Համլետ ջան»:

Այսօր վերջապես լսեցի այդ նախադասությունը: Բայց, գրողը տանի, ինչու եմ շարունակում ձայնագրումը: Երևի այս ամենը դուրս գալիս է: Կամ էլ ուզում եմ կիսվել նոր նկարիս հետ:

Այսօր ամբողջ գիշերս նվիրել եմ նոր նկարիս: Կարելի է ասել, որ սա նախորդ երկու նկարներիս տրամաբանական շարունակությունն է:

Ամառ էր: Նկարել եմ ամռան ամենատաք եղանակներից մեկը: Արևն այնքան պայծառ է շողում ու այնքան վառ: Երկինքը ամբողջովին մաքուր է: Ծառերն էլ՝ փարթամ: Այգին լեփ-լեցուն էր մարդկանցով: Ձախ անկյունում երեխաներ էին, պաղպաղակ էին ուտում, իսկ աջ անկյունում մի երիտասարդ զբոսնում էր իր հոլի կնոջ հետ: Հեռվում ևս մարդկանց պատկերներ էին ուրվագծվում: Այն ջարդած նստարանը, որը կար նախորդ

նկարում, արդեն վերանորոգել էին: Թռչուններն էին շատացել, նրանք կային ինչպես ծառերին, այնպես էլ գետնին՝ ասֆալտի վրա: Նկարի կենտրոնում դարձյալ նույն պերսոնաժներն էին՝ աղջիկն ու տղան: Տղան գետնին ընկած էր, իսկ աղջիկը առաջ էր գնում: Սակայն պարանները... որոշ պարաններ շարունակում էին նրանց կապել: Նկարել էի կոնկրետ այն պահը, թե ինչպես է պարաններից մեկը դիպչել ասֆալտին և աստիճանաբար մաշվում է: Մի քանի պարան հենց դրա հետևանքով պոկվել էին: Աղջիկը հպարտ նայում էր վերև, իսկ տղան գետնով մեկ քարշ էլ գալիս, ինչպես Հեկտորն էր քարշ գալիս Աքիլլեսի նժույգից կապված: Ցավոտ էր, նրա շորերը ճղված էին: Ձեռքին վերքեր ու սպիներ կային: Վերքեր կային, որ դեռ թարմ էին, որոնցից էլ արյունը կաթում էր ասֆալտին: Այգում գտնվող ոչ մի մարդ ուշադրություն չէր դարձնում ո՛չ այդ տղային, ո՛չ էլ այդ աղջկան: Իսկ այգում գտնվող աղբյուրից արդեն ջուր էր հոսում: Գետնին ընկած ծխախոտը, որը կար նախորդ երկու նկարներում, այս մեկում բացակայում էր, դրա փոխարեն նկարեցի գետնին ընկած մկրատը՝ ճիշտ նույն դիրքում, որտեղ նկարում էի այդ չմարած ծխախոտը: Դա հենց այն մկրատն էր, որը նկարել էի նախորդ նկարիս մեջ՝ աղջկա ձեռքում մկրատը, որով աղջիկը կտրեց պարանները:

Ահա և նկարս: Կարծում եմ՝ գեղեցիկ է ստացվել:

Իսկ ինչ վերաբերում է այսօրվա մեր հանդիպմանը՝ Վլադիկի առողջականն էր կտրուկ վատացել: Դեմքին գույն չկար, ուժեղ հազում էր, ու ձախ

աչքը գրեթե ոչինչ չէր տեսնում: Ասաց, որ պատրաստվում էր հենց այսօր էլ ավարտել մեր հանդիպումները, բայց առողջությունը թույլ չտվեց: Որոշեց դարձյալ զրուցել: Նա, իրոք, լավ չէր: Նա նույնիսկ չէր կարողանում զրուցել: Ուղիղ տասը րոպե հետո Վլադիկի վիճակը կտրուկ վատացավ, առ այն, որ հեռախոսս խնդրեց իր բժշկին զանգահարելու համար:

Բարեբախտաբար, հեռախոսս լիցքավորել էի... «հազի ձայն»...

Ե՞ս ինչու եմ հազում: Անցավ կողքի սենյակը ու մոտ 5 րոպե իր բժշկի հետ խոսելուց հետո վերադարձավ ու ասաց, որ իր ետևից բժիշկ են ուղարկում: Ասաց, որ այսօր ստիպված կլինենք չշարունակել խոսակցությունը, իսկ հաջորդ հանդիպումը նշանակելու համար ինձ կանխավ կզանգի: Հետո սկսեց ներողություն խնդրել հանդիպումը ձախողելու և այն բանի համար, որ իմ հեռախոսով մի քանի րոպե խոսեց: Լավ է՜... 50-60 դրամ է, էլի, եղածը:

Ես առաջարկեցի մնալ՝ մինչ կգային իր ետևից: Չուզեցի մեր սիրելի Վլադիկին մենակ թողնել: Վերջիվերջո նա ինձ ողջ ու առողջ է պետք: Մոտ տասը րոպե անց մի մարդ եկավ: Դուռը բացեցի: Նայեց ինձ ու հարցրեց. «Կներեք, հիվանդը դո՞ւք եք»: Ես էլ՝. «Ո՛չ, ես հիվանդի հիվանդն եմ, իսկ հիվանդը կողքի սենյակում է»: Տարօրինակ կերպով վրաս նայեց... դե դա բնական է... ուղեկցեցի նրան Վլադիկի մոտ ու համոզվելով, որ Վլադիկի հետ ամեն ինչ նորմալ կլինի՝ դուրս եկա իր բնակարանից:

Ճիշտն ասած՝ վրաս զարմանում եմ, որ արդեն մի ամիս է, ինչ սպասում եմ ձայնագրությունների ավարտին, բայց արի ու տես՝ շարունակում եմ ձայնագրվել:

«կատվի մլավոց»

– Օ՜, ոչ, էլի՛ դու... կորի՛ր աչքիցս, Քի՛թթի: Չես տեսնո՞ւմ, ձայնագրվում եմ, այն էլ անտեղի, որովհետև կարող եմ այլևս չձայնագրվել: Նախորդները նույնպես անտեղի էին: Ես ձայնագրվում եմ, ես էլ պետք է լսեմ, չնայած մինչ օրս ցանկություն չի առաջացել նույնիսկ դրանք լսելու: Ինչ անիմաստ է, իրոք, երբ ձայնագրվում ես ինքդ քեզ համար, երբ միայն դու պետք է լսես: Մի՞թե Վլադիկ Սամվելովիչին, իրոք, չէին հետաքրքրում այս ձայնագրությունները, և մի՞թե նա չուզեց... այս ամենը... լսել... «լռություն» գրողը տանի, երբ ես դեռ նոր էի գնում հանդիպումների, նա մի անգամ բջջային հեռախոսահամարներից խոսեց, հարցրեց՝ արդյոք սիրում եմ Gold համարներ: Ընթացքում ասաց, որ իր համարը Gold չէ, բայց մեկ է, իր վրա թանկ է նստում իր SIM քարտը, քանի որ ոչ թե լիցքավորումով է օգտագործում, այլ ամսական վճարումով: Այսինքն իր հեռախոսում միշտ էլ գումար կա: Այդ դեպքում ինչու ինձնից ուզեց հեռախոսս և ուր կորավ 4-5 րոպե, եթե բժշկի հետ խոսելը և պայմանավորվելը կարող էր տևել ընդամենը կես կամ մեկ րոպե... «հեռախոսի ստեղների ձայներ» Նա հաստատ իմ ձայնագրություններն էր փնտրում: Ո՞ւր է այն թղթապանակը, որտեղ պահում է ձայնագրությունները... ահա…

Ո՞ւր են ձայնագրություններս... Տասը ձայնագրություններիցս և ո՛չ մեկը չկա... ջնջվել են... ինչո՞ւ... իմաստը՞... հենց հիմա կզանգեմ իրեն...

«արագ ոտնաքայլեր» «հեռախոսի կոճակի ձայներ»... Անհասանելի է... Ինչ-որ տեղ պետք է իր քաղաքայինի համարը ունենայի... «հեռախոսի կոճակի ձայներ» Վաչե... Վաչե-տուն... Վարդան... Վարդգես... Վիկտոր... Վլադ... Վլադ-տուն... ահա...

«հեռախոսի կոճակի ձայներ»

– Բարև Ձեզ, Վլադ Սամվելովիչին կարելի՞ է... իսկ ե՞րբ կգա... այսինքն... մի քանի օրից, դա ինձ համար ուշ կլինի. ես չեմ կարող օրերով սպասել, ամենաշատը կարող եմ համբերել ևս մի քանի ժամ... գրողը տանի, իսկ դուք ո՞վ եք: Տիկին, խնդրում եմ, ասեք, որ ինձ զանգի, իմ անունը Համլետ է, ես իր հաճախորդը... ես իր հիվանդներից եմ... փորձել եմ, անհասանելի է... չհասկացա... չեմ կարող երկու օր համբերել... ես թքած ունեմ իր օպերացիայի վրա: Նա իմ բժիշկն է, նա ամեն վայրկյան պատասխանատվություն պետք է կրի իմ և իմ առողջության նկատմամբ... գրողը տանի:

«ոտնաքայլեր»

Անջատեց: Ասաց, որ վիրահատության է պատրաստվում, և այսօր կամ վաղը շտապ վիրահատելու են նրան: Թքած ունեմ ես դրա վրա: Նա ջնջել է իմ բոլոր ձայնագրությունները, անջատել է իր հեռախոսը ու փախել, իսկ իր դեբիլիկ կինը ասում է, որ զանգեմ 2-3 օրից: Գումարը տվեցի, ու կորավ: Ի՞նչ անեմ ես հիմա: Ոստիկանությա՞նը դիմեմ: Եթե մամային ասեմ, միանգամից տագնապ կհայտարարի: Վաչեն չէր կարող ինձ խաբեբայի մոտ ուղարկել: Մի խոսքով, եթե մինչև երկուշաբթի չհայտնվեց, ես ոստիկանություն կդիմեմ:

Նա երևի ուզում է հոգեկան հիվանդ դարձնել ինձ: Նոյեմբերի 14-ին, երբ առաջին անգամ գնացի հանդիպման, շատ ավելի լավ էի ինձ զգում, քան հիմա:

«ազդանշան»

# Գլուխ 12

«ազդանշան»

Արդեն երկուշաբթի է: Եվ արդեն ուզում էի ոստիկանությանը դիմել, երբ Վլադիկ Սամվելովիչի կինն այսօր վերջապես զանգեց ու ասաց, որ երեկ գիշերը վիրահատել են, ու նա հիմա չի կարող խոսել, բայց դրա փոխարեն, մոտավորապես ժամը 3-ին մի ծրար կփոխանցի, որում կլինեն բոլոր հարցերի պատասխանները: Ժամը երեքն անց տասն է: Նյարդայնացած սպասում եմ այդ ծրարին: Որոշեցի նյարդայնանալու փոխարեն վերցնել ու ձայնագրվել: Ամեն դեպքում այս ձայնագրությունները հանում են լարվածությունը: Կապվեցի ձայնագրությունների հետ: Ջուտ սովորությանս համաձայն եմ ձայնագրվում արդեն:

Նոր տարուն անգամ այսպես չեմ սպասել, աննկարագրելի զգացում է: Կատվիս փակել եմ կողքի սենյակում, որ մլավոցը չլսեմ: Նույնիսկ վերջին դասաժամին չեմ նստել: Չնայած կարող էի նստել, ամեն դեպքում չէի ուշանա ու երեքին տանը կլինեի:

Գրողը տանի... «շրխկոցներ»... Ի՞նչ է հետս կատարվում: Արագ եմ խոսում, մատներս անընդհատ շարժել եմ ուզում: Արագ եմ շնչում... սիրտս էլ արագ է խփում: Ստորին շրթունքս էլ լավ արյունոտել եմ: Տեղս չեմ գտնում տան մեջ: Ուզում եմ դռան զանգը լսել: Չէ՛... այսպես չի լինի: Ինձ շտապ ցրվել է պետք, այս վիճակից դուրս գալ է պետք: Լավ, երևի ցրվեմ, այսօր վերջնական տեսքի բերեցի նկարս, վերջապես ավարտեցի: Այժմ այն պատրաստ է: Իմ կարծիքով այն իմ ամենահաջողված գործերից մեկն է: Նկարեցի նախորդ նկարած նկարներիս վերջին՝ չորրորդ մասը: Աշուն էր: Ցեխոտ աշուն: Հակատերյանական գունավորմամբ: Տերևաթափ: Վառ կարմիր տերևներ՝ չորացած ու ոտքերի տակ խրթխրթացող: Ո՛չ: Ցեխոտ աշուն: Տերևներ չկային: Մաքրվել էին արդեն: Ռոմանտիզմի և ոչ մի տարր չկար: Ծառերը՝ մերկացած, օրը՝ գորշ: Դատարկ այգի: Ո՛չ մի թռչուն, ո՛չ մի կենդանի, և ո՛չ մի մարդ՝ բացի մեզնից: Այգին, որտեղ մենք բաժանվեցինք: Տղան՝ ես, նստած էր ասֆալտի վրա ընկած մի քարի վրա: Արյունոտ տեղեր այլևս չկային, բայց փոխարենը սպիներ էին: Մի քանիսը վառ ընդգծված էին, մի քանիսը՝ համեմատաբար ավելի թույլ: Մազերը ծովի ալիքների պես այս ու այն կողմ էին ծածանվում: Աջ ձեռքը ծոված էր 180 աստիճանով, մատները իրար էին կպած, նա հենց նոր էր շպրտել ծխած ծխախոտը, որը, երևում է, դեռևս չէր հասել գետնին և քամու ուղղությանը հակառակ օդում ազատ անկման մեջ էր գտնվում: Միայն այս նկարում նա սափրված չէր: Աղջիկը ուսի մի կողմից նայում էր տղային: Տղայի հայացքը

օդում չմարած ծխախոտի վրա էր բռնած, բայց նայում էր մյուս կողմը՝ աղջկա կողմը: Պարանները ամբողջովին ճղված էին, բացի մեկից: Մի պարան կար, որը տղայի վզից էր կապված, իսկ մյուս ծայրը փաթաթված էր աղջկա ձախ ձեռքի արմունկին: Աղջիկը իր ձախ ձեռքը չէր բարձրացնում, որպեսզի տղան չխեղդվի, բայց ամեն պահի կարող էր անել դա: Չնայած այդ պարանն էլ համարյա ճղվելու վրա էր: Ահա և չորրորդ ու վերջին նկարս: Երնեկ այդ վերջին պարանն էլ մաշվեր: Քանի դեռ վերջնականապես չեմ խեղդվել...

«դռան զանգ» Ահա... «խուլ ձայներ»

Բարև ձեզ, շնորհակալ եմ...

Ահա և ծրարը... Գրողը տանի, նույնիսկ ներս չհրավիրեցի: Չնայած սատանան իր հետ... կարևորը հիմա այս ծրարի պարունակությունն է: «Ճղում է ծրարը»... «ծիծաղում է» Միայն Վլադիկ պապիկը կարող էր ծրարի մեջ նամակի փոխարեն CD դնել: Այս ի՞նչ է: Մի՞թե երկու օրվա մեջ Վլադիկ Սամվելովիչը իր պաշտոնական ձայնասկավառակը թողարկեց... մեգաաստղ է: Շուտով Գրեմմի էլ կստանա... «միացնում է CD-ին» And the Grammy goes to... Vlaaaaadiiiiik Samvelooovich.... Ահ-հա-հա-... լավ, վե՛րջ, լռի՛ր, Համլետ: «play»

«ճնշումը չափող սարքի ձայնը», «ուժեղ հազ», («ուժեղ հազ» Գրողը տանի նույնիսկ ռադիոալիքային ճանապարհով է վարակիչ): Կներես, Համլետ ջան, որ ամեն ինչ այսպես ստացվեց: Բայց հիվանդությունս իրենն ավելի շուտ ասաց: Մի քանի ժամ հետո ինձ վիրահատելու են: Մինչ այն սկսելը, ես խնդրեցի, որ ինձ մի ձայնագրիչ տան, որպեսզի

ես էլ քեզ նման ձայնագրվեմ ու ուղարկեմ քեզ, լսես: (Հրաշալի է, մեկը մի բան չանի, իսկույնևեթ կրկնում են): Ամեն դեպքում, եթե վիրահատությունը անհաջող ավարտ ունենա, հոգեպես հանգիստ կլինեմ, որ գոնե ուղարկել եմ քեզ այն, ինչի համար որ ինձ դիմել էիր: Զանգել չէի կարող, որովհետև ասելիքս ահավոր շատ էր երկխոսություն դարձնելու համար: Չէի կարող նաև հարցերիդ պատասխանել, որովհետև ֆիզիկապես ու հոգեպես ի վիճակի չէի: Հուսով եմ՝ բոլոր հարցերի պատասխանները կգտնես այս ձայնագրության մեջ: Ամեն դեպքում, երբ իմ առողջությունը սկսի լավանալ, մենք դարձյալ կհանդիպենք: Երևի ինքդ էլ հասկացել ես, որ  ուրբաթ օրը՝ մեր վերջին հանդիպման ժամանակ, երբ խնդրեցի քեզնից հեռախոսդ, վերցրեցի նրա մեջ գտնվող բոլոր ձայնագրություններդ: (Հա դե, գող ես դրա համար): Կինս ասաց, որ զանգել էիր: Ճիշտն ասած՝ ես ընդամենը այդ ձայնագրությունները քո հեռախոսից իմ հեռախոսի մեջ եմ գցել bluetooth-ով, ջնջելու մտադրություն չեմ ունեցել, պարզապես այդ լարված րոպեների ընթացքում պատահաբար ջնջել եմ: Ամեն դեպքում, կներես: (Ահա, բա ո՜նց, ներում եմ... Հետո է՞լ ինչ կուզես: Կատվիս էլ տա՛մ՝ բռնաբարես): Ես քեզնից մաքսիմալ անկեղծություն էի ուզում: Ես քեզ չէի կարող ամենասկզբից էլ ասել, որ պատրաստվում եմ վերցնել ձայնագրություններդ, որովհետև դա իմանալով՝ այնքան էլ անկեղծ չէիր լինի ձայնագրություններիդ մեջ, և երկրորդ՝ հնարավոր է, որ նույնիսկ չսկսեիր դրանք: Դա իմ բուժման մեթոդիկան է: Ես ամեն անգամ իմ հաճախորդներին

դա եմ խնդրում: Ասում եմ, որ ձայնագրվեն ամեն անգամ մեր հանդիպումից հետո: Ամեն անգամ ինչ-որ պատասխաններ եմ ակնկալում այդ ձայնագրություններից, ինչ-որ նոր բացահայտման... ու ամեն անգամ հիասթափվում եմ: (Միգուցե դադարի կյանքը պատմել)... Որովհետև ամենուրեք տարածված ու սովորական հոգեբանական խնդիրներ են, որոնք այնքան էլ խոր չեն, որքան որ թվում է հաճախորդներին: Բայց քո դեպքը, քո դեպքը ուրիշ էր: Քո դեպքում խնդիրը այդքան էլ ցայտուն չէր. իրականում այն բավականին խոր էր: Ու ասեմ քեզ, որ դու դիմել ես ճիշտ ժամանակին: (Այստեղ հնարավորություն չկա, մի քանի րոպե առաջ տալու)... Համլե՛տ, խնդրում եմ՝ հավաքիր քեզ հիմա, ու զսպված նստիր, լսիր ամեն մի բառս: Նախ ուզում եմ միանգամից ասել լավ լուրը՝ քո գիտակցության հետ ամեն ինչ նորմալ է: Դու որևէ խոչընդոտ չունես, որ կխանգարեր քեզ սխալ հասկանալ ժամանակը, տարածությունը և շրջապատող աշխարհը: Հենց այդ պատճառով ես խոսում եմ քեզ հետ, ինչպես հավասարը հավասարի հետ: Դու ամեն ինչ էլ ճիշտ կհասկանաս: Մենք կկարողանանք միասին անցնել առաջ: Հուսով եմ, որ մի քանի օրից նորից ոտքի կկանգնեմ ու կանցնենք բուժմանը: (Գրողը տանի, կեսից կարող է նաև գովազդ մտնի, արհեստական ձգձգման համար): Ուզում եմ մեկ անգամ ևս շեշտել, որ քո ձայնագրությունները առաջին հերթին փաստ են: Դրանք հետագայում ես կօգտագործեմ իմ գիտական հոդվածներում: Սրանք ինձ նույնպես շատ օգնեցին: «ուժեղ հազ» Անցնենք առաջ: Ուզում եմ հիմա

հանդարտվես ու նստես: (Հա, հանդարտ եմ ու նստած եմ... պառկել էլ բայց կուզեի)... Ամեն ինչ սկսվեց նոյեմբերի 11-ին: Երբ դու, ագրեսիայի ու ցասման մեջ գտնվելով, զանգեցիր ինձ: (Ե՞րբ): Հարցրեցիր, թե ում հետ ես խոսում: Ու այնպիսի տոնով, որ մի պահ մտածեցի, թե ոստիկանությունից են ինձ զանգահարել ու մեղադրում են ինչ-որ ծանր հանցագործության մեջ: Ես ներկայացա, մասնագիտությունս նշեցի: Դու ասացիր, որ Վաչեի խորհրդով ես ինձ զանգել, ես միանգամից տեղը բերեցի Վաչեին, որովհետև նա իմ ամենամոտ ընկերոջ որդին է: Ու հենց դրա համար էլ հանդիպման օր նշանակեցի: Դու բարկացած էիր: Մենք պայմանավորվեցինք օրերը՝ երկուշաբթի, չորեքշաբթի ու ուրբաթ: Բայց դու երկուշաբթի օրը այդպես էլ չհայտնվեցիր: Դու չզանգեցիր ո՛չ այդ օրվա ընթացքում և ո՛չ էլ՝ հաջորդ: Ինքս քեզ չզանգեցի, որովհետև մտածեցի՝ փոշմանել ես: Այդպես հաճախ է եղել ինձ հետ, երբ զանգում, պայմանավորվում են, բայց չեն ներկայանում նշանակված օրը: Փոխարենը զանգեցիր չորեքշաբթի՝ նոյեմբերի 14-ին: Սակայն, ի զարմանս ինձ, դու նորից ներկայացար ու հանդիպում խնդրեցիր: Կարծես սա քո առաջին զանգն էր ինձ: Այդ ժամանակ ես հասկացա, որ պարզապես չես հիշում, թե ինչ է եղել կիրակի օրը: Ու հենց այդ պահից սկսած ես իմ ւսռջև նպատակ դրեցի՝ հասկանալ, թե ինչ է կատարվում քեզ հետ: Ու քանի որ չորեքշաբթի մենք այսպես, թե այնպես պետք է հանդիպեինք, ես առանց երկար մտածելու ասացի, որ դասերից հետո գաս ինձ մոտ: (Գրողը տանի)...

Ես քո ձայնագրությունները մի քանի անգամ եմ լսել: Ամեն բառն եմ ընկալել, ամեն վայրկյանն անգիր արել: Բանն այն է, որ դու ինքդ ես այս ամենի մասին խոսել քո ձայնագրություններում: Բայց մեկ է՝ չես հիշել: Դու այս ամենի մասին խոսել ես քո չորրորդ ձայնագրության մեջ: Պատմում ես, որ Վաչեն է քեզ խորհուրդ տվել դիմել ինձ, բայց դու ոչինչ չես հիշում կիրակի օրը Վաչեի տանը տեղի ունեցածից: Տարբեր ձայնագրություններում դու միշտ տեղ-տեղ վերադառնում ես այս պատմությանը ու նշում, որ կիրակի օրը դու անցկացրել ես տանը: (Գրողը տանի, բա տանն եմ եղել: Որ ուրիշ տեղ լինեի, կասեի ուրիշ տեղում էի): Ու դա եղել է քո սովորական օրերից մեկը: Սակայն ինչ-որ հրաշքով քո բաճկոնում հայտնվում է մի թղթիկ, որտեղ գրված է լինում իմ անունն ու հեռախոսահամարը, այն քեզ տվել էր Վաչեն: Այն էլ ե՞րբ: Այո, այո, կիրակի օրը: Ամեն դեպքում դու դա չես հիշում... Ես դեռ կվերադառնամ այս պատմությանը: Ես առանձնացրել եմ տասը կետ, որի մասին կցանկանայի խոսել քեզ հետ: (Ես ասում էի, չէ՞, որ գովազդ է մտնելու ամենահետաքրքիր պահին): Ուրեմն՝ առաջին: Մենք այժմ կխոսենք թեյի ու սուրճի մասին: (Ինչի մասի՞ն... չէ, եկեք խոսենք կաղամբի ու գազարի մասին): Հիմա երևի դու անակնկալի կգաս: Բայց ես այս լաբիրինթոսից դուրս գալու համար ավելի լավ տարբերակ չէի կարող գտնել: Օրինակ՝ ես ինչպես թեյ եմ սիրում, այնպես էլ սուրճ: Երբեք չեմ ասում, որ չեմ սիրում թեյ, որովհետև ես սիրում եմ այն: Դա սովորություն է... իհարկե, ես սուրճ ավելի եմ սիրում, բայց թեյ

նույնպես խմում եմ: (Գրողը տանի, դա ինչ կապ ուներ): Նոյեմբերի 28-ին, երբ դու եկար, ես քեզ սուրճ հյուրասիրեցի: Դու մերժեցիր՝ պատճառաբանելով, որ ոչ թե համեստություն ես անում, այլ, իրոք, սուրճ չես սիրում: (Համեստություն եմ արել, ես սուրճ սիրում եմ): Դու ձայնագրությանդ մեջ դա նույնպես նշել ես: Բայց լսելով ձայնագրությունները, պարզեցի, որ սիրում ես սուրճ: Երրորդ ձայնագրության մեջ դու պատմում ես, թե որքան շատ ես սիրում խմել սուրճ, ասում ես, որ սուրճը քեզ օգնում է առույգ մնալ: Հինգերորդ ձայնագրությանդ մեջ նույնպես սուրճին ես անցնում: Եվ իններորդում այնքան պայծառ երանգներով ես նկարագրում, թե ինչպես ես դիմավորում առավոտը սուրճի ու շոկոլադի հետ, որ այդ պահին սուրճ ըմպելու ցանկություն է առաջանում: Մինչդեռ քո երկրորդ ձայնագրության մեջ թեյ ես խմում ու նկարագրում քո սերը թեյի հանդեպ: Առաջին հայացքից այդքան էլ տարօրինակ բան չկա. թեթև հակասություններ ինքդ քեզ հետ: Կամ էլ պարզապես չես կողմնորոշվում, թե որն ես ավելի նախընտրում: Սկզբից դա այդքան էլ ականջս չէր ծակել, ճիշտն ասած: (Իմ ականջը նույնպես)...

Անցնենք, մի քայլ առաջ: Երկրորդ: Այժմ կխոսենք ծխախոտի մասին: (Իսկ հետո կխոսենք կենգուրուների մասին): Երկրորդ ձայնագրության մեջ դու շեշտում ես, որ չես օգտագործում ծխախոտ, ալկոհոլ... Դու ինձ խնդրում ես, որ չծխեմ քո ներկայությամբ, որովհետև չես կարող շնչել ծխախոտի ծուխը: Բայց երրորդ ձայնագրության մեջ մատնում ես ինքդ քեզ: Դու ծխախոտ ես գնում: Հիշո՞ւմ ես մեր հինգերորդ հանդիպմանը դու եկար բարձր և ինչ-որ

անհասկանալի ոգևորությամբ: Ես չուզեցի քեզնից այդ պահը բաց թողել, ու քանի որ դու ինձ արդեն ասել էիր, որ սիրում ես պոկեր խաղալ, որոշեցի հասկանալ, թե որքանով է ազարտը քեզ իր ենթակայության տակ պահում, և առաջարկեցի պոկեր խաղալ, համեմատաբար չնչին գումարի վրա: Դու մի կողմ դրեցիր քո համեստությունը, հանգստությունն ու միանգամից, առանց մտածելու խաղացիր: Ասեմ ավելին, դու հիշում ես՝ ինձ ոնց հաղթեցիր, դու all in խաղացիր K-ով ու 2-ով... ու բախտի բերմամբ հաղթեցիր ինձ, երբ իմ մոտ A ու K էր: Բացվեցին անպետք խաղաքարեր, որոնք պատահաբար քո մոտ ֆլեշ առաջացրին, այն էլ այդ երկուսի շնորհիվ... Դա բախտ էր: Դու վերցրիր իմ ծխախոտի տուփը, չնայած չէիր ծխում: Ուզում էի հասկանալ՝ ծխախոտի տուփը վերցրիր ուղղակի շահումը նյութականացնելու համա՞ր, թե՞, իրոք, ծխել էիր ուզում: (Ծխել էի ուզում): Հետագա հանդիպումներին դու էլի շարունակում էիր զզվել ծխախոտի ծխից: Բայց իններորդում այդ առումով ևս մեկ անակնկալ եղավ, դու պատմում ես, որ այդ օրը քեզ մոտ է գալիս Արամը, որպեսզի աշխատեք դիպլոմայինի վրա: Արամը ծխող էր, ու գնալուց առաջ դու իրենից մի քանի ծխախոտ ես խնդրում: Սակայն, անկեղծ ասած, արդեն չեմ հիշում, որերորդ ձայնագրության մեջ զարմանում ես մարդկանց վրա, ովքեր ծխում են, և ասեմ ավելին, այն նաև համատեղում են սուրճի հետ: Մինչդեռ ինքդ ես շատ հաճախ համատեղում ծխախոտը սուրճի հետ: (Գրողը տանի)...

Անցնենք ևս մեկ քայլ առաջ: Երրորդ: Անցնենք Քիթթիին, քո շատ սիրելի կատվին: (Տեսնես ո՞ղջ է,

ինչ տուն եմ մտել փակել եմ սենյակում): Դու քո կատվին շա՜տ ես սիրում: (Սուտ է): Նույն 10-րդ ձայնագրության մեջ, երբ պատմում ես Նարեի մասին, թե ոնց է ճղվել իր օրագիրը՝ մեղադրելով այդ ամենի մեջ Քիթթիին, միևնույն է, դու շարունակում ես սիրել նրան: Առաջին ձայնագրությանդ մեջ ջերմ խոսքեր ես ասում նրան: Հաճախ նշում ես, որ այս մենակության մեջ նա է քո միակ ընկերը: Գիշերները միաժամանակ նրա հետ ես ընթրում՝ որպես տան անդամ: Բայց դարձյալ նույն օրինաչափությունը: Մի քանի ձայնագրություններում դու բարկանում ես Քիթթիի վրա, ընդ որում՝ անպատճառ: Դա տեղի է ունենում երրորդում... դա տեղի է ունենում հինգերորդում՝ այդ օրը այդ խեղճին նույնիսկ դաժանորեն բռնում ու փակում ես զուգարանում: Եվ դա տեղի է ունենում նաև իններորդում «հազի ձայն»: Դարձյալ նույնը:

Անցնենք առաջ: Եթե դադար է պետք, պարզապես պաուզային սեղմիր: (Դադար պետք չէ)...

Չորրորդ: Մենք բոլորս ունենք խոսելաոճ, սիրված ու չսիրված բառեր: Հաճախակի օգտագործվող բառակապակցություններ: Քո ձայնագրությունները լսելիս նկատեցի, որ կա մի բառ, որը դու ամենահաճախն ես օգտագործում: Այնքան հաճախ, որ ենթագիտակցորեն սպասում եմ, թե երբ ես հաջորդ անգամ այդ բառը օգտագործելու: Գիտե՞ս որն է այդ բառը: Ինչևէ: «Ինչևէ»-ն՝ քո ամենաօգտագործվող բառն է: Բայց կարո՞ղ ես գուշակել, թե ո՞ր ձայնագրությունների մեջ չես օգտագործել այս բառն ընդհանրապես: Երրորդ (հինգերորդ... ու իններորդ...) հինգերորդ... իններորդ... Սա ես միգուցե չնկատեի,

եթե մյուս ձայնագրություններում այդքան հաճախ չօգտագործեիր:

Հինգերորդ: Անցնենք հարևաններին, որոնց դու ատում ես: Հատկապես Արտյոմին՝ ձեր վերևի հարևանին, ում դրած ծանր ռոքային երգերը քեզ վրա ազդում են: Բայց արի ու տես, որ այստեղ ևս մեկ անակնկալ կար: Լսում, լսում եմ ձայնագրությունդ, ու մեկ էլ՝ հո՛պ... դու գիտես երգի անվանումը... դու սիրում ես այն նույն երգը, որն ատում էիր, և ավելին, դու զանգում ես քո հարևանին, ումից խուսափում էիր: Դու իր տուն ես գնում: Դու իր հետ մինչև կանգառ քայլում ես: Դու նույնիսկ օգնում ես Ռոեն տատիկին, երբ ծանր տոպրակներով շուկայից տուն վերադառնալիս տեսնում ես նրան: Բայց հարևանների հանդեպ ունեցած քո ատելությունը դու միշտ շեշտում ես: Նույն Ռոեն տատիկը ծանր տոպրակներով շուկայից էր դարձյալ վերադառնում, հիշո՞ւմ ես, թե ինչ ես ասում ձայնագրությանդ մեջ: Հիշո՞ւմ ես հանդիպումից ո՛նց էիր խուսափում, առ այն, որ Բելան գալիս է, քեզ անցնում է, ու դու ընկնում ես անհարմար իրավիճակի մեջ: (Այդ պահը մոռանալ չի էլ լինի): Հիշո՞ւմ ես, թե ո՛նց ես բնակարանումդ փակվում, միայն թե դուրս չգաս տնից ու չտեսնես Լյով պապիկին, ում ծնունդն էր: Նույնիսկ դուռդ են ծեծում, իսկ դու չես բացում: Խուսափում ես: Իսկ հիմա հարց. կարո՞ղ ես ասել, թե որ օրերին ես ավելի շատ հարևաններիդ ատում... Երրորդ, հինգերորդ ու իններորդ ձայնագրություններում այդ ատելությունը չկա: Դու սիրում ես նրանց: Դու չես փնտրում երկար ճանապարհներ, որպեսզի խուսափես նրանցից:

Վեցերորդ: Գրքեր: Քո կարդացած միակ գիրքը «Փոքրիկ Իշխանն» է... Բայց դու ցիտում ես տողեր Աստվածաշնչից, կարդում ես Սևակ, իմիջիայլոց, կարդո՞ւմ էիր, թե՞ անգիր գիտեիր այն տողերը, որոնք արտասանեցիր հինգերորդում: (Սևակ ես անգիր գիտեմ, գրողը տանի... ես շատ եմ կարդում)... Էդգար Ալլան Պոյի ոչ այդքան հայտնի գրքերից մեկի անվանումն ես տալիս: Նույնիսկ ես չգիտեի իր այդ ստեղծագործության մասին: Բայց պարզվեց, որ նա, իրոք, ունի այդպիսի ստեղծագործություն՝ «Մարդը ում ավիրեցին» (անգլ.՝ The man that used up): Դու նույնիսկ սիրած գրականություն ունես: Հիշո՞ւմ ես, թե որ գիրքն ես ամենաշատը սիրում՝ Ժյուլ Վեռնի «80 օր աշխարհի շուրջը»: (80 օր աշխարհի շուրջը): Կարո՞ղ ես դարձյալ կռահել, թե որ օրերին ես կարդացած երիտասարդի դիմակի տակ, իսկ որ օրերին նույնիսկ չգիտես, որ քո անունով Շեքսպիրը մի հանրահայտ գործ ունի գրված: (Գրողը տանի, ինչպե՞ս չգիտեմ, ես «Համլետը» դեռ դպրոցական տարիքում եմ ամբողջը հասցրել կարդալ): Յոթերորդ: Արի այստեղ, կարճ կմնամ: Պարզապես ընդունիր, որ այդ ձայնագրություններում քո տրամադրությունն է նույնիսկ փոխվում: Հումորներ ես անում, ցինիզմն ու սարկազմն է ավելանում: Պարզապես լսիր ձայնագրությունները (Մեծ հաճույքով կլսեի, պարզապես դրանք թոցրել են ձեռքիցս): Ես քո ձայնագրությունները անպայման հետ կուղարկեմ: Ութերորդ: Այն բաները, որոնք քեզնից երբեք սպասելի չեն... Դու անում ես «հազի ձայն»... կներես... («հազի ձայն» դուք էլ ինձ կներեք)... Դու անում ես

այնպիսի բաներ, որոնք անհավատալի են: Հիշո՞ւմ ես, երբ եկար ու ինձ ասացիր, որ կասկածում ես, որ բժիշկ եմ: Հիշո՞ւմ ես՝ ինչ ագրեսիվ էիր այդ օրը: Դա մեր հանդիպման երրորդ օրն էր: Սակայն հաջորդ հանդիպմանը քո արարքից վատ զգացիր ու ներողություն խնդրեցիր: Իսկ մինչ այդ նույնիսկ վախենում էիր այդ մտքից: Արտյոմը իր երգերով քեզ պարզապես խեղդում էր, դու միշտ խուսափում էիր նրան զանգել և խնդրել, որ այն ցածրացնի: Դու գերադասում էիր լսել քո չսիրած կամ սիրած, արդեն չգիտեմ... երաժշտությունը... փոխարենը կարող էիր պարզապես նրան զանգել ու խնդրել, որ ցածրացնի ձայնը: Սակայն եկավ մի պահ, ձայնագրության ընթացքում ինքնավստահորեն զանգեցիր ու խնդրեցիր անջատել երաժշտությունը, որ քեզ խանգարում է: Դու հավանեցիր երաժշտությունը, որովհետև այդ օրը քո մեջ այն Համլետն էր, ով ինքավստահ էր, ով սիրում էր ծանր երաժշտություն: Բայց ուրիշ անգամ դու փախչում էիր կողքի սենյակ երաժշտության ձայնից չխլանալու համար: Ու դա նորից համընկավ այն օրերի հետ: 3, 5, 9՝ ավելի համարձակ ու ավելի ինքնավստահ ես: Իններորդ: Դու նաև նկարիչ ես: Եկ վերհիշենք, թե այս ընթացքում որ օրերին ես կարողանում նկարել... Դե, դա արդեն քեզ համար պարզ է: Քո ձայնագրություններում ինքդ նշել ես (Անհավատալի է)... դրանք: Քեզ համար նկարելը հաճույք է: Հոգեվիճակդ արտահայտելու միակ եղանակը: Դու դա շատ ես սիրում: Հենց այդ պատճառով էլ միշտ ուրախությամբ ասում ես, թե որ օրերին ինչ հաջողության ես հասել քո նկարներում: Այդ այգին:

Այդ աղջիկն ու տղան, որ, կարծում եմ, հենց դու ես: Հուսով եմ՝ շարունակություն կլինի, և դու կնկարես այդ նկարի երրորդ մասը նույնպես: (Ես այսօր արդեն չորրորդն եմ ավարտել)... Ես հաճոյախոսություններ չէի շռայլում, այն նկարը, որ ցույց տվեցիր առաջին հանդիպման ժամանակ, իրոք, բավականին հաջողված էր: Եվ նորից թվերը համընկնում են՝ 3, 5, 9... Թվեր, որոնց հետ քեզ հյուրընկալում է մուսան:

Տասներորդ. նոյեմբերի 19-ին, 23-ին ու դեկտեմբերի 3-ին քո վզից բացակայում էր խաչը: Դու միշտ կրում էիր այն, բայց այդ օրերին չտեսա այն: Դու այցելում ես եկեղեցի, մոմ ես վառում, խոսում ես քահանայի հետ: Բայց այդ երեք օրերին բացի նրանից, որ քո վզին խաչը չկար, նաև ձայնագրություններիցդ էր հասկացվում, որ այդ օրերին դու հավատացյալ չես, իսկ հետո դարձյալ հավատացյալ ես ու դարձյալ կրում ես խաչդ: Իններորդ հանդիպման ժամանակ ես քեզ հարցնում եմ՝ արդյոք խաչ կրո՞ւմ ես: Դու ասում ես՝ ոչ: Մինչդեռ նախորդ հանդիպմանը դու խաչով էիր:

Ահա քեզ տասը պատճառ՝ իմ հետագա ասելիքին հավատալու համար: (Հիմա ես Ձեր ամեն ասելիքին էլ կհավատամ, նույնիսկ եթե խոսեք դինոզավրերի գոյության մասին):

Բացի այս տասը կետերից, որոնք նշեցի, ընթացքում կանդրադառնամ ևս երկուսին՝ առողջության ֆենոմեն ու ենթագիտակցության կառավարում: Նոյեմբերի 19-ին, 23-ին ու դեկտեմբերի 3-ին մեր հանդիպումների ժամանակ քո ձախ աչքը անընդմեջ թրթռում էր: Նյարդային շարժումներ էիր անում: Հազդ խրոնիկ բնույթ էր կրել, ինչը շատ

հաճախ այդ օրերի քո ձայնագրություններում էր զգացվում: Այդ օրերին հաճախ էիր հազում, իսկ մնացած օրերին որևէ խնդիր չկար: Քեզ մոտ հրաշքով հազդ անցնում է, աչքիդ նյարդային շարժումները ու ևս մեկ բան՝ անքնությունը: Այդ օրերին տառապում ես անքնությամբ: Շատ ես նշել քո ձայնագրություններում, որ քնել չես կարողանում և հաճախ հենց այդ օրերին էլ փորձում ես նկարել: Դու կարողանում ես հետևել քո առողջությանը: Ենթագիտակցորեն: Քեզ մոտ վերանում է խրոնիկ հազը զուտ այն պատճառով, որ չգիտես դրա մասին: Լսե՞լ ես պլացեբոյի մասին: Դու ինքդ քո պլացեբոն ես: Բժիշկները հիվանդներին ներշնչում են, որ նրանք հիվանդ չեն, և հիվանդները ներշնչանքի շնորհիվ առողջանում են այնպիսի հազվադեպ հիվանդություններից, ինչպիսիք են ՁԻԱՀ-ը, քաղցկեղը: Քեզ ներշնչել պետք չէ: Դու ուղղակի տեղյակ չես, որ ունես նման խնդիր: (Կարծում եմ՝ արդեն պետք կգա, որովհետև տեղեկացա)... Նոյեմբերի 19-ին դու արել ես քո երրորդ, 23-ին՝ հինգերորդ, իսկ դեկտեմբերի 3-ին՝ իններորդ ձայնագրությունները:

Փորձեմ բացատրել ֆիզիկայի լեզվով: Դու ինքդ լավ գիտես, թե ինչ բան է լույսի դիսպերսիան: Երբ սպիտակ լույսը տարրալուծվում է տարբեր գույնի լույսի փնջերի: Նույնը կատարվում է քեզ հետ: Դու երևի հիշում ես հայտնի եռանկյան նկարը, որը կլանում է մեկ լույս և անդրադարձնում լուսային գամմա, առավել հայտնի որպես ծիածանի գույներ: Հաճախ բոլոր յոթ գույները չեն երևում: Այժմ նույնը քեզ մոտ է: Դու հենց այդ եռանկյունն

ես: Դու ստանում ես մեկ լույս, բայց անդրադարձնում ես մի քանիսը: Նվազագույնը՝ երկուսը: Ուշադիր եղիր, շեշտում եմ՝ նվազագույնը երկուսը:

Վատն այն է, որ սա քո մեջ ամրապնդվել է: Դու ինքդ քո մեջ տարբերություն ես դնում: Մեկը Համլետն է, ով չի թողնում, որ իր անունը կրճատեն, մեկն էլ Համոն, Համը... Մի քանիսը միայն ես եմ լսել ձայնագրությունների ընթացքում, թե ոնց ես նյարդայնանում, երբ անունդ կրճատում են: Մի քանի անգամ ինձ խնդրել ես, որ քո անունը չկրճատեմ, քո վերևի հարևան Արտյոմին նույնպես խնդրել ես: Այն պարզ լսվում է իններորդ ձայնագրությանդ մեջ, Վաչեի հետ կռվի ծագման պատճառը դա է եղել: Նա քեզ «Համ» է ասել: Դրանք նույնպես համընկնում էին այդ երեք օրերի հետ: Այդ երեք օրերին չես սիրում, երբ անունդ կրճատում են: Հիմա ես կնկարագրեմ այն երկու անհատականություններին, ովքեր պայքարում են քո մեջ: Պայմանականորեն, ելնելով քո պահվածքից ու պահանջներից քո անձի/անձերի նկատմամբ, ես մեկին կանվանեմ Համլետ, իսկ մյուսին՝ Համ: Համը սիրում է թեյ, սիրում է իր կատվին, հաճախակի է օգտագործում «ինչևէ» բառը, հավատում է Աստծուն, մեկուսացված է, չի սիրում հարևաններին, չի ծխում, չի կարդում, չի սիրում կատակել, ավելի առողջ է, բայց չունի արտիստիկ ունակություններ: («Ուժեղ հազ»):

Համլետը սիրում է սուրճ, ատում է իր կատվին, շփվող է, բայց որոշ դեպքերում ագրեսիվ է, սիրում է ծխել, ունի առողջական որոշ խնդիրներ՝ անքնություն, խրոնիկ հազ, նյարդային շարժումներ,

հավատացյալ չէ, սիրում է կարդալ, ունի արտիստիկ ունակություններ, տարված է նկարչությամբ: Օրինակ՝ էսօր դու հազացե՞լ ես: (Հա, բա ի՞նչ եմ արել): Եթե այո, ուրեմն, ամենայն հավանականությամբ, հիմա քո վզին խաչ չկա (Բինգո): Քո ձեռքում ծխախոտ է (Ա՛յ, ստեղ սխալվեցիք, իմ ձեռքում բաժակ է, ու ես սուրճ եմ խմում), իսկ սեղանիդ էլ սուրճի բաժակ է դրված (սեղանիս էլ մոխրաման է, մեջն էլ հանգցրածս ծխախոտները)... ու եթե ամեն ինչ այդպես է, դու ցինիկավարի ու մի քիչ էլ սարկազմիկ փորձում ես մեկնաբանել ինձ: Իմիջիայլոց, ինչ վերաբերում է ցինիզմին, դու քո 3-րդ, 5-րդ ու 9-րդ ձայնագրություններում ինձ դիմում ես ոչ թե Վլադ Սամվելովիչ, այլ Վլադիկ Սամվելովիչ: (Պա՜հ, էլ ով դիմանա): Սկզբից մտածեցի, որ դա հեգնանք է: Բայց հասկացա, որ սրա պատասխանը ենթագիտակցությունն է: Ենթագիտակցությունը նաև պատասխանն է մի շարք այլ հարցերի:

Շատ հոգեբաններ կարծում են, որ անձի երկատման դեպքում գլխավոր հանելուկը պահված է մարդու ենթագիտակցության մեջ: Ես էլ եմ այդպես կարծում: Բայց շատ հոգեբանների և գիտնականների կարծիքով, անձի երկատման ժամանակ ենթագիտակցությունը հանդիսանում է այս ֆենոմենի լուծումը, այն պատճառով, որ միակն է, որը չի երկատվում: Ես այդպես չեմ կարծում: Իմ կարծիքով՝ հենց ենթագիտակցությունն է երկատվում, ու ամեն անհատականություն, որ կա քո մեջ, ունի իր սեփական ենթագիտակցությունը: Չորրորդ ձայնագրությանդ մեջ նշում ես, որ մաթեմատիկայի դասախոսության ժամանակ գրիչ փնտրելիս

բաճկոնիդ գրպանում հանկարծակի գտնում ես թղթիկ, որը քեզ տվել էր Վաչեն, և որի վրա գրված էր իմ անունը: Վաչեի հոր հետ ես շատ մտերիմ եմ, հաճախ եմ իրենց տուն գնում ու Վաչեի համար ես Վլադիկ եմ: Նա ինձ այդպես է դիմում: Հենց այդ պատճառով էլ թղթի վրա գրում է Վլադիկ, ոչ թե Վլադ: Դու տրամաբանում ու հասկանում ես, որ իմ անունը իրականում Վլադ է, այլ ոչ թե Վլադիկ: Ու ինձ Վլադ ես դիմում: Դու գիտես, թե իրականում ի՞նչ հզոր բան է ենթագիտակցությունը: Ինչպես նշում է հայտնի ֆրանսիացի գրող Բերնարդ Վերբերը իր «Վերջին գաղտնիքը» (ֆրանս՝ L'Ultime Secret) գրքում՝ մարդկությունը շատ հաճախ ուղեղը համեմատում է այն նոր մեխանիզմի հետ, որը հայտնագործել է վերջերս: Կփորձեմ բացատրել քեզ հենց 21-րդ դարի՝ զարգացող տեխնիկայի լեզվով: Ենթագիտակցությունը անսահմանափակ հիշողության տարողունակությամբ մի կոշտ սկավառակ է, որի մեջ պահված է այն ամբողջ ինֆորմացիան, որը մարդ ստացել է իր ծննդից սկսած: Բայթ առ բայթ: Բիթ առ բիթ: Ամեն մանրուք գրվում է հիշողության մեջ: Դեժավյու, կանխազգացում, պատահական հիշողություններ. դրանք բոլորը առաջանում են հենց ենթագիտակցության շնորհիվ: Որ ավելի լավ պատկերացնես, այսպես ասեմ: Դու հիշո՞ւմ ես, թե ինչ ես արել չորս տարեկանում, հունիսի 21-ին, ցերեկը ժամը մեկն անց քսաներկու րոպեին, երեսունութերորդ վայրկյանին: Դու դա չես հիշում, բայց ենթագիտակցությանդ մեջ այն կա: Դու չես կարող դիպչել դրան, քանի որ դու սովորական user ես, իսկ ենթագիտակցության ֆայլը

բացելու համար դու պետք է լինես root: Դու չես կարող փոփոխել կամ կառավարել ենթագիտակցությունը, այն read only ռեժիմում է, դու կարող ես միայն և միայն տեսնել դա: Երբ ենք մենք՝ սովորական user-ներս, դառնում root: Root-ը ամենավերևում է, մենք կդառնանք root, եթե մոտ լինենք վերևին: Իսկ ի՞նչն է վերևում: Անհասկանալին: Անբացատրելին: Մարդկության համար անհայտ ինչ-որ բան: Անբացատրելիին տերմին են տվել՝ Աստված, և նույնիսկ գիտություն հնարել այդ ամենի մասին՝ կրոն: Ծնվելուց ու մեռնելուց մենք ամենամոտն ենք վերևին: Քանի որ ծնվելուց ենթագիտակցության թղթապանակը գրեթե դատարկ է, մենք ոչինչ տեսնել չենք էլ կարող դեռ: Իսկ մեռնելուց այն լիքն է, և մենք սկսում ենք վերապրել մեր կյանքը: Մենք կարողանում ենք դիպչել ենթագիտակցության թղթապանակին նաև այն ժամանակ, երբ ընկնում ենք կոմայի մեջ, կամ երբ կլինիկական մահ ենք տանում: Բայց առօրյայում ենթագիտակցությունը հասանելի է միայն ու միայն երազներում: Հիմա թեորեմներից անցնենք պրակտիկային: Երբ կարդում ես թղթի վրա գրված իմ անունը՝ Վլադիկ, այդ ինֆորմացիան պատրաստվում է գնալ քո ենթագիտակցության մեջ: Բայց այստեղ հանդիպում է քո ֆենոմենի հետ: Անձի երկատում: Ենթագիտակցության երկատում: C disk և D disk: Համո և Համլետ: Հարցնում է՝ որտե՞ղ եք պատրաստվում պահել այս ինֆորմացիան: Քեզնից անկախ ընտրում ես Համլետին: Եվ այդ պահից սկսած Համլետը սկսում է ինձ Վլադիկ Սամվելիչ դիմել, իսկ Համոն՝ Վլադ Սամվելովիչ: Եվ դու տարօրինակ չես

համարում դա: 3-րդ, 5-րդ և 9-րդ ձայնագրություններում և այդ ձայնագրությունների օրերին ինձ Վլադիկ ես դիմում: Ենթագիտակցորեն սիրում ես թեյ, ատում ես սուրճն ու ծխախոտը: Ենթագիտակցորեն սիրում ես կատվիդ և միաժամանակ ատում նրան: Ու դա քեզ համար տարօրինակ չէ, քանի որ այդ ամենը կառավարում է ոչ թե քո գիտակցությունը, այլ ենթագիտակցությունը: Առօրյայում այս ամենը, իհարկե, այդքան էլ աչք ծակող չէ: Ոչ ոք այսպիսի բաների վրա ուշադրություն չի դարձնում, թե մի օր թեյ խմեցիր, հաջորդ օրը՝ սուրճ... այսօր ծխեցիր, իսկ երեկ ատում էիր ծխախոտը: Բոլորը տարված են իրենց գործերով, ու քանի դեռ չես մտնի իրենց տարածք, ոչ ոք դա չի էլ նկատի: Այդպիսի բաներ եղել են: Չորս անգամ դու մտել ես ուրիշների տարածքներ ու նրանց հասկացնել ես տվել, որ քեզ մոտ ինչ-որ բան այն չէ:

Առաջին՝ այն կապված է մայրիկիդ ծաղկամանը ջարդելու պատմության հետ, որը դու չես հիշում, սակայն չես էլ մտածում, որ դա մորդ կողմից է հորինված: Ինչպես կարող էիր ջարդել մորդ համար այդ թանկ նվերը: Որտեղից այդքան ագրեսիա քո մեջ: Ստացվում է, որ դու, իրոք, ջարդել ես ծաղկամանը: Վեճ է ծագել, դու ագրեսիվ ես եղել, զգացմունքներդ զսպել չես կարողացել ու բաբո՜ւմ... եթե դա Համոյից սպասելը անհավանական է, ապա իսկը Համլետի ոճում է:

Երկրորդ՝ խանութում տեղի ունեցած կոնֆլիկտը: Համոն, բնավորությամբ հանգիստ է, երբեք չի ծեծի նրան, ով իր հետ հրամայական տոնով կխոսի: Բայց Համլետը տաքարյուն է ու ագրեսիվ: Իհարկե քո մեջ  Համլետը ավելի քիչ է, քանի որ

տասը ձայնագրություններում նա միայն երևաց երեք անգամ: Հենց Համլետն է սարքել այդ իրարանցումը խանութում: Ու անհեթեթություն է դա, բայց Համլետի պատճառով է, այսինքն՝ քո, որ Համոն՝ այսինքն դու, դուրս մնաց աշխատանքից:

Երրորդ՝ Նարեի օրագիրը: Դե պարզ է, որ Քիթթին չէր կարող ամբողջ օրագիրը փչացնել: Դու կարդացել ես... կամ դու չէ, քո մեջ ապրող մյուսը կարդացել է օրագրում գրածները: Հատկապես այն տողերը, որտեղ պատանի աղջնակը այլ տղաների հանդեպ ունեցած իր սերն է նկարագրել, ինչը, ասեմ քեզ, շատ սովորական բան է, այն էլ այդ տարիքում: Քո ուղեղում առաջացել է խանդ, զայրույթ, պսեվդո-դավաճանված լինելու զգացում և, ագրեսիայի ազդեցության տակ ընկնելով, դու սկսել ես պատռել օրագիրը: Հնարավո՞ր է: Իհարկե, այո՛:

Չորրորդ՝ Վաչեի հետ կոնֆլիկտը: Իսկ սա պարզից էլ պարզ է: Դու ասում ես, որ կոնֆլիկտը սկսել է նրանից, որ թույլ չես տվել նրան քեզ դիմել Համ-ով, փոխարենը ասել ես, որ նա քեզ դիմի քո ամբողջական անունով: Դե բնական է, այդ պահին քո մեջ Համլետն է եղել: Դա նույնն է, եթե ինձ գային ու ասեին՝ Արտակ... Ես էլ կբարկանայի ու կասեի՝ ինձ ասա Վլադ: Նա ընկերական կատակներ է արել և չի ենթարկվել քո հրամանին: Այնպես, ինչպես ցանկացած այլ ընկեր կաներ: Դու դրանից նյարդայնանում ես, ու դարձյալ ագրեսիա... ու դարձյալ նույն ձեռագիրը: Համլետի մոտ ուժեղ ագրեսիայի դեպքում նկատվում է նաև դիսոցիացիվ-ընտրական ամնեզիա: Ինչն էլ բացատրում է

քո հիշողության կորուստները: Ի դեպ, այդ հատվածները չի հիշում քո մեջ բնավորություն ձևավորող անհատականություններից և ոչ մեկը: Դիսոցիացիվ-ընտրական ամնեզիայի դեպքում հիվանդը կորցնում է հիշողությունը կոնկրետ իրադարձության մասին: Ամնեզիայի այդ տեսակը շատ հաճախ առաջանում է հենց նույնականության դիսոցիացիվ խանգարվածության ժամանակ: Ինչն էլ, ի դեպ, քո հիվանդության անվանումն է:

Ես առաջարկում եմ մեկին մեկընդմիշտ վերացնել: Դա է իմ բուժման ճանապարհը: Եվ վերացնելու համար ընտրել եմ Համլետին: Քանի որ նա է այս ամենի պատճառը: Նրանից են բոլոր ագրեսիաները, նրա պատճառով են քո հիշողության կորուստները: Ասեմ ավելին, հիվանդությունը, որը քո մեջ կա, արդեն արմատավորվում է: Իններորդ ձայնագրության մեջ պարզ հասկացվում էր, որ արդեն ինքդ քեզ հետ ես խոսում, զրուցակցիդ դիմելով՝ Համ: Իսկ իններորդ ձայնագրության մեջ դու Համլետն էիր: Ձեր խոսակցությունը պարզ լսվում էր: (Ուժ ունեմ այլևս լսելու):

Մենք պետք է այս հիվանդության դեմն առնենք, քանի դեռ այն չի հաղթել քեզ: Ոչնչացնելով Համլետին՝ կոչնչացնենք այն, ինչ քո հիշողությանը խանգարում է, և որ ամենակարևորն է՝ կոչնչացնենք քո մեջ նույնականության դիսոցիացիվ խանգարվածություն առաջացնող անհատականությունը: Իսկ որքան այն լրջանա, այնքան բարդ կլինի նրանից ազատվելը: Գրքերում ու ֆիլմերում անձի երկատումը շատ գեղարվեստական և նույնիսկ ֆանտաստիկ է մատուցված: Շատ տեղերում

այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ անձի մեջ ապրող անհատականությունները բացարձակապես տարբեր են միմյանցից: Բայց դա այդպես չէ: Դու հիշում ես, որ ծխել ես, նույնիսկ երբ ասում ես, որ ատում ես ծխախոտը: Քնելիս խաչդ երևի կողքիդ ես տեղավորում, առավոտյան որոշում ես՝ կրել այն, թե ոչ: Եթե կրում ես, ուրեմն քո մեջ Համլետը չէ: Հասկանում ես ինձ: Օրինակ՝ քո մեջ եղած անհատականությունները սիրում են այն համակարգչային խաղը, որը խաղում ես ամեն օր... Անունը չեմ էլ հիշում (Call of duty, հրաշալի խաղ է, էլ չմոռանանք): Դուք երկուսդ էլ, օրինակ, ալկոհոլի նկատմամբ անտարբեր եք: Ձեր մեջ ընդհանրություններ էլ կան. տարբեր չեք: Իմ բուժման մեթոդը սա է: Ես քեզ արգելում եմ սուրճ ըմպել, արգելում եմ ծխել, արգելում եմ խաչդ վզիցդ հանել: Արգելում եմ նույնիսկ Քիթթիի հետ վատ վարվել: Եթե դու հետևես իմ ասածներին, գոնե մինչև իմ ապաքինվելը, ամեն ինչ լավ կընթանա: Երբ ագրեսիայի մեջ ընկնես, քեզնից պահանջում եմ, որ հիշես այդ պահը, ու բարձրաձայն կրկնես, թե ինչ ես անում, եթե հնարավորություն լինի, թղթի վրա գրի առ այդ պահը: Թող այս ինֆորմացիան ամրապնդվի քո ենթագիտակցության մեջ, և եթե ագրեսիայի մեջ լինես, վերհիշես իմ պահանջը ու բարձրաձայն կրկնես, թե ինչ ես անում: Փորձենք այդ ճանապարհով կանխել ամնեզիան: Բայց ունեմ վատ նորություն, դու նկարել էլ չես կարողանա: Քանի որ Համոն օժտված չէ այն տաղանդով, ինչով Համլետն է օժտված: Բայց հավատա, ամբողջ խնդիրը Համլետի մեջ է: Հասկանում եմ քեզ, այս ամենը, իրոք,

գծություն է: Բայց հիշի՛ր: Դու կդադարես գիժ լինել այն պահից, երբ սկսես քեզ գժի պես պահել: Հակառակորդին պետք է դիմավորել ճիշտ նույն դիմակով, որը նա կրում է, ճիշտ նույն զենքով, որը նրա ձեռքում է:

Ես գիտեմ, դու զգացմունքային ես եղել: Քեզ համար շան կորուստն էր անգամ ցավոտ: Չեմ կարող պատկերացնել, թե ինչ ես զգացել հայր կորցնելուց: Երևի ամբողջ պատճառը հենց դա էր: Դու սեռահասունացման տարիքում էիր: Հասունանում էր քո հոգեկան աշխարհը նույնպես, բայց դրա ձևավորման ամենակարևոր ժամանակահատվածում տեղի ունեցավ ամենացավալին՝ ծնողի կորուստ: Կարծես ծառ լինեիր, որին ամեն օր ջրում էին, ու բերք տալուց մի քանի շաբաթ առաջ կանգնեցրեցին ջրելը, բերքը, իհարկե, եղավ, բայց դա բոլորովին այն չէր, որին սպասում էին: Ամենածանր հարվածը հասունացման տարիքում տեղի ունեցածն է: Եթե տարիքով ավելի փոքր լինեիր, ցավդ այդքան էլ մեծ չէր լինի: Եթե մեծ լինեիր, այդ ամենին հասուն մարդու աչքերով կնայեիր: Բայց, ցավոք, դեպքը տեղի ունեցավ, երբ պատանի էիր, այն նման հոգեբանական խնդրի առջև քեզ կանգնեցրեց: Սակայն մի՛ վհատվիր, Համլետ, ամեն ինչ իր տեղը կընկնի, բարեբախտաբար քո գիտակցությունը նորմալ է: Դու չես կորել ժամանակի ու տարածության միջև, քեզ մոտ չկան տեսիլքներ, ամեն ինչ այդքան էլ չի խորացել դեռ: Շեշտում եմ՝ դեռ: (Ես լավ չեմ, գրողը տանի)...

Ինչու եմ ես կապում հիվանդությանդ ծագման պատճառը հորդ մահվան հետ: Դու պատմում ես քո

ձայնագրություններում, որ հայրդ մի անգամ, երբ ժողովից վերադառնում է, քեզ բավականին գովում է, քանի որ դու ուժեղ էիր մի շարք առարկաներից, հատկապես՝ գրականությունից: Իսկ հիմա ինձ ասա, թե ինչպես կարող է գրականությունից ուժեղ տղան կարդացող չլինել: Ինչպես պատմում ես քո վեցերորդ ձայնագրության մեջ, հայրդ քեզ միշտ կոնֆետներ էր տալիս: Փոքր տարիքում դու սիրում էիր կոնֆետներ: Շա՜տ էիր սիրում: Քաղցրի նկատմամբ սեր ունի միայն Համլետը, հիշում եմ ձայնագրությանդ մեջ, ո՞նց էիր պատմում Nutella շոկոլադը գնելու մասին: Հորդ մահվանից հետո այդ ամենը սկսեց ձևավորվել: Համլետը իրենից առանձնացրեց Համոյին ու սկսեց քեզ կառավարել:

Խնդրում եմ այս ընթացքում կողմնորոշվես: Հասկացիր ու պատրաստվիր Համլետին հրաժեշտ տալուն: Քանի որ նրանից ազատվելը կլինի միակ ճիշտ լուծումը: Եթե այդքան ուժ չգտնես ու որոշես հրաժարվել Համոյից, ես դարձյալ քեզ կօգնեմ, բայց դա բարդ կլինի: Եթե ուզում ես, իրոք, ազատվել ամեն ինչից ու ապրել նորմալ մարդկային կյանքով, ուրեմն պետք է փորձես հրաժեշտ տալ Համլետին: Դու երիտասարդ ես, քո կյանքը առջևում է: Մի օր քո մեջ ապրող անհատականությունները կսկսեն պատերազմել իրար դեմ, ու այդժամ կառաջանա գիտակցության խանգարման վտանգ: Մենք պետք է կանխենք դա, քանի դեռ կողմերից մեկը պատերազմ չի հայտարարել:

Այսքանն էի ուզում քեզ ասել, իմ բժիշկները շուտով կմոտենան ինձ, որպեսզի սկսեն վիրահատությունս: Սակայն մինչև հրաժեշտ տալը

կցանկանայի մի բան էլ ասել… (էսքանից հետո էլի մի բան… բա իհարկե)։

Կցանկանայի խոսել ևս մեկ բանի մասին, որը այդպես էլ չհասկացա։ Դու պատմում ես գիշերային արկածներիդ մասին, երբ հորդ ատրճանակն ես վերցնում ու ինքդ քեզ հետ ռուսական պտտախաղ խաղում… իսկ քո հաջորդ ձայնագրության մեջ չես հիշում դա, պատմում ես հորդ մասին, ասում ես, որ ատրճանակին չես դիպչել տարիներով… մինչդեռ մի քանի օր չէր անցել, ինչ դու այդ ատրճանակով փորձում էիր ինքնասպանություն գործել (չհասկացա)։ Դա արդեն նոր սիմպտոմ է։ Եթե հիմա դա չես հիշում, ապա, խնդրում եմ, գնա ու տես՝ արդյոք ատրճանակն իր տեղում է՝ մահճակալի տակ։ Բնականաբար, տեղում չէ, որովհետև ինքդ ասացիր, որ այն թողել ես գրադարակի մեջ։ Հա, ու, ի դեպ, զգույշ կլինես, մեջը մեկ փամփուշտ կա, այդպես էլ չհանեցիր միջից։ (Գրողը տանի, ինչ է խոսում այս բժիշկը)։

«Գոռում է ու մի կողմ է շպրտում ձայնասկավառակը ու նվագարկիչը» «ոտնաձայներ» «դուռն է բացում» «կատվի մլավոց»

– Դու դեռ ստեղ չես սատկե՞լ։

Ես կոպիտ եմ խոսում կատվիս հետ, ուրեմն ես հիմա  Համլետն եմ։ Հա-հա-հա՜։ «կատվի մլավոց»

– Ձայնդ կտրի՛ր, Քիթթի։ Գրողը տանի, իրոք որ ատրճանակը այստեղ չէ։ Ուրեմն ես այն դուրս էի հանել… բայց ինչու՝ չեմ հիշում… եթե դարձյալ հիշողության կորուստ էր, ուրեմն ես պետք է այս բանը այն ժամանակ էլ չհիշեի։ Սա երևի ինչ-որ նոր բան է։

«կատվի անդադար մլավոց»

– Քի՛թթի, լռի՛ր վերջապես: Երկու ժամ սենյակում փակեցի, զռռոցդ գցել ես, հաց ես ուզո՞ւմ:

«կատվի մլավոց»

– Գրողը տանի, ո՞նց է ազդում վրաս սրա մլավոցը...

«դարակն է բացում» Ահա՛ ատրճանակը...

«կատվի մլավոց», «գոռում է»

– Գրողը տանի, ձայնդ կտրի՛ր վերջապես:

«կատվի մլավոց», «կրակոց», «կատվի մռնչոց»

– Աստված իմ, այս ի՞նչ արեցի ես...

Քի՛թթի... Քի՛թթի... որքան արյուն է այստեղ... Ք՛իթթի, մլավի՛ր խնդրում եմ... Քիթթի

«դռան զանգ»

Գրողը տանի, կրակոցը երևի հարևաններն էլ լսեցին... Ես չեմ ուզում ամեն ինչ այսպես լինի... այս ի՞նչ մղձավանջ է...

«դռան զանգ»

Ես պետք է սա հիշեմ...

Իմ մոտ ագրեսիա է...

«դատարկ փամփուշտ», «դատարկ փամփուշտ», «դատարկ փամփուշտ»

Ես պետք է սա հիշեմ...

«հիստերիա»

«դռան զանգ»

«դատարկ փամփուշտ»

Ես կդադարեմ գիժ լինել, երբ սկսեմ ինձ պահել գժի պես...

«դատարկ փամփուշտ»... Ես մեռնել եմ ուզում...

Կամ էլ ուզում եմ սպանել քեզ, Համլե՛տ, դու ինձնից խլեցիր նրանց, ովքեր հարազատ էին ինձ ...ու շարունակում ես խլել: Ես ու Վլադ Սամվելովիչը կվերացնենք քեզ

Ես մեռնել չեմ ուզում... ես քեզ սպանել եմ ուզում... Իմ մեջ չի կարող մեկ ուրիշը լինել: «դռան ձանգ»

Ես այն եմ, ինչ կամ, իսկ ինչը չկամ, դա արդեն ես չեմ:

«դռան ձանգ» «հիստերիկ գոռոց» – Ինձ հանգիստ թողեք:

«շպրտում է հեռախոսը»

«ազդանշան»

# Բովանդակություն

Գլուխ 1 .................................................... 3
Գլուխ 2 .................................................... 12
Գլուխ 3 .................................................... 23
Գլուխ 4 .................................................... 38
Գլուխ 5 .................................................... 49
Գլուխ 6 .................................................... 61
Գլուխ 7 .................................................... 73
Գլուխ 8 .................................................... 83
Գլուխ 9 .................................................... 92
Գլուխ 10 .................................................. 102
Գլուխ 11 .................................................. 117
Գլուխ 12 .................................................. 123

Գրիգորյան Արտյոմ

# ԴԻՍՊԵՐՍԻԱ

Վիպակ

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Սուսաննա Մարտիրոսյան
Էջադրող՝ Արփինե Գուլյան

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374) 58 76 69
antares@antares.am
www.antares.am